



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

2254

241 88  
NH-25

EB 20011

hut

2010

10058

RP

241  
N<sub>H</sub>-25

# ՍԻՐՈՅ ԽՐԱՏՆԵՐ

ՏԱԶԿԱՍՏԱՆԻ

ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԿՆԻԿՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

"Պէտք է մեզի՞ ալ աւելի ուշադրութիւն տալ  
մեր լսած բաներուն, որ չըլլայ թէ երբէք  
պակսինք:" Եբր . Բ . 4 :

Ի Մ . Է . ՌԻԵՍԴԵ

معارف عموميہ نظارت جلیلہ سنک ۲۶ جاذی الآخر  
۳۰۳ مارت ۳۰۲ تاریخی و ۷۷ نمرولی رخصتامد سیله  
طبع اولنیشدر

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԵՒՄ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ա . ՅԱԿՈԲ ՊՕՅԱՋԵԱՆ

2012



## INTRODUCTION.

---

ALTHOUGH this book was written with special reference to those who have been for a season trained in our seminaries, yet it is hoped that it will be widely circulated and read by *all* the Christian women of Turkey, for whom the same counsels are designed, and who need the same aid in their endeavors to serve the Master. For this purpose we would here bespeak the co-operation of all pastors and teachers throughout the land, that by their agency this volume may be put into the hand of every woman who has learned to read the Word of God—praying that it may be the means, in the hands of God, of teaching many wives, mothers, and teachers more fully their duties, and making them more faithful in the discharge of them.

M. A. WEST.


35082-62



# КОДОУСОИТИ

reverent intercessions of the saints now living and those who  
in former times have given us their example. And today we find at our  
table the old father of the church and the new patriarch who  
will be forever united. And so you know how best to serve  
the church. One element of course will come in the  
order of service. And if this comes with heart and  
zeal, and if there are no greater evil, it will suffice.  
If you will receive this advice, the old patriarch will  
not give you any trouble. And if he does, then you  
will find him a true patriarch. And if he does not, then  
you will find him a saint. And if he does not, then  
you will find him a good man.

Page 42



## С. О. Т

Բայես աս գիրքը գրուեցաւ մեր Ճնմարաններուն մէջ ժամանակ  
մը կրթուողներուն համար՝ բայց կը յուսացուի որ պիտի տարա-  
ծուի բոլոր Տաճկատանի մէջ, և բոլոր քրիստոնեաց կիթկները  
պիտի կարդան, որ անոնց ալ կը յարմարին աս խրասները՝ և անոնց  
ալ օգնութեան կը կարօտին Տէրոջը ծառայելու պարտաւորութիւն-  
ներնուն մէջ։ Ա ասնորոյ կը հրաւիրենք աս Երկրիս մէջ գտնուած  
բոլոր հովհաններուն և քարոզիչներուն գործակցութիւնը, որ իրենց  
օգնութեանը աս գիրքը ամեն անոնց ձեռքը համնի՝ որոնք Ես-  
տուծոյ խօսքը կարդալ սորված են, ազօթելով որ ասիկա Ես-  
տուծոյ մեռքը գործիք մը ըլլայ, որ շատ անուպններ, մայրեր և  
ուսուցիչներ, իրենց պարտաւորութիւնները ալ աւելի սորվին, և  
հաւատարմութեամբ ի դորժ գեն։

Պ. Ե. Աւտե.



## Յ Ա Կ Ա :

Կամակ Տը ..... 9

Գլ. Ե .  
Զեր Առջւմն ու Պատասխանատուութիւններ . . . . . 11

Գլ. Ի .  
Զեր Պարտաւորութեանց Կատարումն . . . . . 16

Գլ. Գ .  
Ուրկէ սկսելու էք ձեր Գործը . . . . . 21

Գլ. Դ .  
Ընտանեկան Կարգադրութիւն . . . . . 26

Գլ. Ե .  
Զեր Պարտաւորութիւնները իբրեւ Եմուսին . . . . . 37

Գլ. Զ .  
Զեր Պարտաւորութիւնները իբրեւ Այցը . . . . . 47

Գլ. Է .  
Զեր Պարտաւորութիւնները իբրեւ Ընկեր . . . . . 64

## ԳԼ. Բ.

Ձեր Պարտաւորութիւնները իբրև Ուսուցիւ ..... 74

## ԳԼ. Թ.

Քրիստոնի Գործը Է՞նչ կը պարունակէ ..... 90

## ԳԼ. Ժ.

Քրիստոնի Գործը Է՞նչ կը պահանջէ ..... 109

## ԳԼ. Ժ.Ը.

Ես Պահանջմանքները 'ի գործ գնելու Միջացներ ..... 135

## ԳԼ. Ժ.Ը.

Ձեր Գործին Կարգադրութիւնը ..... 173

## ԳԼ. Ժ.Գ.

Ես Գործին Ուրախութիւնը և Աշոքը ..... 204

## ԳԼ. Ժ.Դ.

Ալլարանութիւն ..... 224



## Ն Ե Ս Ա Կ Ա Մ Բ :

## ՍԻՐԵԼԻ ԵՇԵՆԵՐՏԱԵՐՄ

Վառուած՝ որ իր ամենիմաստ նախախնամութեամբը ոշխարհի նայրերէն մեզ մէկտեղ բերաւ և ժամանակ մը վարժապետի և աշակերտի քաղցը առնչութիւնը մեզի վայելնել տուաւ, հիմա մեզ իրարմէ բաժնած է, ու շատ հաւանական է որ աս աշխարհիս վրայ աւ իրարու երես բնաւ պիտի չը տեսնանք։ Ես պատճառաւ մէծապէս կը փափաքիմ ձեզմէ ամեն մէկերնուդ սիրոյ նշան մը և յիշատակ մը ընծայել, որ ստէպ ձեր միտքը պիտի բերէ անցեալ տարիներուն մէջ վայելսծ կրթութիւննիդ, և օգնութիւն ըլլայ մեզի ձեր սորվածները հաւատարմութեամբ 'ի գործ գնելու,



Ուրեմն կը ինդրեմ որ աս փոքրիկ գիրքը ընդունիք իբրև ձեզի համար շարունակ ըրած աղօթքներում և ունեցած փափաքներուս մասնաւոր մէկ ապացոյցը։ Խնչպէս որ ըսի, հաւանական է որ սորէն չի պիտի տեսնանք մէկզմէկ աս աշխարհիս վրայ, բայց մէկ որ մը կուգայ երբ մէկտեղ պիտի կայինք մեր դատաւորին առջելը, և մերջն հաշխափ տանք։ Երանի թէ, չոն ուրախութեամբ հանգիպինք իրարու և ոչ թէ տրտութեամբ։ և թէ ամէն մէկերնիդ հասկերը հետերնիդ բերելով մէկտեղ ընծանք անպատճեն փառաւորեալ խնդութիւնով։

Այս մեծ օրը յիշելվ՝ կուղեմ մեր միտքը բերել քանի մը խօս-  
հաւրդաներ, որ գրգռեմ ձեզ աւելի չանք ընելու և մեր կոչումը ու  
ընտրութիւնը հաստատելու : “Քանզի այսպէս ձեզի առատօրէն  
պիսի նորհուի մեր Տէր և Փրկիւ Յիսուս Քրիստոսի յաւիտե-  
նական թագաւորութիւնը մտնելը :”

Ուստի կը խնդրեմ որ սիրով ընդունիք մեր վարժուհին առ  
սիրոց խրաները, և շատ անգամ կարուք ու ՚ի զործ զնէք:  
Տէրը եր օրնութիւնը նորհէ :

Եսանկ կ'ալօթէ մեր սիրելի վարժուհին,

Մ. Հ. ԱԽԵՍԴ



## ՍԻՐՈՅ ԽՐԱՑՆԵՐ

Տաճկաստանի Քրէպոնէայ Անէնէրն

### ԳԼ. Ը

ԶԵՐ ԿՈՉՈՒՄՆ ՈՒ ՊԵՏԵՍԻԵՆԵՏՈՒՈՒ-  
ԹՈՒՆՆԵՐԸ

Ինչպէս որ Պօղոս Առաքեալ  
Հռովմայեցւոց ըսաւ, նոյնպէս ալ  
ես ձեզի ամէնուդ կ'ըսեմ որ Տաճ-  
կաստանի մէջ էք, “Աստուծոյ սի-  
րելիներուդ, սուրբ ըլլալու կանչու-  
ածներուդ՝ շնորհիք և խաղաղու-  
թիւն ձեզի Աստուծմէ մեր Հօրմէն՝  
ու Տէր Յիսուս Քրիստոսէն :” Կան-

չուած էք սուրբ ըլլալու , այսինքն՝  
“ Աստուածային բնութեանը հա-  
ղորդ , ”\* ուրեմն Աստուծոյ որդիք  
ըլլալու կանչուած էք : Աս կոչումը  
ձեր անձնական սրբութեանը կրվե-  
րաբերի . ուստի աս սրբութիւնը  
անհրաժեշտ հարկաւորութիւն ու-  
նի ձեր կոչմանը իբրև գործաւորներ  
Քրիստոսի այգիին մէջ : Քանզի  
առանց ձեր փորձառութեանը ի՞նչ-  
պէս կրնաք կենաց ճամբան ուրիշ-  
ներուն սորվեցնել : Աս նպատակաւ  
էք , սիրելի աշակերտներս , որ Աս-  
տուած ձեզ կանչեց , և ատեն մը  
դաստիարակեց , որ սորվիք թէ  
ի՞նչպէս ծառայելու էք իրեն և փա-  
ռաւորելու էք զինքը : Եր դիտա-  
ւորութիւնն էր որ՝ Ճշմարտութեան  
գիտութիւնը ձեր ձեռքը կանթեղ  
մը ըլլայ խաւարի մէջ նստող շատե-


րուն կենաց ճամբան ցուցունելու :  
Եր ձրի շնորհքովը ընտրեց ձեզ ձեր  
ազգին հազարաւորներուն մէջէն ,  
և պատուական արտօնութիւններ  
պարգևեց , որոնք ուրիշները վայե-  
լած չեին . ասոր նայելով՝ ձեր պա-  
տասխանատուութիւնները խիստ  
մեծ են : “Քրիստոս կըսէ , “Որուն  
որ շատ տրուեցաւ շատ պիտի ու-  
զուի անկէ , և որուն որ աւելի յանձ-  
նուեցաւ՝ ալ աւելի պիտի պահան-  
ջուի անկէ : ” Չեր կոչումը անանկ  
կոչում մըն է , որ մինչև անգամ  
հրեշտակ մը կրնայ ցանկալ ձեռք  
ձգելու . և յիրաւի կանչուած էք  
Աստուծոյ հրեշտակներն ըլլալու աս  
աշխարհիս վրայ : Ո՞վ կրնար ցան-  
կալ ձեզի յանձնուած գործէն աւելի  
բարձր և պատուական գործի մը :  
Աս նոյն գործին համար էր որ մեր  
օրհնեալ Փրկիչը իր փառաց աթոռը

ձգեց, և աս խաւար ու մեղսալից  
աշխարհը եկաւ, կորսուածները  
փնտռելու և փրկելու: Ուրախ եղեք  
ուրեմն, սիրելիներս, ձեր փառաւոր  
կոչմանը համար. և հաւատարմու-  
թեամբ ջանք ըրէք որ շատ անմահ  
հոգիներ շահիք, որպէս զի Քրիս-  
տոսի թագը աւելի փայլի երկնից  
թագաւորութեանը մէջ. և երբոր  
դուք ալ ընդունուիք, երկնից թա-  
գաւորութեանը մէջ ալ աւելի փայ-  
լիք և ուրախ ըլլաք: Քանզի գի-  
տենք որ “Դմատունները երկնից  
հաստատութեանը լոյսին պէս, և  
անոնք որ շատերը արդարութեան  
կառաջնորդեն՝ աստղերուն պէս պի-  
տի փայլին յաւիտեանս յաւիտե-  
նից:”\*

Դուք Տաճկաստանի ամէն կող-  
մերը ցրուած էք, — Միջերկրա-

կան ծովուն՝ Մարմարայի՝ Աև ծո-  
վուն՝ Նվիրատ և Տիգրիս գետերուն  
եղերքները: Զեղմէ ոմանք շատոնց  
ելած են դպրոցէն, և ոմանք նոր.  
ձեղմէ ոմանք ուսուցիչ՝ և շատեր-  
նիդ ալ ամուսիններ ու մայրեր էք.  
շատերնիդ ալ հովիւններու և քարո-  
զիչներու ամուսիններ եղած էք:  
Թայլտուութիւն ըրէք որ հարցը-  
նեմ թէ՝ ձեր կոչման պարտաւորու-  
թիւնները մինչև հիմա կատարե՞ր  
էք, և կը կատարէ՞ք:





## ԳԼ. Բ

ԶԵՐ ՊԵՐՏԱԿՈՐՅՈՒԹՆԵՐԸ ԿԵՏԵՐՈՒՄԸ

Դիտեմ և ուրախ եմ որ ձեզմէ ոմանք ժրաջանութեամբ ձեր Տէրոջը գործը յառաջ կը տանին, բայց արդեօք ձեր կարողութեանը չափ կընէք: Խորհիմէ մէյմը, չկա՞յ հոգի մը որ կրնայիր անոր առաջնորդել ու չօրիր. չկա՞յ հիւանդ մը որուն հետ կրնայիր աղօթել ու երկնաւոր բժիշկին վրայ խօսիլ՝ բայց չօրիր. որբ մը կամ որբեարի մը չկա՞յ որնոր կրնայիր մխիթարել՝ բայց չը մխիթարեցիր. չկա՞յ մէկը որնոր կրնայիր համոզել որ Սուրբ Գիրք

կարդայ՝ կամ թէ որ կարդալ չէր զիտեր կրնայիր սորվեցընել ու չը-  
րիր: Եթէ մէկերնուգ պարտաւո-  
րութիւնն է առանկ գործել, ամէ-  
նուգ ալ պարտքը չէ: Ուրեմն ամէն  
մէկերնուգ կը հարցընեմ, Զեր կան-  
թեղը շտկուած ու վառած է. ձեր  
լոյսը կը փայլի: Միշտ անանկ կա-  
պրիք որպէս թէ Վատուծոյ ամենա-  
տես աչքը ձեր վրայ է: Ո՛չ կաղա-  
չեմ որ յիշէք, թէ ժամանակը կարձ  
է և կրնայ ըլլալ որ շուտ մը կան-  
չուիք հաշիւ տալու ձեր տաղանդ-  
ներուն՝ ժամանակին՝ զօրութեան-  
ցը՝ և ստացած զիտութիւններնուգ  
համար. ինչպէս որ Սուրբ Գիրքը  
կըսէ, “Զեռքդ ի՞նչ որ գտնէ ընե-  
լու, բոլոր ուժովդ ըթէ. քանզի ան-  
քու երթալու գերեզմանիդ մէջը՝  
գործք, խորհուրդ, զիտութիւն ու  
իմաստութիւն չկայ:” Զեր ուսու-




ցիչն աչքը ալ չի դիտեր ձեր ընթացքը, բայց ա՛ն անտեսանելի աշքը՝ ամէն ատեն ձեր բոնած ճամբուն վրայ տնկուած է, և կը դիտէ ձեր սրտին բոլոր փափաքները՝ խորհուրդները և զգացումները: Թա՞ղ աս խորհուրդը ձեզի ուրախալից և միսիթարական խորհուրդ մը ըլլայ: Թէ որ դուք ճշմարտապէս Քրիստոսի համար կ'ապրիք և կ'աշխատիք, Խնքը իր խոստմանը համեմատ միշտ ձեր հետն է, և դուք ալ կը խոստովանիք թէ՝ առանց անորբան մը չեք կրնար ընել:

Ա ախնալու պատճառ ունիմ, թէ ձեղմէ ոմանք աշխարհասէր են, և ձեր անձին համար կ'ապրիք ու չէ թէ Տէրոջը: Ուստի կը խնդրեմ որ քիչ մը կանգ առնեք, և ետ նայելով դպրոցը ձգելնէդ հետէ ձեր բո-

լոր լնթացքը դիտէք խղճմտանքով: Քանի մը հարցումներ ընեմ ձեզի օգնութիւն ըլլալու համար՝ աս հարցաքննութեանը մէջ: Ամէնէն աւելի ի՞նչ բաներ սիրած էք. նաև ի՞նչ բանէ շատ վախցած էք. ձեր ժամանակն ու խորհուրդները ի՞նչ բան շատ գրաւած է: Աս բաները պարզապէս պիտի ցուցունէ ձեզի ձեր սրտին վիճակը, և թէ որ ձեր սրտերը ձեզ կը մեղադրէ՝ ո՞րչափ աւելի Վստուած՝ որ ամէն բան գիտէ: Յիշեցէք, սիրելիներս, թէ չեք կրնար ազատիլ ձեր կոչմանը պատասխանատուութիւններէն:— Հազար անգամ աւելի աղէկ կ'ըլլար թէ որ Վստուծոյ սիրոյն անգին պարզեները ընդունած չըլլայիք քան թէ ընդունելնէդ ետքը զանոնք վատնէք ու անարգէք: Չեզի յանձնուած է անթիւ հոգիներու

Հոգեկոր առաջնորդութիւնը ու կրօթութիւնը, որոնց համար Քրիստոս մեռաւ: Սարսափեցէք և արթուն եղիք, որ անոնց արիւնը ձեր վրայ չը գտնուի, և վերջը դուք ալ չողբաք անոնց հետը ժամանակը անցնելէն ետքը՝ ըսելով, “Ճունձքի ատենը անցաւ, ամառը վերջացաւ, բայց մենք չը փրկուեցանք:”



## ԳԼ. Գ

ՈՒՐԿԱՇ ՍԿՍԵԼՈՒ ԷՔ ԶԵՐ ԳՈՐԾՔ:

Հատերը կը կարծեն թէ՝ միայն ժողովք ընելը տունէ տունպտըտիլը, ու Սուրբ Գիրք կարդալ և կարդալ սորվեցնելն է՝ Աստուծոյ համար գործելը: Նաև կը կարծեն ալ թէ Տէրոջը գործը տունէն դուրս պիտի տեսնուի, բայց աս բոլորովին սխալ դաղափար մըն է: Նախ և առաջ հարկ է Աստուծոյ ծառայել և փառաւորել զինքը ձեր տանը մէջ: Եթէ քու կանթեղիդ մէջ շնորհաց իւղէն կը գտնուի՝ հարկաւ քու տանդ մէջ

առաջ պիտի փայլի .—Պիտի փայլի  
քու խնդում երեսովդ՝ հանդարտ և  
սիրոյ խօսքերովդ՝ մեղմ ու հեղեկ  
շարժումներովդ՝ անձնական ու ըն-  
տանեկան մաքրութիւնովդ : Քու  
Աստուածպաշտութիւնդ մասնաւոր  
դէպքի մը համար ըլլալու չէ , ինչ-  
պէս որ պահեստի հանդերձներդ  
կիրակի և տօն օրեր կը հագնիս ,  
հապա՝ քու ամէն օրուան հասարակ  
հանդերձդ ըլլալու է , որով քու ըն-  
տանեկան գործերդ կ'ընես : Աստ-  
ուածպաշտութիւնը քեզ ընելու է  
քաղցր՝ մարդասէր՝ երկայնամիտ՝  
ներողամիտ՝ հեզ ու խոնարհ : Ծակ  
որ Աստուած քու մէջդ բնակած ըլ-  
լայ Սուրբ Գրքին ըսածին պէս , քու  
սիրտդ սիրով պիտի լեցուի . քանզի  
Աստուած սէր է : “Դուն՝ Հաւա-  
տացեալներուն օրինակ պիտի ըլլաս,  
խօսքով՝ վարմունքով՝ սիրով՝ հա

ւատքով և մաքրութեամբ” : \* Քու  
վարմունքդ շարունակ քարոզ մը  
պիտի ըլլայ բոլորտիքդ եղողներուն ,  
ուր որ խօսքերդ միայն քիչ մը աղ-  
դեցութիւն պիտի ընեն : Քու բա-  
րեպաշտութիւնդ պիտի ներգործէ  
բոլոր քու առնչութիւններուդ մէջ ,  
իբրև զաւակ՝ քոյր՝ ամուսին՝ մայր՝  
բարեկամ և դրացի : Որպէս զի  
անոնք՝ որոնք քու հետդ կը բնակին ,  
տեսնեն ու խոստովանին թէ դուն  
ուրիշներէն տարբեր մէկն ես :  
Իբրև զաւակ՝ պիտի պատուես քու  
ծնողքդ , մանաւանդ թէ որ ծերա-  
ցած ու տկար են . քու մանկու-  
թեանդ ժամանակը քեզի համար  
իրենց կրած բոլոր նեղութիւննե-  
րուն ամէն կերպով հատուցում ընել  
պիտի ուզես , և իրենց վերջին օրերը  
հանգիստ և երջանիկ ընել պիտի

աշխատիս : Խնչպէս որ Սուրբ Գիրքը կ'ըսէ, “ Թէ որ մէկը ունենայ զաւակներ կամ թոռներ , թող անոնք առաջ սորվին իրենց տանը մէջ որդիական գութ ցուցունել , ու փոխարէն հատուցանել իրենց ծնողացը . ինչու որ ան է ընդունելի Եստուծոյ առջևը : ” Երբեք քոյր՝ քու եղբայրներուդ ու քոյրերուդ ամէնաբարձր երջանկութիւնը և օգուտը պիտի փնտուես , զանոնք քեզմէ աւելի պատուելով : Պիտի փափաքիս առաջնորդել անոնց քու օրինակովդ և խօսքերովդ : Հաւատարիմ և բարեպաշտ քոյր մը՝ ընտանեացը մէջ զօրաւոր և մնայուն ազգեցութիւն կրնայ ունենալ իր քոյրերուն ու եղբայրներուն վրայ : Երբեք ամուսին հնազանդ և սիրով ըլլալու ես , չէ թէ միայն մարմնաւոր ընկերայլ նաև հոգեւոր : Երբեք

մայր՝ քու գործդ ու պատասխանաւուութիւններդ շատ ծանր են , և պէտք է ջանաս կատարել Եստուծոյ վախովը : Երբեք բարեկամ և դրացի՝ պիտի աշխատիս բարիք ընել ամէնուն , անոնց մարմնաւոր ու հոգեւոր պիտոյքը հոգալով : Բայց աս առնչութիւններուն վրայով զատ զատ աւելի ընդարձակ պիտի խօսիմ ուրիշ տեղ մը :





## ԳԼ. Դ

ԸՆՏԱՆԵԱԾՆ ԿԵՐԳԵԿ-ՐԱՒԹ-ՌԱՒ

Ծատ անգամ լսած էք թէ՝ ա-  
ղէկ կարգադրուած քրիստոնեայ  
տուն մը փոքր երկինք մըն է աս աշ-  
խարհիս վրայ : Արդ տեսնանք թէ՝  
ինչպէս կը կարգադրուի ատանկ  
տուն մը : Աստուած անանկ սահմա-  
նած է որ հայրն ու մայրը ընտանեաց  
միացեալ գլուխներն ըլլան . անոնց  
ձեռքը յանձնուած է ընտանեկան  
կառավարութիւնը և կարգադրու-  
թիւնները, ու երբէք ուրիշ մը չփ-  
կրնար անոնց տեղը բռնել : Հայրը՝  
իր օրական գործերուն պատճառաւ  
հարկաւ շատ անգամ հեռու է տու-

նէն, ու հետևապէս աս գործին մեծ  
մասը մօրը վրայ կը մնայ. ուրեմն ըն-  
տանեաց յաջողութիւնը և երջան-  
կութիւնը մեծաւ մասամբ իրմէ կա-  
խում ունի : Աս պատճառաւ քեզի  
քանի մը կանոն կուտամ, որպէս զի  
առաջնորդեն քեզ, քու տունդ եր-  
ջանիկ ընելու աշխատանքիդ մէջ :

Նախ և առաջ կանոն ըրէ՛ քեզի  
ամէն գործ սկսելէն առաջ, Աստուծոյ  
օրհնութիւնը խնդրել, և ան իմաս-  
տութիւնը՝ որ կարող է քեզ առաջ-  
նորդել քու բոլոր դիտաւորութիւն-  
ներուդ և աշխատանքներուդ մէջ :

Յետոյ ջանք ըրէ՛ որ դուն քեզ  
մոռնաս . քու անձնական հան-  
գիստդ և զուարձութիւնդ ձգէ՛, որ  
ամէն բանի մէջ ուրիշները երջանիկ  
ընես : Ամէն օր պիտի հանդիպիս  
շատ փորձութիւններու՝ հոգերու՝  
նեղութիւններու, որոնք պիտի վըր-

դովեն քու միտքդ , և հոգիդ պիտի  
նեղեն : Ուրեմն աս ալ կանոն ըրէ  
քեզի , Ամէն օր Կստուծմով սկսիլ :  
Եշխատէ՛ որ անկողինէդ ելելուդ  
պէս գոնէ քանի մը րոպէ առանձ-  
նանաս քու երկնաւոր Հօրդ հետ ,  
և շնորհակալութեամբ Կստուծոյ  
օրհնութիւնը՝ զօրութիւնը և ա-  
ռաջնորդութիւնը խնդրէ նոր օրու-  
ան գործերը և հոգերը կատարելու  
համար : Յետոյ գնա քու գործիդ  
ուրախ սրտով , հոգերդ անոր վրայ  
ձգելով՝ որ քեզի համար կը հոգայ :  
Ինչպէս որ Ըռաքեալն ալ կըսէ ,  
“ Բանի մը համար հոգ մի՛ ընէք .  
հապա ամէն բանի մէջ ազօթքով ու  
աղաչանքով , գոհութիւնով մէկտեղ  
ձեր խնդրուածքը Կստուծոյ յայտնի  
ըլլայ : Եւ Կստուծոյ խաղաղու-  
թիւնը որ ամէն միտքէ վեր է , ձեր  
սիրտերը ու միտքերը Քրիստոս

Յիսուսով պիտի պահպանէ : ” \*  
Կշոէ՛ քու ժամանակդ ու գործդ ,  
որպէսզի ամէն բան վայելչութեամբ  
ու կարգաւ ըլլայ : Գանք ըրէ որ  
ամէն օրուան գործը նոյն օրուանը  
մէջ տեսնուի , և վաղուան չը ձգուի :  
Քու տանդ մէջ ամէնուն կանոն  
թող ըլլայ աս առածը , “ Ամէն բանի  
յատուկ տեղ մը , և ամէն բան իր  
յատուկ տեղը . ամէն գործի յա-  
տուկ ժամանակ մը , և ամէն գործ  
իր յատուկ ժամանակին : ” Մինչեւ  
անգամ պղտիկները թող սորվին աս  
առածը և ’ի գործ դնեն : Ուրիշ  
առած մըն ալ միտքդ կը ձգեմ . “ Բո-  
պէները հոգայ , ու ժամերը ինք-  
ղինքնին պիտի հոգան : ” Քու ձեռ-  
քերդ բնաւ ծոյլ թող չը կենան ,  
քանզի սատանան ծոյլ ձեռքերուն  
շատ շար գործ կը գտնայ : Թեթև

գործ մը միշտ քովդ պատրաստ ու-  
նեցիր . օրինակի համար՝ գուլպայ  
հիւսել , կար կամ կարկտան ընել  
և այլն , որպէսզի պարապ մնացած  
ժամանակդ , կամ բարեկամաց հետ  
տեսութիւն ըթած ատենդ , և ա-  
սանկ պարագաներու տակ գործես ,  
պարապ չը մնաս . որ չը կատարուի  
քու վրադ Պօղոս առաքեալին ան  
խօսքը , թէ “Ծոյլ ըլլալ կը սորվին ,  
տունէ տուն պարտողներ . և ո՛չ  
միայն ծոյլ , հապա շատախօսներ ,  
ու հետաքրքիրներ . և անպատեհ  
բաներ կը խօսին :” Առաքինի և հա-  
մեստ կնկան մը բուն տեղը իր տունն  
է , և ո՛չ թէ պատուհանները և  
գոները վազել նոր բաներ տեսնալու  
և զննելու համար , կամ թէ տունէ  
տուն պտըտիլ՝ հարցուփորձ ընելու ,  
նոր լուրեր լսելու , և ուրիշն գոր-  
ծին խառնուելու : Սուրբ Գիրքը կը-

սէ , նորահասակ կնիկները ըլլան՝  
“Երիկնին սիրող , զաւակնին սի-  
րող , խոհեմ , ողջախոհ , տնաշէն ,  
բարեգործ , իրենց էրիկներուն հնա-  
զանդ , որ չըլլայ թէ Վստուծոյ խօս-  
քը հայհոյուի :” “Մէկու մը հայհո-  
յութիւն չընել , կոուարար չըլլալ .  
հապա հեղահոգի , ամէն մարդոց  
բոլորովին քաղցրութիւն ցուցու-  
նել :”

Վնանկ սեպէ , թէ Յիսուս միշտ  
քու տանդ մէջ անտեսանելի հիւր  
մըն է , և իրեն հաճելի ըլլալու աշ-  
խատէ , մինչև անգամ ամէնափոքք  
բաներու մէջ : Ինչպէս որ Սուրբ  
Գիրքը կըսէ , “Երդ թէ ուտէք՝ թէ  
խմէք՝ և թէ ինչ գործ որ ընէք , ա-  
մէն բան Վստուծոյ փառքին համար  
ըրէք :” Վսանկ ընելով պիտի պա-  
տուես Օխնքը , և իր օրհնութիւնը

պիտի հանգչի քու ընտանեացդ վրայ: Քանի որ քու ձեռքերդ գործով զբաղած է՝ քու սիրտդ դէպի երկինքը պիտի բարձրացընես, և բերնովդ ստէպ ստէպ Սիօնի երգերը պիտի երգես: Եստուծոյ վախը քու տանդ հէք պիտի ըլլայ: և Սողոմոն կրսէ թէ, “Զարութիւնը ատելն է Եստուծոյ վախը:” Եթէ քու տունդ ասանկ տուն մը ըլլայ, անձնասիրութեան տեղ՝ Եստուծոյ սէրը, և կռիւի ու խոռովութեան տեղ՝ խաղաղութիւն պիտի տիրէ: Եմէն առտու և իրիկուն ընտանիքդ պիտի ժողվուի շնորհաց աթոռին առջեր, ձեր երկնաւոր հայրը պաշտելու, ու իր Սուրբ խօսքերը կարդալու, և ձեր փառաբանութեան երգերն անոր ականջներուն քաղցր պիտի գայ:

Ես բոլոր բաներուն վրայ մասնաւորապէս կը յորդորեմ ձեզ, որ շաբթուան բոլոր օրերուն մէջ ամէնէն փափաքելի օրերնիդ ըլլայ Կիրակի օրը. սուրբ պահէք՝ ու պատուէք զանիկայ: Շաբաթ օրը պատրաստութեան օր մը թող ըլլայ քեզի և քու զաւակներուդ, չէ թէ միայն կերակուրի և հագուստի ու տուն մաքրելու, (որոնք անհրաժեշտ հարկաւոր են Կիրակի օրը վայելչութեամբ և պատիւով Տէրոջը առջեր երևնալու,) այլ նաև Կիրակի օրուան շնորհքները վայելելու համար հոգեւոր պատրաստութիւն ալ տես: Շաբթուան մէջ անանկ կարգադրէ գործերդ՝ որ շաբաթ օրը չափազանց չը յոզնիս, ու հետեւապէս Կիրակի օրը քնհատ ու ծանր չըլլաս: Շաբաթ իրիկուն քու զաւակներդ լուալէդ ու կանուխ անկո.

զին դնելէդ վերջը՝ քեզի համար անձնաքննութեան ժամանակ մը գտիր, ու հանդարտ նստելով՝ անցեալ շաբթուան բոնած ընթացքիդ վրայ խորհչէ : Խնչպէս անցուցիր ամէն մէկ օրը, պակսութիւններդ՝ թերութիւններդ՝ անկատարութիւններդ յիշէ, որ Տէրոջմէն ներում խնդրես, և որ գալիքին մէջ աւելի յառաջ երթաս, արթուն ու ժրաջան ըլլաս : Կիրակի առտուն արելք քեզ պառկած չը տեսնէ, այլ ուրախ սրտով բարեկ իր գալուստը : Գանք ըրէ որ աս օրը քու զաւակներուդ ամենաերջանիկ օր մը ընես : Աւրախացուր զանոնք՝ մինչև անզամ ամենաափոքրները, Սուրբ Վրքէն պատմութիւններ ընելով, Եստուծոյ և իրենց անմահ հոգիներուն ու երկինքին վրայով իրենց պէս պարզ խօսելով . երգէ անոնց հետ, և ա-

զօթէ անանկ բառեր գործածելով՝ որ իրենց փափուկ մտքերը կրնան ըմբռնել : Երբոր ժողովատեղիէն կը դառնան, շատ օգտակար է որ ծնողք հարցուփորձ ընեն տղայոց, լսածներնուն վրայով, որպէսզի պարապ տեղը գացած չըլլան : Թող Կիրակի օրը ձեր խորհրդածութեան նիւթը ըլլայ աս խոստմունքը, “թէ որ շաբաթը՝ իմ սուրբ օրս՝ քու ցանկութիւնդ կատարելէն ոտքդ դարձընես, ու շաբաթը՝ քու զուարձութիւնդ, ու Տէրոջը նուիրուած օրը՝ պատուական անուանես, ու զանիկայ պատուես, քու ձամբաներուդ չը հետեւելով, քու ցանկութիւնդ չը կատարելով, ու պարապ խօսք չը խօսելով : Են ատենը Տէրոջմով պիտի ուրախանաս ու քեզ երկրիս բարձր տեղուանքը պիտի հանեմ :” Ով որ սուրբ օրը ասանկ

կը պահէ, և կը պատուէ, անշուշտ  
Ըստուծոյ օրհնութիւնը իր վրայ  
պիտի գայ բոլոր շաբթուան մէջ, և  
յաջողութիւն ալ պիտի գտնէ իր  
ամէն գործերուն մէջ, ինչպէս որ  
շատերը փորձեր են : Քանզի Տէրը  
կրսէ, “Երանի ան մարդուն որ ա-  
սիկայ կ'ընէ, ու մարդու որդիին՝ որ  
ասիկայ ամուր կը բռնէ, այսինքն  
շաբաթը կը պահէ, ու զանիկայ չի  
պղծեր, և ամէն անիրաւութիւն  
ընելէն իր ոտքը ետ կը պահէ : ”\*

\* Եռ. չէ. 2.



## ԳԼ. Ե

ԶԵՐ ՊԵՐՏԵՒՈՒԹԻՒՆԵՐԻ ԴՐՅԵԿ  
ԵՄՈՒՄԻԿԻ

Դբրե ամուսին՝ յատուկ պար-  
տաւորութիւններ ունիս գէպի քու  
էրիկդ : Ինչպէս որ առաջ ըսի,  
պէտք է որ չէ թէ միայն օգնական  
ու ընկեր ըլլաս իրեն իր աշխարհա-  
յին ու մարմնաւոր գործերուն մէջ,  
այլ նաև պէտք է որ օգնես և ընկե-  
րանաս իրեն իր հոգեւոր գործերուն  
մէջն ալ կարեկից ըլլալու ես իր բո-  
լոր հոգերուն ու նեղութիւններուն,  
և իր ամէն տրտմութիւններուն և  
ուրախութիւններուն մասնակից :

Եթէ քարոզիչ կամ հովիւ ըլլայ քու  
ընկերդ՝ որչափ շատ կրնաս օգնել  
իրեն, և քաջալերել զինքը իր օրհ-  
նեալ գործին մէջ։ Զեր ընտանե-  
կան վարմունքը՝ կարգադրութիւնը՝  
զաւակաց դաստիարակութիւնը իր  
ժողովուրդին վրայ զօրաւոր ներ-  
գործութիւն պիտի ունենայ։ Իր  
հոգերը կրնաս թեթևցընել՝ խոհե-  
մութեամբ ընտանիքը կառավարե-  
լովիդ, խնայութեամբ հոգ տանելով՝  
որ ընտանեկան ծախքերը կարելի  
եղածին չափքիչ ըլլայ։ Զեր ստաց-  
ուածքը զգուշութեամբ պահեցէք  
և գործածեցէք որ դիմանայ, և ձեր  
զաւակներուն ալ ասանկ սորվեցու-  
ցէք։

Երբոր ամուսինդ իր գործէն  
տունկը դառնայ յոգնած կամ տրտ-  
մած, դիմաւորէ զանիկայ զուարթ-

դէմքով և ուրախ սրտով ձեր մա-  
քուր և հանդարտիկ տունը։ Դանք  
ըրէ որ մոռնաս քու հոգերդ և նե-  
ղութիւններդ ու ցաւերդ ալ եթէ  
տկար ըլլաս, իր սիրտը ուրախացը-  
նելու և իրեն հանգստութիւն և  
մխիթարութիւն տալու համար բուն  
իր տանը մէջ։ Վու քրիստոնէա-  
կան օրինակդ՝ համբերութիւնդ և  
հեղութիւնդ օգնութիւն պիտի ըլ-  
լայ քու էրկանդ։ Քու կարեկցու-  
թիւնդ՝ բարեպաշտ խրատներդ և  
աղօթքներդ մեծապէս պիտի զօ-  
րացընեն անոր ձեռքերը և պիտի  
քաջալերեն իր սիրտը։ Եւ ինքը  
պիտի օրհնէ զԱստուած որ իրեն  
անանկ ընկեր մը և օգնական մը  
տուաւ։ Երջանիկ է ան մարդը որ  
ասանկ կնիկ մը ունի. և երանելի է  
ան կնիկն ալ. “Ենոր տղաքը կ'ել-  
լեն, ու զանիկայ երանելի կ'անուա-

նեն . Ասոր էրիկն ալ զանիկայ կը  
գովի , ըսելով , Շատ աղջիկներ ա-  
ռաքինի եղան . բայց դուն ամէնէն  
գերազանց եղար . ”\* :

Զանազան երկիրներու մէջ ճամ-  
քորդութիւն ընողները կը խոստո-  
վանին թէ՝ աս աշխարհիս մէջ ընդ-  
հանրապէս իրենց էրիկներուն սի-  
րով հնազանդող՝ և զանոնք պա-  
տուող կնիկները՝ կրթուած և քրիս-  
տոնեայ կնիկներն են . և ընդհակա-  
ռակն , իրենց էրիկներուն դէմ դնող  
և անոնց կամքը անարգող կնիկնե-  
րը կոպիտ՝ անկիրթ և անզգամ  
կնիկներն են : Երբեմն կան անանկ  
կէս լուսաւորուած անձինք՝ որոնք  
կը կարծեն թէ էրիկնուն չըհնա-  
զանդելը աւածրանկայ է , բայց դուք  
ձեր օրինակովը ցուցուցէք , թէ չէ  
թէ աւածրանկայ է՝ այլ աւածրանկայ է ,

\* Առաջ . լա . 28 , 29 :

քանզի սատանան ամէն ազգի կնիկ-  
ներուն մէջ ալ կը գործէ , ինչպէս  
նաև էրիկներուն : Բայց դուք փրն-  
տուեցէք թէ ի՞նչ է Տէրոջը հաճե-  
լին , և կցորդ մի՛ ըլլաք խաւարին  
անպտուղ գործքերուն , այլ մանա-  
ւանդ զանոնք յանդիմանեցէք :

Սուրբ գիրքը կը սորվեցընէ մեզի  
թէ՝ պէտք է որ “ Կնիկները իրենց  
էրիկներուն հնազանդ ըլլան՝ որպէս  
թէ Տէրոջը : Ինչու որ էրիկը կըն-  
կանը գլուխն է , ինչպէս որ Քրիս-  
տոս ալ եկեղեցին ” : Ասոր համար  
կ'ըսէ Ըռաքեալը , “ Կնիկ մարդը  
թող սորվի լուութեամք ամէն հը-  
նազանդութիւնով : Բայց կնիկ  
մարդու հրաման չեմ տար սորվե-  
ցընելու , ո՛չ ալ էրիկ մարդուն իշ-  
խելու , հազարու կենալու : ”

Յիրաւի կան քրիստոնեայ կնիկ-ներ որ անգութ և անզգամ էրիկ ունին , որոնք պատուելու դժուար է . թէ որ ասանկ էրիկ մը պատահի ձեղմէ մէկերնուղ , կը յորդորեմ ձեղ՝ որ աս բանին մէջ ալ ձեր համբերութեամբը և հեղութեամբը զԱստուած փառաւորէք , և իրենց համար աղօթք ընէք որ Տէրոջը շնորհքովը իրենց չար կիրքերուն յաղթեն . յիշելով Պետրոս առաքեալին խօսքը , “ Նմանապէս կնիկները հնազանդ ըլլան իրենց էրիկներուն . որ եթէ ոմանք խօսքին հնազանդ չըլլան ալ առանց խօսքի շահուին՝ կնիկներուն վարմունքովը , տեսնելով ձեր երկիւղած պարկեշտ վարքը : ” “ Զըլլայ որ չարութեան փոխարէնը՝ չարութիւն հատուցանէք , կամ նախատանաց փոխարէն՝ նախատինք , այլ ընդհակառակն օրհնեցէք , գիտնա-

լով որ աս բանիս համար կանչուեցաք , որ օրհնութիւն ժառանգէք : ” “ Ա ան զի Բնէ գովութիւն կը լայ ձեզի , թէ որ մեղք գործելով ծեծուիք՝ ու համբերէք . հապա թէ որ բարիք գործելով չարչարուիք՝ ու համբերէք , ասիկայ Նստուծոյ քովը շնորհք մըն է : ”

Նստուած սահմաներ է որ մէկ մարմին ըլլաք , բայց թէ որ կ'ուզէք երջանիկ կեանք վայելել ու բարի օրեր տեսնել՝ հոգիով մէկ ըլլալու էք : Ասոր համար կը յուսամ թէ ամէն իրիկուն մէկտեղ առանձին աղօթք պիտի ընէք : Թէ որ դուք մէկտեղ տանիք ձեր հոգերուն բեռները Վրիստոսի ոտքերուն առջեւը , և անցեալ ողորմութեանց համար շնորհակալութիւն մատուցանէք՝ մէծ միջոց մը պիտի ըլլայ ձեղ սիրով միացընելու և Վրիստոսով մէկ

ընելու : Եթէ երբէք իրարմէ ցաւ-  
ցած էք՝ ամէնայարմար ժամանակ  
է աս հաշտուելու . և թախանձա-  
նօք կը յորդորեմ ձեզ որ իրարու  
պակսութիւն անմիջապէս ներէք ,  
և բնաւ մէկ րոպէ մը անհաշտ  
չը մնաք : Երբոր քու էրիկդ տունէն  
հեռացած է , շատ անգամ քու վրադ  
կ'իյնայ ընտանեկան աղօթքը ընելը .  
կը խնդրեմ որ աս պարտաւորու-  
թիւնը բնաւ զանց չընես , թէ՛ քու  
յառաջադիմութեանդ համար և թէ՛  
քու զաւակներուդ : Արնայ ըլլալ որ՝  
երբեմն քու էրիկդ սրտով պաղի , և  
իրեն դժուար գայ անձնուրացու-  
թիւն ընել և նեղութիւններու համ-  
բերել , “Յիսուս Քրիստոսի բարի  
զինորի մը պէս :”\* Ասանկ պարա-  
գայի մը տակ աւելի հոգ տար քու  
հոգեւոր վեճակիդ : Արդդա շատ

\* Բ. ՏՒ. Բ. 3:

անգամ կենաց գիրքը իրեն հետ , և  
աղօթէ որ Սուրբ Հոգին ձեզի հաս-  
կըցընէ անոր միտքը : Աստուծոյ  
օգնութեամբը աշխատէ որ քու  
անձդ ուրանաս , և ամէն օր խաչդ  
վերցընելով Քրիստոսի ետևէն եր-  
թաս : Ան ատենը պատրաստ ու  
յանձնառու պիտի ըլլաս երթալ՝  
ուր որ Աստուծած իր նախախնամու-  
թեամբը քու էրիկդ կը կանչէ : Աս  
պիտի գիւրացընէ իրեն իր պար-  
տաւորութիւնը , պիտի փառաւորէ  
զԱստուծած , և ամէնը պիտի տես-  
նան Աստուծոյ կամքը փնտող  
Ճշմարիտ քրիստոնեայ կնկան մը՝ և  
միայն իր կամքին հետևող կնկան  
մը՝ տարբերութիւնը : “Հիմա քեզի  
հետ երթալու պատրաստ եմ մինչեւ  
՚ի մահ” ըսաւ քարոզիչի մը կնիկը ,  
“Քրիստոս մեզի համար երկինքը  
ձգեց և իր արիւնը թափեց , և մենք

մեր արիւնը իր արիւնէն պատուական սեպելու ենք : ” “ Դնքը շատ օգնութիւն կընէ ինծի ” ըստ իր էրիկը խնդում երեսով մը , “ առաջ ես կը վախնայի որ ինծի շատ նեղութիւն պիտի տայ տեղէ տեղ երթալնուս համար , բայց հիմա իր հոգեւորութեամբը իմ ձեռքերս կը զօրացընէ : ”

Եսկէ յայտնի է թէ՝ կնիկ մը մեծ արգելք մը՝ և կամ օգնութիւն մը կրնայ ըլլալ Տէրոջը գործին մէջ : Բայց ո՞րչափ քաղցր ու պատուական բան մըն է , որ ամէն ատեն իրարու գործակից ըլլան և օգնեն : Ասանկներուն երջանկութիւնը և ուրախութիւնը ո՞վ կրնայ պատմել . և անոնց փառքը ո՞րչափ շատ պիտի ըլլայ երկինքին մէջ , քանզի “ թէ որ համբերենք՝ իրեն հետ պիտի թագաւորենք : ”



## ԳԼ. Զ.

ՁԵՐ ՊԵՐՏՎԻՈՐՈՒԹԻՒՆԵՐԻ ԴԵՐԵՒ  
ՄԵՅՐ

Ես աշխարհիս մէջ հաւատարիմ և քրիստոնեայ մօր մը գործէն աւելի մեծ ու պատուական գործ մը չկայ . քանզի գրեթէ բոլորովին իրենց յանձնուած է զաւակներուն պուածին կրթութիւնները՝ քանի որ դեռ մանուկ են : Ես գործը ամենայն յաջողութեամբ ’ի գործ դնելու համար՝ խիստ հարկաւոր է որ հայրն ու մայրը մէկ մտքի վրայ ըլլան . բայց մեծ մասամբ մօրմէն կախում ունի : Կանի որ Աստուած

աս գործը քու ձեռքդ յանձներ է ,  
չես կրնար ուրիշի մը վրայ ձգել :  
Մեծ հայր մը՝ կամ մեծ մայր մը  
բնաւ չեն կրնար քու տեղդ բռնել ,  
և աս մասին քու պարտաւորու-  
թիւններդ կատարել : Կը խնդրեմ  
որ քու խղճմտանքդ չըհանդարտե-  
ցընես' ըսելով , “իր մեծ հայրը՝ կամ  
մեծ մայրը չի թողուր որ զաւակս  
հնազանդեցընեմ : ” Յիշաւի քու  
ծնողքդ պատուելու ես , բայց աս  
բանին մէջ աւելի բարձր պարտաւո-  
րութիւն մը ունիս . դուն՝ և անոնց  
հայրը Աստուծոյ պատասխանա-  
տու էք ձեր զաւակներուն համար ,  
և ոչ թէ մեծ հայրը կամ մեծ մայ-  
րը : Ուստի կը յորդորեմ քեզ որ  
հաստատուն կենաս , և զաւակներդ  
քու ձեռքիդ տակը կրթես . միայն  
Աստուծմէ վախցիր աս բանին  
նկատմամբ , և ո՛չ թէ որեիցէ մէկէ

մը : Աիրելի բան մըն է որ թոռները  
իրենց մեծ հօրը և մեծ մօրը հետ  
սերտ կապակցութիւն ունենան ,  
բայց պէտք է որ գիտնան թէ աս  
աշխարհիս մէջ ամէնէն աւելի իրենց  
ծնողացը հնազանդելու են : Աս ալ  
յիշելու է որ երբ հայրը կամ մայրը  
զաւակը կը պատժէ՝ միւսը զթասրո-  
տութեամբ խառնուելու չէ , քանզի  
ասանկ ընելով՝ տղան գլխէ կ'ելայ .  
պէտք է որ ինքը հասկնայ թէ հայրն  
ու մայրը հաւասարապէս միաբան  
են աս գործին մէջ :

Իայց ինչպէս որ ըսի , հայրը շատ  
անգամ տուննէն հեռու ըլլալով՝ ա-  
ւելի քու պարտքդ կը մնայ զաւակ-  
ներուդ վարժութիւնը : Երենց բա-  
րութիւնը և երջանկութիւնը , գէ-  
շութիւնն ու թշուառութիւնը մե-  
ծաւ մասամբ քեզմէ կախում ունի :  
Դուն կրնաս պատճառել իրենց հո-

գիներուն կորուստը , անանկ որ յաւիտեանս ողբան ու անիծեն իրենց ծնած օրը . կամ՝ կրնաս իրենց վրոկութեանը միջոցն ըլլալ , որ յաւիտեանս օրհնեն զԱստուած ասանկ մայր մը իրենց պարգևելուն համար : Չէ թէ միայն պատասխանատու ես իրենց քնաւորութեանցը համար՝ այլ նաև անոնց գործին և աշխարհիս մէջ ունեցած ազդեցութիւններուն համար ալ : Եթէ գուն այսպէս հաւատարիմ՝ ազօթող և Աստուածավախ մայր մըն ես , քու որդիդ կրնայ երեելի գործիք մը ըլլալ Աստուծոյ ձեռքը , անմահ հոգիներ դարձի բերելու : Քու աղջեկդ կրնայ ըլլալ որ շատ մայրերու սորվեցընէ սիրել զԱստուած և անոր վախովը մեծցընել իրենց զաւակները : Ետքը երկինքին մէջ շատ պտուղ պիտի վայլես ան-

պատմելի ուրախութեամբ , քու զաւակներուդ փափուկ սրտին մէջ ցանած սերմերէդ : Ո՞վ կրնայ ըսել թէ՝ քու ազդեցութեանդ առուները մինչև ու՛ր պիտի հասնին . կրհաւատամ թէ բոլոր յաւիտեանականութեան մէջ պիտի աճին : Եւ նմանապէս պիտի ըլլայ՝ թէ որ դուն անհաւատարիմ գտնուիս և պարտաւորութեանցդ մէջ պակաս ըլլաս . պատասխանատու պիտի ըլլաս՝ բոլոր իրենց չար գործերուն՝ որ կը գործեն աս աշխարհիս մէջ և որոնք պիտի հետեւին իրենց և քեզի գալու աշխարհին մէջն ալ : Աս բանը չը թեթեցըներ քու զաւակներուդ պարտաւորութիւնը Աստուծոյ առջեր . բայց քու պարտաւորութիւնդ կ'աւելցընէ :

Յիրաւի վախ և սարսափ կը  
պատճառէ մարդուս և կ'ստիպէ  
հարցընելու , “Ո՞վ բաւական է աս  
բաներուս :” Սիրելիս , դուն՝ բնաւ  
կարող չես աս մեծ գործը մինակ  
ընելու , բայց ան որ քու զաւակներդ  
քեզի տուաւ՝ միշտ պատրաստ է  
քեզի օգնելու , Կը Սուրբ Հոգիովը՝  
իր խօսքովը և իր նախախնամու-  
թեամբը : Եմէն զաւակ քեզի տա-  
լով՝ կ'ըսէ քեզի՝ ինչպէս որ Փարա-  
ւոնին աղջիկը ըսաւ Մովսէսին մօրը ,  
“Ե՛ս աս տղան որ մնուցանես ինձի  
համար , ու քու վարձքդ կուտամ” :  
Դուն ալ Սամուելին մօրը պէս քու  
զաւակդ Եստուծոյ նուիրէ , իր օրհ-  
նութիւնը ինդրելով :

Քանի մը խրատներ կուտամ որ  
օգնութիւն ըլլայ քեզի քու ծանր  
պարտաւորութիւններդ կատարե-

լու : Ինչպէս որ կ'ուզես որ քու  
զաւակդ ըլլայ իր չափահասութեան  
ատենը՝ ծիշտ դուն անանկ եղիր իր  
մանկութեան ատենը . քանզի քու  
օրինակդ խիստ զօրաւոր ներդոր-  
ծութիւն կ'ունենայ իր վրայ : Քա-  
նի որ անիկայ դեռ գիրկդ երախայ  
մըն է՝ քեզմէ շատ դասեր պիտի  
սորվի . քու ձայնդ՝ նայուածքդ՝  
հեղութիւնդ կամ խստութիւնդ՝  
համբերութիւնդ կամ բարկու-  
թիւնդ մնայուն ազդեցութիւն կ'ը-  
նէ իր վրայ , և իր բնաւորութիւնը  
մեծաւ մասամբ կը կազմէ : Կախ և  
առաջ հնագանդ ըլլալ սորվեցուր ի-  
րեն . խօսել սկսելէն առաջ՝ կրնայ  
սորվիլ աս դասը : Գթասիրտ եղիր ,  
և միանգամայն հաստատուն կեցիր .  
զաւակ մը շուտ կը սորվի թէ ար-  
դեօք կրնայ անհնագանդ ըլլալ իր  
մօրը՝ թէ չէ : Ենիկա կը դիտէ թէ

արդեօք իրաւ կը պատժե՞ս զինքը .  
և եթէ մի և նոյն դէպքին համար  
երբեմն պատժես և երբեմն զանց  
առնես՝ բոլոր կառավարութիւնդ  
կը խանգարես : Երբեմն փոքր տղա-  
քը շատ նեղութիւն կուտան իրենց  
մայրերուն Տէրոջը տանը մէջ, քան-  
դի կը կարծեն՝ թէ հոն չի պիտի  
պատժուին . թէ որ քուկդ անանկ  
ընէ՝ կը Խրատեմքեզ որ տուն տա-  
նիս և պատժես զինքը , որ սորվի  
ամէն տեղքեզի հնազանդիլ : Թէ  
որ անգամ մը ըսիր թէ պիտի պատ-  
ժես զինքը՝ բնաւ խօսքդ մի՛ կոտրեր,  
բայց սիրով ըրէ , և ոչ թէ բարկու-  
թեամբ : Պզտիկ աղջիկ մը տեղ մը  
անհնազանդութիւն ընելով իր մօ-  
րը՝ տուն դարձած ատենը կուլար ,  
իր ընկերներէն մէկը հարցուց թէ  
“ Դնչո՞ւ կուլաս . ” պատասխանեց ,  
“ Որովհետեւ մայրս զիս պիտի պատ-

ժէ . ” իր ընկերը սկսեց մխիթարել  
զինքը ըսելով , “ Չեմ կարծեր պի-  
տի պատժէ , մի՛ լար . “ Եյո ” ըսաւ  
աղջիկը , “ Գիտեմ որ պիտի պատ-  
ժէ , քանզի մայրս ըսաւ , և զիտեմ  
որ իմ մայրս բնաւ սուտչի խօսիր : ”  
Ուստի թող քու այոդ այո՛ ըլւայ և  
ոչդ ո՛չ . բայց շատ զգոյշ եղիր որ  
անխորհրդաբար չսպառնաս :

Երբեմն տղաքը կը սորվին թէ՝ ու-  
ղածնին ձեռք կրնան ձգել թախան-  
ձելով՝ և շարունակ ձայն ձուն հանե-  
լով : “ Հարունակ ձայն հանէ , ” ը-  
սաւ Յովհաննէս իր պղտիկ եղքօրը  
“ և ուզածդ պիտի տայ մայրդ ,  
քանզի ես անանկ սորված եմ : ”  
Որչա՞փ նեղութեան պատճառ կ'ըլ-  
լայ մայրը ինքնիրեն բուն իր անհո-  
գութեամբը : Երբոր տղան սորվի  
թէ՝ ձայն հանելով ուզածը չի պիտի  
առնէ և պիտի պատժուի՝ շուտ մը

պիտի կտրէ իր ձայնը , և մօրն ալ  
շատ հանգստութիւն և խաղաղու-  
թիւն պիտի պատճառէ , քանզի  
մինչեւ անգամ հիւանդութեան ժա-  
մանակ պիտի հնաղանդին իրեն :

Մի յուսահատիր թէ որ գա-  
ւակներդ աս դասը մէկէն՝ ի մէկ  
չը սորվին , պէտք է օրէ օր կրկնել :  
Միտքդ բեր՝ Աստուած ինտոր կը-  
սորվեցընէր իր ժողովուրդին .  
“Քանզի խրատ խրատի վրայ ,  
խրատ խրատի վրայ , հրաման հրա-  
մանի վրայ , հրաման հրամանի  
վրայ , քիչ մը հոս , քիչ մը հոն :” \*

Յիշէ թէ քու երկնաւոր հայրդ ա-  
մէն ատեն կը համբերէ քեզի . և թող  
աս խորհուրդը քեզ աւելի երկայ-  
նամիտ՝ հանդարտ և սիրալիք ընէ :  
Երբոր տղաքդ բարի և հնաղանդ

\* Խոսք . ԷՇ . 10 :

կ'ըլլան՝ թող տեսնան թէ կ'ուրա-  
խանաս . և երբոր չար ու անհնա-  
ղանդ կ'ըլլան՝ թող գիտնան թէ  
կը տրտմիս : Սորվեցուր անոնց թէ  
Աստուծոյ աչքը միշտ իրենց վրայ է  
և կը տեսնայ ու գիտէ բոլոր ըրած-  
նին ուր որ ըլլան . և թէ ինքն ալ  
կը սիրէ զերենք երբ բարի ու հնա-  
ղանդ են : Հնար եղածին չափ չար  
ընկերներէ հեռու պահէ զերենք . և  
սորվեցուր որ ամէն տեսածնին ու  
լածնին պատմեն քեզի , որպէս զի  
կարող ըլլաս ամէն բանի մէջ պաշտ-  
պանել զերենք : Ստէպ բոլորտիքդ  
ժողիչ զանոնք , մանաւանդ Կիրակի  
օրերը և Սուրբ գրքէն պարզ խօս-  
քերով պատմութիւններ ըթէ անոնց .  
Երբահամին՝ Խսահակին՝ Յակոբին՝  
Յովաէփին՝ Մովսէսին՝ Դաւիթին՝  
Դանիէլին և ուրիշ սուրբերու վեա-  
յով , ասոնցմէ շատ մնայուն գասեր

պիտի սորվին : Մանաւանդ մեր սիրելի Փրկչին վրայով պատմէ . թէ ինչպէս տղայ եղաւ , և մեր մեղքերուն համար մեռաւ : Շատ անգամ երգէ անոնց հետ . և Կիրակնօրեայ դպրոցին մէջ ինչ սորված ըլլալնուն վրայ հարցուփորձ ըրէ իրենց : Սովորութիւն ունեցիր քու մեծ տղաքներուդ հետ ամէն օր Սուրբ Գրքէն մաս մը կարդալու կարգով , և մասնաւորապէս սորվեցուր անոնց իրենց յատուկ եղած մեղքերուն վրայով . օրինակի համար՝ սուտ խօսիլ , գողութիւն ընել , Կիրակին պղծել , կրիւ ընել և այլն : Թող սորվին թէ Վստուծոյ առջեր սուտ խօսած կ'ըլլան թէ որ խարելու միտք ունենան . և թէ հօրմէն կամ մօրմէն առանց հրամանի բան առնելը՝ գողութիւն է , Ճիշդ ինչպէս որ ուրիշներէն առնելն է : Սողոմոն կ'ըսէ , “Են որ

իր հայրը կամ մայրը կը կողոպտէ , ըսելով թէ Յանցանք չէ՝ , անիկայ ապականարար մարդուն ընկերն է : ”\* Թէ որ դուն արթուն ու ժրածան կըլլաս՝ ամէն դէպքէ օգտակար դաս մը կրնաս հանել քու զաւակներուդ :

Սորվեցուր անոնց մեծերը յարդել , հանդարտ ու լուռ կենալ երբոր հիւրեր եկած են , քաղաքավար ըլլաք քաղցրութիւն և պատիւ ցուցունել ամէն մարդու , թէ մեծ և թէ պըդտիկ : Թող սորվին օգնութիւն ընել քեզի , իրենցմէ պղտիկ եղբայրներուն ու քոյրերուն հոգ տանելով . Թող շուտ սորվին իրենց կարողութեանը չափ գործել , որպէսզի թէ քեզի և թէ ուրիշներուն օգնեն : Աակայն կրկին կ'զգուշացնեմ քեզ , քանզի բոլոր աս բաներուն մէջ քու

\* Երամ . Էլ . 24 :

օրինակիդ պիտի նային : Ենանկ վարուե իրենց մեծ հօրը և մեծ մօրը հետ՝ ինչպէս որ կ'ուզես որ տղաքդ վարուին քու հետդ երբոր դուն ծերանաս ու տկարանաս : Ենշուշտ քու ցանածէդ պիտի հնձես ինչ որ ըլլայ :

Դուցէ երբեմն պիտի յուսահատիս քու մեղանչական բնութենէդ՝ որնոր քեղ շատ անգամ փորձութեան մէջ կը ձգէ, և լալով պիտի ըսես թէ՝ “Ես որ ասանկ մեղանչական մէկ մըն եմ, ի՞նչպէս կընամ սորվեցընել իմ զաւկներուս :” Աիրելիս, գիտեմ որ արդար մը չկայ, որ մեղք չի գործեր . և աղէկ նշան մընէ թէ որ քու տկարութիւնդ սրտանց կ'զգաս : Ենտարակոյս շատ անգամ փորձութեան մէջ պիտի իյնաս, և կարելի է թէ նոյն բաները


պիտի ընես՝ զորոնք զաւակներուդ կը սորվեցընես որ չընեն : Իայց մի վախնար թէ որ մինչև անգամ տեսնան քու պակսութիւններդ, և թէ ինչպէս կը տրտմեցընեն քեզ, թէ ինչպէս կ'ատես մեղքը և անոր դէմ կը պատերազմիս : Թող անոնք ալ սորվին քեզի պէս՝ Յիսուսի կատարեալ օրինակին նայիլ, և ջմնան անոր նմանիլ :

Կը յուսամ թէ միշտ տղաքդ կանուխ պիտի պառկեցնես . և աս՝ ամենայարմար ժամանակ պիտի ըլլայ, որ ետ նային անցեալ օրուան վրայ . դուն ալ օգնէ իրենց աս բանին նկատմամբ հարցումներ ընելով : Թէ որ կոուած են մէկզմէկու հետ՝ բարկացած են՝ գէշ խօսքեր խօսած են՝ անձնասիրութիւն ըրած են՝ կամ իրենց մեծերուն անհնաղանդ եղած են, թող զղջան, և նե-

բում խնդրեն : Յետոյ աղօթէ հետերնին և պարզ խօսքերով խնդրէ Աստուծմէ որ իրենց մեղքերը ներէ , և զանոնք իր սիրելի և հեղ գառնուկները ընէ : Մի՛ ձգեր զանոնք առանց գլւէր բարեն համբոյրով մը :

Աս բաները պատճառ պիտի ըլլան որ քեզ աւելի սիրեն , և պէտք է որ զաւակ մը աս աշխարհիս մէջ իր հայրը և մայրը ամէնէն աւելի սիրէ . պէտք է որ զաւակը թէ՛ մեծ և թէ պղտիկ անանկ համոզուի՝ թէ իր մայրը աշխարհիս մէջ ամենալաւ կնիկն է . ասանկով աւելի պիտի պատռէ իր մայրը և հնազանդի իրեն : Խնչպէս քաղցր է աս սէրը . և որչափ կը կապէ զանոնք իրարու հետ : Երջանիկ է ան տունը ուր որ աս սէրը կը տիրէ : Թառղ քու տունդ ասանկ տուն մը ըլլայ : Դիշեր ու ցորեկ աղօթք ըսէ Աստուծոյ

որ քեզի աս իմաստութիւնը ու սէրը շնորհէ . ու անշուշտ պիտի տրուի քեզի : Խօսքս պիտի վերջացնեմ ըսելով , ան մայրը որ աս կերպովը կը կառավարէ իր տունը՝ ամէն մօրմէ աւելի պիտի վայելէ իր զաւակներուն սէրն ու յարգանքը : Ծատ անգամ կարդա՛ “Մայր Որդեխնամ” ըսուած գիրքը , ու Սողոմոնին խըրատները , որպէսզի աս պարտաւորութիւնները կատարելու օգնութիւն ըլլայ քեզի .





## ԳԼ. I.

ԶԵՐ ՊԵՐՏՎԵՇՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԵՐԵՎԻ  
ԸՆԿԵՐ

Սուրբ Գիրքը մեզի կը սորվեցնէ  
որ զԱստուած մեզմէ աւելի սիրենք,  
և մեր ընկերը մեր անձին պէս : Սա-  
կայն տեսնանք թէ ո՞վ է մեր ընկե-  
րը : Ընդհանրապէս կը հասկնանք  
թէ անոնք են մեր ընկերները՝ որոնք  
մեզի մօտ կը բընակին, և անանկ է .  
բայց նաև ան ամէն մէկը որուն բա-  
րիք ընելու պատեհութիւն կ'ունե-  
նանք՝ մեր ընկերն է : Եստուծոյ  
ստեղծած մարդը քու ընկերդ է  
ուր որ տեսնաս զինքը : Եստուծ մէ

պատուէր ունինք՝ որ զենքը սիրենք  
մեր անձին պէս : Բայց ի՞նչ կր-  
նշանակէ ատ խօսքը. կարծեմ աւելի  
աղէկ կրնաս հասկնալ՝ թէ որ քննես  
թէ ի՞նչպէս կը սիրես ինքզինքդ :  
Չե՞ս փափաքիր առողջ ու երջանիկ  
ըլլալ և ամէն ուրախութիւն ու  
հանգիստ վայելել . չե՞ս աշխատիր  
որ աս օրհնութիւնները ձեռք ձգես :  
Դառնանք հիմա քու ընկերիդ . ինչ-  
պէս որ քեզի համար կ'աշխատիս՝  
Ճիշդ նոյնպէս ալ պարտաւոր ես  
աշխատիլ և միջոցներ գործածել  
քու ընկերիդ երջանկութեանը հա-  
մար : Պէտք է որ ըլլաս բարերար՝  
մարդասէր՝ հիւրասէր՝ առատա-  
ձեռն՝ հիւանդութեան ատեն հսկող  
և անոր պիտոյիքներուն հոգատար :  
Ինչպէս որ քու հոգիդ կը սիրես՝ և  
կ'աշխատիս անոր փրկութեանը հա-  
մար՝ անանկ ալ պէտք է որ քու ընկե-

բիդ փրկութեանը համար աշխատիս։ Դուցէ գուն տկար ես, ու չես կրնար տունէդ ելլել և ուրիշներուն համար աշխատիլ, բայց “ուր որ կամք կայ՝ հոն ձար կայ :” Եթէ մինչև անդամ հիւանդ ես և անկողինիդ մէջ պառկած՝ ուղեսնէ, պատեհութիւն պիտի գտնաս Տէրոջը համար գործելու։ Ասանկ ատեն աղօթք ընելու ես, և երբ բարեկամներ կուգանքու քովդ՝ խօսէ անոնց իրենց հոգեւոր վիճակին վրայ և խրատէ զանոնք որ մեռնելու պատրաստուին։ Խնչեիցէ Ժամանակ երբ դրացի մը կուգայ քու տունդ՝ ասանկ խորհէ, “Եհա՛ անմահ հոգիր մը, որուն համար հոգ տանելու եմ.” և յիշէ որ ատ պատեհութիւնը ի՞նչ կերպով գործածելուդ համար Տէրը քեղմէ հաշիւ պիտի ուզէ։ Թանք ըթէ որ քու խօսակցութիւնդ օգտակար ըլլայ, և

փափաքանօք աշխատէ որ իր անօթի հոգին կենաց հացովը կերակրես, որպէսզի քու տունէդ պարապ չերթայ : Նոյնպէս ըթէ նաև երբոր տղաքներ կուգանքու տունդ։ անոնց հոգիները սիրելու և հոգալու ես, ինչպէս որ քուկիններդ կ'ընես, զանոնք Յիսուսի առաջնորդելու ջանք ընելով։

Երբոր ուրիշներուն տունը օտարներու հանդիպիս, ջանք ըթէ որ անոնց սրտին մէջ բարի սերմ ցանես, բայց ամենայն համեստութեամբ և խոհեմութեամբ, Տէրոջը օրհնութիւնը խնդրելով։ զգոյշ եղիր որ քու համարձակութեամբդ և ամբարտաւանութեամբդ չը գայթակղեցնես զանոնք։ Անկան մը ամէնէն գեղեցիկ և վայելուչ բանը համեստութիւնն է։ Ճեղ և խոնարհ հո-

գին՝ չէ թէ միայն մարդոց հաճելի  
է՝ այլ Աստուծոյ ալ. և կը զարդարէ  
զմարդիկ ոսկին՝ մարդարիտներէ և  
անդամանդներէ աւելի : Ինչպէս որ  
գրուած է, “Իրենց զարդարանքը չըլ-  
լայ դրսէն մազերու հիւսուածքնե-  
րով՝ և ոսկիներու շարքերով՝ կամ  
շրեղ հանդերձներ հագնելով . Հա-  
պա սրտին ծածուկ մարդը՝ անեղ-  
ծութիւնով հեզ ու հանդարտ հո-  
գիին զարդը թող ըլլայ, որ Աստ-  
ուծոյ առջել խիստ պատուական  
է :”\* Այսաբանութեան մի՛ մտներ,  
անօգուտ ըլլալէն՝ ի զատ՝ ազնիւ-  
ժամանակը կը վատնէ պարապ բա-  
նի համար : Պօղոս առաքեալ կը  
գրէ, “Բայց դուն յիմարական վե-  
ճերէն ու աղգահամարներէն՝ ու  
հակառակութիւններէն՝ և օրէնքի  
վրայով եղած կոիւներէն մէկդի կե-

ցիր . ինչու որ անօգուտ են և սնո-  
տի :”\* Թէ որ մէկը կ'ուզէ քու  
հետդ վէճ ընել՝ սորվեցուր անոր՝  
թէ Սուրբ Գիրքը կարդալու ենք մի-  
այն Աստուծոյ կամքը գիտնալու,  
և կատարելու համար : Սորվեցուր  
թէ սատանային հնարքն է, որ  
մարդոց մտքերը կը փրդովի՝ անօ-  
գուտ բաներու վրայ վէճ ընելու :  
Մեր փրկութեանը վերաբերեալ բա-  
ւական բաներ կանսուրը գրքին մէջ,  
մինչեւ անդամ ամենատկարները  
կրնան հասկնալ . և Սուրբ Հոգին  
ալ մեզի կ'օգնէ :

Ասանկները գուցէ պիտի խնդան  
քու վրադ, և նախատեն քեզ, բայց  
դուն անոնցմէ մի՛ քաշուիր : Յիշէ  
քու Փրկչիդ օրինակը և կրածները .  
առանկ ատեններ ինքը քեզի մօտ է.  
ցնծա՝ և ուրախ եղիր : Ամէն պա-

տեհութիւն փնտոէ՝ Սուրբ Գիրքը  
կարդալու և հասկցնելու ուրիշնե-  
րուն, թէ՛ քու տանդ մէջ և թէ ու-  
րիշներուն տուները, և անոնց ալ  
կարդալ սորվեցուր :

Քու ընտանեկան գործերդ ա-  
նանկ կարգադրէ, որ ամէն օր ժա-  
մանակ գտնաս աս գործը յառաջ  
տանելու . ասոր համար պէտք է որ  
րոպէները շատ ազնիւ սեպես, և  
նայիս որ մէկ րոպէ մը պարապ  
չանցընես, հինգ րոպէ մէկ մեղա-  
ւորի մը հետ խօսելով՝ կրնայ ըլլալ  
որ գարձի գայ : Երբոր կը լսես թէ  
մէկը հիւանդ է, անոր տեսութեան  
գնա՛, թէ՛ աղքատ ըլլայ և թէ հա-  
րուստ . և մարմինին օգուտ մը ընե-  
լու աշխատելէդ ետքը՝ հոգիին հա-  
մար ալ աշխատէ . մարմնաւորը  
ճամբայ պիտի բանայ հոգեորին :  
Երբոր մահը տուն մը մտեր է, քու

Սուրբ Գիրքդ հետդ առնելով՝ հոն  
գնա, կարդայ՝ և աղօթէ սգաւոր-  
ներուն հետ . սեբմ ցանելու յար-  
մար ժամանակ է . հրաւիրէ զա-  
նոնք աղօթքի ժողովներու . հա-  
մոզէ զանոնք որ կարդալ սորվին՝  
որպէս զի անով մխիթարութիւն  
գտնան :

Գուցէ տունը շատ գործեր ու-  
նիս, և փոքր տղաքներ՝ որոնց հոգ-  
տանելու ես, և որոնց պատճառաւ  
տունը մինակ ձգելը դժուար է . թէ  
որ անանկ է՝ կաղաչեմ որ փորձես,  
և օրը գոնէ կէս ժամ կամ քառորդ  
մը ասանկ գործես Քրիստոսի հա-  
մար, և քու բոլոր գործերուդ մէջ  
իր օրհնութիւնը պիտի վայելես :  
Երախադ գիրկդ ա՛ռ, և աղօթքով  
գնա կորսուածները փնտուելու :  
Խնդրէ Աստուծմէ, որ քու առջևէդ


Երթայ , որպէսզի քու ոտքերդ ա-  
ռաջնորդէ իր ուղած տեղը , ու սիր-  
տերը պատրաստէ քեզ սիրով ըն-  
դունելու : Հպարտութիւնը մէկ-  
դի ձգէ . աս խորհուրդը , թէ “Եր-  
դեօք ի՞նչ պիտի խորհին կամ ըսեն  
իմ վրայովս ,” թող պատճառ չըլայ  
քու պարտաւորութիւնդ զանց ընե-  
լու : Խորհէ յաւիտենականութեան  
վրայ և յիշէ ան խօսքը որ կ'ըսէ ,  
“Ենոնք որ արցունքով կը ցանեն ,  
ցնծութիւնով պիտի հնձեն : Են  
որ լալով կ'երթայ ցանելու սերմը  
տանելով՝ անշուշտ ցնծութեամբ ետ  
պիտի դառնայ իր ցորենի խուրձերը  
բերելով .”\* “Են որ խնայելով կը  
ցանէ՝ խնայելով պիտի հնձէ , և ան  
որ առատութիւնով կը սերմանէ՝ ա-  
ռատութիւնով պիտի հնձէ :”† “Եւ  
ընաւ մի՛ մոռնար որ՝ “Կարող է

\* Առաջ. չիլ. 5, 6 :

† Բ Առաջ. թ. 6 :

Աստուած բոլոր չնորհքները ձեզի  
առատօրէն տալու , որ ամէն բանի  
մէջ ամէն ատեն բոլոր ձեզի պէտք  
եղածը ունենալով , ամէն բարի  
գործքերով առատանաք :” \*

• Բ Առաջ. թ. 8 :





## ԳԼ. Բ

ՁԵՐ ՊԵՐՏԵԿՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԽՐԵՏԵ  
ՈՒՍՈՒՑԻՇ

Զեզմէ շատերդ դպրոցներու կրնայիք, և աս յատուկ գործ մըն է՝ որուն Աստուած ձեզ կանչեր է. մանաւանդ թէ որ ամուսնացած չէք, և ձեր ժամանակը լեցընելու համար ընտանեկան զբաղմունքներ չունիք :

Երդ՝ Քրիստոս ձեզի ամէն մէկերնուդ կըսէ՝ ինչպէս որ Սիմոնին ըսաւ, “Օխս կըսիրե՞ս, արածէ իմ գառնուկներս:” Ես գործը ամենեւին թեթև գործ մը չէ, թէ և ա-

մէնափոքր տղաքներու կրթութիւն ալ ըլլայ. յաւիտենականութեան համար եղած գործ մըն է: Մօրմէն ետքընոր բացուած մտքերուն և անմահ հոգիներուն հոգը՝ քու ձեռքդյանձնուած է. և հաւանական է որ քու աշակերտներէդ շատերը քրիստոնէական դաստիարակութիւն չեն վայելեր իրենց ծնողքներէն: Ես՝ քու գործդ և պատասխանատուութիւնդ կ'աւելցնէ. կրնաս անանկ ներգործութիւն ունենալ անոնց մտքերուն վրայ, և ձեւակերպել անոնց բնաւորութիւնները, որ վերջապէս մեծնան եկեղեցեաց սիւներ և աշխարհիս օրհնութիւններ ըլլալու: Ուստի կ'աղաչեմ որ հաւատարիմ գտնուիս. յիշէ որ աս գործն ալ Քրիստոսի համար է, և քու վարձքդ իրմէ պիտի առնես: Ունեմն՝ արածէ աս գառնուկները ու-

բոնք Հովուապետը քու ձեռքդ  
յանձներ է, կամաւ՝ և ոչ թէ ակա-  
մայ. չէ թէ անարդ շահախնդրու-  
թեամբ՝ հապա յօժարութեամբ  
“Եւ Հովուապետին երեցած ատե-  
նը փառաց անթառամ պսակը պի-  
տի ընդունիս :”

Նախ և առաջ աշխատէ որ ա-  
շակերտներուդ սիրտերը շահիս .  
միտքդ բեր քու մանկութեան զգա-  
ցումներդ : Բարերար ու երկայ-  
նամիտ եղիր, բայց թող շուտ մը  
հասկնան՝ թէ քու կանոններդ պա-  
հելու են . առանց հնազանդութեան  
չես կրնար յուսալ թէ յաշողութիւն  
պիտի գտնես դպրոցին մէջ : Միայն  
քանի մը կանոններ դիր, բայց թող  
կատարելապէս հնազանդին : Թէ  
որ աշակերտներդ սորված չեն տու-  
նը իրենց ծնողքներուն հնազանդիլ  
քու գործդ աւելի դժուար պիտի

ըլլայ . բայց շատ պիտի շահիս, թէ  
որ ամէն բան թողուս՝ մինչև որ քու  
իշխանութիւնդ հաստատուի. մինչև  
անգամ թէ որ օրեր վատնել պէտք  
ըլլայ աս բանին համար : Հնազան-  
դութիւնը քու դպրոցիդ հիմը ըլ-  
լալու է, և երբոր հիմը աղէկ դըր-  
ուած է՝ կրնաս յառաջ երթալ և ա-  
նոր վրայ շինել : Միտքդ դիր, և  
աշխատէ որ ժամանակը ճշդու-  
թեամբ պահես . դպրոցի ատեն՝ քու  
աշակերտներէդ առաջներկայ գլու-  
նուէ . և սորվեցուր անոնց թէ՝ օրի-  
նակովդ և թէ խօսքերովդ որ ժա-  
մանակին յարդը ճանչնան :

Ենշուշտ ընաւ դանց ընելու չես  
Սուլը Գիրք կարդալ՝ երգել և աղօ-  
թել, դպրոցը սկսելէդ և վերջացնե-  
լէդ առաջ : Երբեմն ուսուցիչները  
իրենց աշակերտներուն մէկը կը-

Հրաւիրեն որ աղօթք ընէ , բայց ա-  
ւելի աղէկ է որ զուն ընես՝ քան թէ  
անոնցմէ մէկը : Աը յուսամ թէ ա-  
շակերտներուդ հետ ամէնապարզ  
լեզուով պիտի աղօթես , ճիշտ ինչ-  
պէս որ զաւակ մը իր հօրը կը խօսի .  
և կարծ ըլլալու է որ չձանձրանան :  
Չանա զանոնք Քրիստոսի առաջ-  
նորդելու . թող տեսնան թէ ամէն  
բանէ աւելի կը փափաքիս որ զԷստ-  
ուած սիրեն և անոր հնազանդին :  
Սորվեցուր անոնց թէ ամէն ատեն  
ներկայ է Վստուած , թէպէտե չնն  
տեսնար , և ըրածները կը դիտէ ,  
իրենց սրտին ծածուկ խորհուրդնե-  
րը գիտէ և բոլոր խօսքերնին կը լսէ :  
Սորվեցուր անոնց թէ Վստուած  
ի՞նչպէս կ'ուզէ որ վարուին մարդոց  
հետ , մանաւանդ իրենց ծնողքնե-  
րուն՝ եղբայրներուն՝ քոյրերուն և  
խաղե ընկերներուն հետ : Մ'ի՛ խոր-

հիր թէ պէտք է չափահաս ըլլան  
քրիստոնեայ ըլլալնէն առաջ . կը-  
հաւատամ թէ իրեք կամ չորս տա-  
րեկան տղայ մը կրնայ Ճշմարիտ  
քրիստոնեայ մը ըլլալ , այսինքն՝  
զԷստուած իր անձէն աւելի սիրել ,  
և ջանալ անոր ուզածին պէս ըլլա-  
լու : Ինչպէս որ առաջ Քրիստոս  
կը հրաւիրէր մանր տղաքը որ իրեն  
երթան՝ անանկ ալ հիմա կը հրաւիրէ  
զանոնք հոգիով որ իր սիրելի գառ-  
նուկները ըլլան : Վնոնց սորվեցուր՝  
որ միշտ անոր վազեն և իրենց փո-  
քրիկ նեղութիւնները ու հոգերը  
անոր պատմեն , և վստահութեամբ  
նային , գիտնալով որ պիտի լսէ ի-  
րենց : Վսանկ խրատներ խօսելու  
յարմար ժամանակ՝ աղօթքի ատենն  
է . անանկ կարգադրէ բոլոր դասերդ  
որ ամէն օր գոնէ տասը կամ տաս-  
նուհինգ բոպէ զատես յատուկ աս

բանին համար : Անոնց բոլոր դասերէն ալ կրնաս ասանկ վայելուչ խրատներ հանել :

Երբոր աշակերտներդ բոլոր օրը հնազանդ և հանդարտ եղած են՝ զիրենք պատուելու համար քիչ մը պատմութիւններ ըսէ Սուրբ Գրքէն, կամ քու տեսած տղաքներուդ վրայ, և արտօնութիւն տուր որ անոնք ալ քեզի բան հարցընեն աս պատմութիւններուն վերաբերեալ : Չես գիտեր թէ ո՞րչափ ազգեցութիւն պիտի ունենան անոնց վրայ աս պատմութիւնները : շատ անգամ պատմութիւն մը մաքերնին կը մնայ, և խրատ մը կամ յանդիմանութիւն մը շուտ մը կը մոռցուի : Ասանկ օգտակար պատմութիւններ շատ անգամ Վւետաբերին մէջ կը գտնուի : Բայց տղաքը բնաւ չեն ձանձրանար քեզ մէկիկ մէկիկ իրենց տունները

Սուրբ Գրոց պատմութիւններէն, որոնց ամէն մէկէն ընտիր դասեր կը սորվին : Թէ որ կ'ուզես խիստ օգտակար ընել աս պատմութիւնները՝ առաջ քիչ մը խորհելով ընտրէ, և Վստուծոյ օգնութիւնը խնդրէ, որ իր Սուրբ Հոգիովը սորվեցընէ անոնց :

Եթէ մէծ աշակերտներ ունիս՝ աղէկ կ'ըլլայ որ երբեմն զանոնք քու սենեակդ կամ դպրոցը հրաւիրես որ հետերնին խօսիս իրենց հոգեոր վիճակին վրայ, և հետերնին աղօթես, ու թէ որ կ'ուզեն՝ վայելուչ կ'ըլլայ որ իրենք ալ աղօթեն : Կը յուսամ թէ դուն ալ երբեմն իրենց տները պիտի երթաս, իրենց մայրերը Ճանչնալու՝ և զիրենք համոզելու որ Վիրակնօրեայ դպրոցը զան : Ի՞նչ ուրախութեամբ աշակերտներդ քեզ մէկիկ մէկիկ իրենց տունները

պիտի առաջնորդեն . և ո՞վ գիտէ ,  
անոնց տուները որչափ գործ պիտի  
գտնես Քրիստոսի համար : Ասանկ  
հաւատարմաբար գործերդ կատա-  
րելով՝ քու ժամանակդ բոլորովին  
պիտի լեցուի :

Երբեմն վարժուհիներ տեսած եմ,  
որոնք իրենց ձեռագործերը հետեր-  
նին դպրոց կը տանին . բայց բնաւ  
ատանկ բան մի՛ ըներ . յիշէ որ ժա-  
մանակը քուկդ չէ , և Տէրոջը աչքը  
քու փրադ է : Կու պարտաւորու-  
թիւնդ է՝ որ բոլոր միտքդ աշա-  
կերտներուդ տաս , ամէն բոպէ  
սորվեցնելով : “ Բայց ի՞նչ ընելու  
եմ քանի որ իմ աշակերտներս ի-  
րենց դասերը կը սորվին , ” կ'ըսէ մէ-  
կը : Քանի որ մեծերը դասերնին  
կը սորվին՝ պղտիկներուն նայէ , ո-  
րոնք դաս սորվիլ չեն գիտեր : Եւ  
հոս քեզի խորհուրդ մը տամ . հա-

սարակ կարդալ չը գիտցողներուն՝  
դաս սերտել տալը՝ սխալ գաղափար  
մըն է : Անոնք՝ շատ մը սխալմունք-  
ներ ունենալով միայն իրենց սխալ-  
ները աղէկ մը կը հաստատեն , և  
կարծիքով կարդալ սորվելով՝ վերջը  
ուղղելը՝ խիստ դժուար կ'ըլլայ : Ու-  
րեմն նոր կարդալ սորվողները մէկիկ  
մէկիկ քովդ կանչէ , և բնաւ ժա-  
մանակ և աշխատանք մի՛ խնայեր :  
Ըէ որ երբեմնակի միւս դասերուն  
միջոցները ժամանակ գտնաս՝ նորէն  
անոնց նայէ : Բայց գուցէ կը հար-  
ցընես , “ Եթէ նոր կարդալ սորվող-  
ները դաս չը սերտեն , ի՞նչ պիտի  
ընեն . ” աղէկ է որ ամէն մէկը քարե-  
տախտակ մը ունենայ , և անոր վրայ  
գիրեր ու թուանշաններ գրէ , մինչև  
անգամ սենեակին մէջ գտնուած  
բաներուն պատկերները՝ ձիերու՝ է-  
շերու՝ թռչուններու և այլն թող գծեն

իրենց կարողութեանը չափ . բայց  
թէ որ քարէ տախտակ չունին՝ ու-  
րիշ կերպով մը ատ պակասը լեցուր :  
Թէ որ խաղալու յարմար տեղ կայ՝  
պզտիկները որոշուածէն աւելի  
ստիպ պարապոյ միջոցներ թող ու-  
նենան , որ չուլայ թէ ձանձրանալով՝  
դպրոցին սենեակը խաղան : Շատ  
աղէկ կ'ըլլայ որ ամէն դասէ վերջը՝  
բոլորին գիտցած երգերէն մէկ երկու  
համար երգէք միաբանութեամբ :

Նաև հոգ տար որ սենեակին օդը  
շատ անգամ փոխուի , որպէս զի դուն  
և աշակերտներդ չը ծանրանաք .  
քանզի եթէ մարմինը ծանրանայ ,  
միտքը աղէկ չի բանիր : Ես պատ-  
ճառաւ՝ ինչպէս որ շատ ուրիշ պատ-  
ճառներով ալ , հարկ է սորվեցընես  
քու աշակերտներուդ որ ամէն օր  
մաղերնին սանրտեն , և գոնէ երես-

նին՝ ձեռքերնին և ոտքերնին լուան ,  
և շաբաթը անգամ մը բոլոր հան-  
դերձնին փոխեն , և բոլորովին լուաց-  
ուելով մաքուր հանդերձներ հագ-  
նին . իսկ եթէ փոխնորդ հանդերձ  
չունին՝ աւելի աղէկ է որ մերկ մնան  
և անկողինի մէջ պառկին , մինչև որ  
աղտոտները լուացուին ու չորնան ,  
քան թէ աղտոտ լաթերով դպրոց  
գան : Ես բաները պատուիրէ , որ  
բոլոր տղաքները սորվին թէ՝ աղտե-  
ղութիւնը ամօթալի բան է . աղջիկ-  
ները՝ և եթէ կարելի է տղաքն ալ ,  
կարկտել թող սորվին :

Երբոր աշակերտներուդ դաս մը  
կը նայիս , սովորութիւն ըրէ որ  
հարցնես զանազան ձեւերով անսանկ  
հարցումներ՝ որ տեսնաս թէ ամէն  
բառի նշանակութիւն և ամէն խօսքի  
իմաստ գիտեն . մինչև անգամ հե-  
գելու դասերուն մէջ գտնուած բա-

ռերուն նշանակութիւնը՝ մէկիկ մէ-  
կիկ հարցուր : Այսպէս՝ անոնց մըտ-  
է լը արթնցընելով , իրենց կարդա-  
ց սծներուն վրայ խորհիլ պիտի տաս .  
որնոր իրենց յառաջադիմութեանը  
համար խիստ կարեոր է :

Եղեկ կ'ըլլայ որ երբեմն վազան-  
ձաներուն ատենը՝ անանկ խաղեր  
սորվեցնես իրենց , որ զուարձանան՝  
և միանգամայն իրենց մտաւոր վար-  
ժութիւն ըլլայ : Չորեքշաբթի օ-  
րերը կէս օրէն ետքը՝ աղջիկներուն  
քիչ մը կար՝ գուզպայ հիւսել՝ կամ  
ասոր նման գործեր սորվեցուր :  
Նաև ժամանակ որոշէ որ մեծերը  
ճառեր կարդան , կամ գոց ըրածնին  
ըսեն , թէ Սուրբ Գրքէն և թէ ուրիշ  
օգտակար տեղէ մը . աս բանը պինտ  
պղտիկներն ալ կրնան ընել : Կնոնց  
հետ երգեր երգէ , մանաւանդ նոր  
ելած երգեր սորվեցուր :

Ուրիշ վարժութիւն մըն ալ կայ  
որ աշակերտներուդ շատ հաճելի և  
օգտակար պիտի ըլլայ , այսինքն  
իրենց հարցումներ ըրէ , օրինակի  
համար՝ հարցուր իրենց թէ “Հոս  
եկած ատեննիդ Ճամբան ի՞նչ տե-  
սաք .” և թող իրենք մէկիկ մէկիկ  
տեսածնին պատմեն վայելուչ խօս-  
քերով , և իրենց սխալները ու կըթկ-  
նութիւնները շիտկէ : Երբեմն պատ-  
մութիւն մը կարդալ տուր , և գիր-  
քը գոցելով՝ թող իրենց լեզուովը  
պատմեն . որ կը սորվեցընէ կարդա-  
ցածնուն ուշադրութիւն ընել , ու  
յիշողութիւննին կը զօրանայ : Ե-  
սանկ ժամանակներ իրենց մայրերը  
կամ քոյրերը հրաւիրէ , որ ներկայ  
գտնուին . որպէս զի տղաքը գըր-  
գոռուին և քաջալերուին աւելի յա-  
ռաջ երթալու :


Ես մեծ գործը՝ քեզմէ անդադար

աշխատանք և անձնուրացութիւն  
կը պահանջէ . բայց կըյուսամ թէ  
ինքզինքդ բոլորովին պիտի տառ  
ասիկայ կատարելու : Ինչպէս որ  
գրուած է . “Ինչ որ կ'ընէք՝ սրտանց  
ըօէք , որպէս թէ Տէրոջը՝ ու չէ թէ  
մարդոց : Գիտնալով որ ժառան-  
գութեան հատուցումը Տէրոջմէ  
պիտի առնէք . ինչու որ Տէր Քրիս-  
տոսին կը ծառայէք : ”\* Ո՛հ , որչափ  
իմաստութեան և շնորհքի կը կա-  
րութիս՝ որ յարմարիս աս գործին .  
բայց Աստուած կարող է ամէն ատեն  
ամէն շնորհք քեզի տալու , և միշտ  
պատրաստ է քեզի օգնելու : Հար-  
կաւ շատ աղօթք ընելու ես , որ  
Աստուած ամէն ատեն իր Սուրբ  
Հոգիովը և իր սուրբ խօսքովը քեզի  
սորվեցնէ , որ հաւատարմութեամբ  
իր այգիին մէջ գործես , և փառա-

որես զինքը : Թող շատ անգամ  
քու աղօթքդ ըլլայ —

“Եհա , ու ձայր , յանձնածդ բնծի ,  
Մանկութիւնը՝ բնձ կը նայի .  
Խաւար տկար գիտեմ ես զիս ,  
Լուսաւորէ միտք ու հոգիս ,  
Որ ուզածիդ պէս անոնց ես  
Եռաջնորդեմ հոգուի մը պէս : ”

“Եւ խաղաղութեան Աստուածը՝  
որ մեռելներէն յարուց մեր Տէր Յի-  
սուսը , որ յաւիտենական ուխտին  
արիւնովը ոչխարներուն մեծ հովիւն  
է , ձեզ ամէն բարի գործի մէջ հաս-  
տատէ իր կամքը ընելու , և ձեր մէջը  
իր առջելը հաճոյ եղածը ընէ Յիսուս  
Քրիստոսի ձեռքովը , որուն փառք  
յաւիտեանս յաւիտենից . ամէն : ”\*



## ԳԼ. թ.

ՔՐԻՍՏՈՍԻ ԳԱՐՈՒԹԸ ԵԿ ԱՅ ՊԵՐՈՒԵՒՆԻ:

Ես գործը՝ որուն համար Վրիստոս քեզ կանչեր է, իր մէջը կը պարունակէ Եր անուանը համար նեղութիւն քաշել. անկէց ազատ չես կրնար ըլլալ, քանզի Աստուծոյ ամենիմաստ կարգադրութեանը մէկ մասն է: Կարդա՛ Սուրբ Գիրքը աս միտքով, սիրելի աշակերտս, և տես թէ Աստուած ի՞նչպէս կը վարդուէր իր հին ժողովուրդին հետ, սորվեցուց և կրթեց զանոնք ինչպէս որ հայր մը իր զաւակներուն կ'ընէ: «Ու միտքդ պահէ ան բոլոր Ճամբան, որ քու Տէր Աստուածդ աս

քառասուն տարին քեզ անապատին մէջ պտըտցուց, քեզ խոնարհեցնելու՝ փորձելու՝ և սրտիդ մէջինը իմանալու համար, թէ արդեօք դուն անոր պատուիրանքները պիտի պահէս, թէ չէ: Եւ Տէրը քեզ խոնարհեցուց, անօթեցուց, և մանանայով կերակրեց, որն որ ո՛չ դուն կը ճանչնայիր, և ոչ քու հայրերդ, քեզի իմացնելու համար՝ թէ ո՛չ միայն հացովկապրի մարդ, հապամարդը Տէրոջը բերնէն ելած ամէն խօսքովք կապրի: Եւ սրտիդ մէջը գիտնաս որ ինչպէս մարդ մը կը խրատէ իր որդին, քու Տէր Աստուածդ ալ քեզ անանկ կը խրատէ:»\* Կարդա՛ ՀՕՅԵՐՈՐԴ և ՀՅԵՐՈՐԴ Սաղմոնները, ուր որ համառօտաբար ստորագրուած է Խորայէլացոց գլխին անցած գէպքերը: Միտքդ

\* Բ ՕՐԻ. Է. 2, 3, 5:

բեր իր մարգարէներուն չարչա-  
րանքները . առաքեալը անոնց ըս-  
քանչելի գործերը կը պատմէ , որոնք  
Ըստուծոյ զօրութեամբը գործեցին .  
և կը յարէ ըսելով , “ Ոմանք չարչա-  
րուեցան՝ և չընդունեցին ազատու-  
թիւնը , որ լաւագոյն յարութեան  
հասնին . ուրիշներ ալ նախատինք-  
ներու՝ ու ծեծերու , նաև կապերու՝  
ու բանտերու փորձը առին : Քար-  
կոծուեցան , սղոցուեցան , փորձան-  
քի մէջ ինկան , սրով սպաննուելով  
մեռան , ոչխարի մորթերով՝ ու այծի  
մորթերով պտըտեցան , կարօտու-  
թիւն քաշելով , նեղը իյնալով , չար-  
չարուելով , (որ անոնց արժանի չէր  
աշխարհս ,) անապատներու՝ ու լեռ-  
ներու՝ և այրերու՝ ու երկրի խոռոչ-  
ներու մէջ մոլորելով : ”\* Նաև Յա-  
կոբոս կ'ըսէ , “ Եղեայրներս՝ չարչա-

Հ Ե Ւ · Ճ Ա · 35-39 Հ.

րանքներու՝ ու համբերութեան՝ օ-  
րինակ առէք մարգարէները , որոնք  
Տէրոջը անունովը խօսեցան : ”\*

Բայց ամէնէն աւելի խորհէ՝  
Քրիստոսի մեր փրկութեան առաջ-  
նորդին չարչարանքներուն փայ :  
“ Որովհետեւ կը վայլէր Յնոր , (որուն  
համար ամէնը՝ և անով ամէն բանե-  
րը եղած են ,) շատ որդիներ փառ-  
քին մէջ մտցնելու ատենը՝ անոնց  
փրկութեան Յուածնորդը չարչա-  
րանքով կատարել : ”† Յիշէ որ ին-  
քը փառաց աթոռը ձգեց , և աս  
մութ՝ ու մեղսալից աշխարհս եկաւ ,  
քեզի՝ համար . ախոռը ծնաւ , Եր  
փայ առաւ՝ մեր խեղճ՝ ու մեղսալից  
մարմնոյն բոլոր ցաւերը՝ և տկարու-  
թիւնները : “ Յնիկայ մարդոցմէ  
անարգուեցաւ , ու երեսէ ձգուե-  
ցաւ . վշտաց տէր՝ ու ցաւոց տեղեակ

Հ Յ Ա · Է · 10 :

† Ե Յ Ա · Է · 10 :

եղաւ . և անկէ երես դարձնելու  
մարդու պէս եղաւ . անարդուեցաւ ,  
ու զանիկայ չարգեցինք : Երաւցնէ  
անիկայ մեր ցաւերը վերցուց , և մեր  
վիշտերը իր վրան առաւ . և մենք  
զանիկայ վիրաւորուած , Աստուծմէ  
զարնուած , ու չարիքի հանդիպած  
սեպեցինք : Բայց անիկայ մեր մեղա-  
քերուն համար վիրաւորուեցաւ , և  
մեր անօրէնութիւններուն համար  
ծեծուեցաւ . մեր խաղաղութեան  
պատիժը՝ անոր վթայ եղաւ . ու անոր  
վիրքերովս մենք բժշկուեցանք : ”\*  
Ենթիա աղքատ էր . “Քանզի դուք  
գիտէք մեր Տէր Յիսուս Քրիստոսի  
շնորհքը , թէ Ենքը ձեզի համար  
աղքատ եղաւ , ան որ հարուստ էր ,  
որ դուք անոր աղքատանալովք  
հարստանաք : ”† Բնակելու տեղ մը  
չունէր , ինչպէս որ ինքը իր բերնովք

\* Եպոյ . ՃՊ . 3-5 :

† Ք ԱՊԴ . Է . 9 :

ըսաւ , “Եղուկաները որջեր ունին ,  
ու երկնից թոչուները բոյներ , բայց  
Որդին մարդոյ տեղ մը չունի որ հոն  
իր գլուխը դնէ ” : \* Պանդուխտ և  
օտարական էր՝ աս աշխարհիս վթայ ,  
թափառական կեանք մը անցուց :

Բայց չէ թէ միայն իր մարմնա-  
ւոր ցաւերը յիշելու Ենք՝ այլ նաև  
իր հոգիին ցաւերն ալ՝ որոնք ան-  
պատմելի էին , ինչպէս որ առա-  
քեալը կ'ըսէ՝ իր մարդկային բնու-  
թեանք նկատմամբ . “Որ իր մար-  
մնին օրերը սաստիկ գոչումով ու  
արցունքով աղօթք և աղաչանք  
մատուց անոր՝ որ կարող էր զինքը  
մահուանէ աղատելու , ու լուեցու՝  
իր երկիւղէն աղատելով : Թէպէտ  
ինքը Որդի է , բայց իր չարչարանք-  
ներէն հնազանդութիւն սորվե-  
ցաւ : ”† Յիշէ Գեթսեմանի պար-

\* ԱՊԴ . Է . 20 :

† ԵՒԲ . Է . 7 , 8 :

տէզիս մէջ անցուցած գիշերը , երբ  
ըսաւ , “ Հայր թէ որ կուզես , աս  
դաւաթը ինձմէ անցուը . բայց չէ  
թէ իմ կամքս՝ հապա քուկդ թող  
ըլլայ : Սաստիկ նեղութեան մէջ  
ըլլալով՝ աւելի ջերմեռանդութեամբ  
աղօթք կը ընէր : Եւ իր քրտինքը  
արինի մեծ կաթիլներու պէս էր ,  
որ գետինը կը թափուէր : ” Յետոյ  
կապուելով աշխարհային դատա-  
ւորին առջելը տարուեցաւ . նախա-  
տեցին՝ ծաղքեցին՝ ապտակեցին՝ ե-  
րեսը թուքին՝ զլուխը փուշերով վե-  
րաւորեցին՝ հանդերձները վայէն  
անգթաբար հանելով , սարսափելի  
կերպով մը ծեծեցին : Մնկէ ետքը՝  
դողալով՝ և բոլորովին ուժէ ինկած՝  
(քանզի առջի օրէն 'ի վեր ոչ բան  
կերած՝ և ոչ հանգիստ տեսած էր,)  
շալկեց իր ծանր խաչը՝ և տարաւ :  
Յետոյ իր սուրբ ձեռքերը՝ ու ոտքե-

ը խաչափայտին վրայ գամեցին . և  
ո՞վ կրնայ պատմել անոր տանջանք-  
ները : (Արդա Խերորդ Սաղմոսը ,  
որն որ անոր տանջանացը մարգա-  
րէական ստորագրութիւնն է .) և  
քանի որ հն կախուած էր , ան նոյն  
մարդիկը որոնց փրկութեանը հա-  
մար կը մեռնէր , ծաղքեցին զինքը :  
Բայց ինքը իր անհուն գթութեամբը  
և ներողամտութեամբը աղօթք ը-  
րաւ անոնց համար ըսելով , “ Հայր  
թողութիւն տուր ատոնց : ”

Ո՛չ , սիրելի աշակերտս , թող  
քու սիրտդ հալի՝ երբոր աս սոսկալի  
տեսաբաննը՝ քու աշքերուդ առջելը  
բերես , յիշէ որ բոլորը քեզի համար  
էր . քու մեղքերդ —

“ Գամ զարկն իր մարմնին .  
Փուշով պահեցին .  
Խոթեցին սիզակ կողն .  
Եր հողին ան զա՞ ըրաւ ,  
Քու մէշացդ համար մեռաւ : ”

Թէ որ պէտք էր՝ որ մեր մեղքերուն համար Ըստուծոյ Որդին ասանկ չարշարուէր՝ մեզի համար ի՞նչ ըսենք : Առաքեալը կ'ըսէ , “Ըսով գիտցանք Քրիստոսի սէրը , որ անիկայ իր կեանքը մեզի համար դրաւ . մենք ալ պարտաւոր ենք մեր եղբայրներուն համար դնել մեր կեանքը : ”\* Քաւութիւն ըլլալէն ետքը՝ Քրիստոսի հածոյ երեցաւ գործին յառաջ տարուիլը իր աշակերտներուն յանձնել : Վսոնք տկար և տգէտ մարդիկ էին : Քրիստոս գիտմամբ ընտրեց զանոնք աշխարհիս աղքատներէն՝ և տգէտներէն՝ որ աւելի խոնարհ և պատրաստ ըլլան սորվելու : “Երդարև դուք ձեր կոչումը կը տեսնէք՝ Եղբայրներ , որ չէ թէ մարմնոյ կողմանէ շատ իմաստուններ , և չէ՝ թէ շատ զօրաւոր-

\* ա Օ-Հ . 4 . 16 :

ներ , և չէ՝ թէ շատ ազնուականներ կանչուեցան . Բայց Ըստուած աշխարհիս յիմարները ընտրեց , որ ամօթով ընէ իմաստունները . ու աշխարհիս տկարները ընտրեց Ըստուած , որ ամօթով ընէ զօրաւորները . Եւ աշխարհիս ցածազգիները՝ ու անարգները՝ ընտրեց Ըստուած՝ և ոչինչները , որ բան մը եղողները խափանէ . Որպէս զի մէկ մարմին մը չը պարծի Ըստուծոյ առջին : ”\* Միայն երեք տարի վարժեց զանոնք , չէ թէ դպրոցի մէջ՝ այլ ճամբաններուն՝ լեռներուն՝ և ծովուն վրայ . չէ թէ միայն խօսքով՝ այլ օրինակով՝ ու գործքով սորվեցուց անոնց . և մի միայն դասագիրք չին Ատակարանն էր : Զը սորվեցուց անոնց լեզուներ՝ փիլխոփայութիւն և բարձր գիտութիւններ , որոնք

\* ա Ա-Հ . ա . 26-29 :

շատյարգի էին ան օրերը՝ հրէաներուն՝ Յոյներուն, և Հռովմայեցիներուն առջելը : Խնդր աս աշխարհիս բոլոր իմաստուններէն աւելի իմաստուն էր . ինչպէս որ գրուած է, “Որուն մէջը իմաստութեան և զիտութեան բոլոր գանձերը պահուած են:”\* Բայց իր աշակերտներուն սորվեցուց միայն ան իմաստութիւնը՝ որ վերէն կուգայ, որով կարող ըլլան անմահ հոգիներ իր թագաւորութեանը առաջնորդելու : Յայտնապէս ըստ անոնց թէ իր մեռնելէն ետքը շատ հալածանք պիտի քաշեն: “Թէ որ աշխարհ ձեզ կատէ, զիտցէք՝ որ ձեզմէ առաջ զիս ատեց : Թէ որ աշխարհէս եղած ըլլայիք, աշխարհ իրենները կը սիրէր . բայց որովհետեւ աշխարհէ չէք՝ հապա ես ձեզ աշխարհէն ընտրեցի, անոր հա-

\* Առաջ. քէ. 3:

մար աշխարհ ձեզ կատէ:”\* “Երենց ժողովարաններէն դուրս պիտի ձգեն ձեզ . ու ժամանակ ալ պիտի դայ՝ ոդ ամէն ո՛վ որ ձեզ սպաննէ, անանկ պիտի սեպէ թէ Կոտուծոյ պաշտօն կը մատուցանէ : Աշխարհի մէջնեղութիւն պիտի ունենաք : բայց քաջակիրտ եղիք . ես աշխարհին յաղթեցի:”† Սակայն շարունակ անոնց առջելը կը դնէր գալու կինաց փառքերը :

Ո՞րչափ գիւրին էր իրեն՝ պաշտապանել իր սիրելի աշխակերտները ամէն վտանգներէ, բայց թող տուաւ որ հալածուին՝ և ամէն տեսակ նեղութիւններ քաշեն: Երբոր Սողոս կանչեց իր ծառան ըլլալու, և զանիկա ընտիր աման կոչեց՝ ըստ . “Քանոզի ես իրեն պիտի ցուցունեմ

\* Յուն. քէ. 18, 19:

† Յուն. քէ. 2, 33:

թէ ո՞րչափ պէտք է իրեն՝ իմ անուանս համար նեղութիւն քաշել : ”\* Ետքը Պօղոս կը պատմէ իր քաշածները Կորնթացիններուն . և Կողոսացոց կը գրէ՝ “Հիմա ուրախ եմ՝ ձեզի համար քաշած չարչարաքներուս վրայ , ու Քրիստոսի քաշած նեղութիւններուն պակասութիւնը իմ մարմինիս մէջը կը լեցնեմ՝ անոր մարմինին համար , որ եկեղեցին է : ”† Աս կը ցուցունէ թէ՝ մենք որ նոյն գործը կը շարունակենք՝ Քրիստոսի չարչարանքներուն հաղորդ ըլլալու ենք : Ուստի , սիրելիս , մի՛ զարմանար եթէ քեզի ալ նեղութիւններ հանդիպին :

Յիշէ որ նեղութիւնը քու կոչմանդ մէկ մասն է . “Քանզի դուք աս բանիս համար կանչուեցաք , որ Քրիստոս ալ ձեզի համար չարչար-

ՀՊԱՐԴ . Բ . 16 :

† ԱՊՆ . Ա . 24 :

ուեցաւ , ու ձեզի օրինակ թողուց՝ որ իր շաւիզներուն հետևիք : ”\* Ուրեմն դուն միտքդ դիր թէ հարկաւ նեղութիւն քաշելու ես , և ուրախ եղիր , ու կամաւ ընդունէ . “Ուստի Քրիստոս որ մեզի համար չարչարուեցաւ մարմինով , դուք ալ նոյն միտքով զինուորեցէք : ”† Պատերազմի մէջ ես , նախ՝ քու մեղանչական ընութեանդ դէմ . երկրորդ՝ աշխարհիս ցանկութիւններուն՝ փորձութիւններուն՝ և սատանային հնարքներուն դէմ . ուրեմն զինուոր ըլլալու կանչուած ես . “Երդ՝ դուն նեղութիւններու համբերէ՝ Քրիստոս Յիսուսի բարի զինուորի մը պէս : ”‡

Կարելի է նեղութիւնը ճիշտ քու կարծած կերպովդ չգայ . գուցէ դուն միտքդ դրած ես որ մեծ բան մը ը-

Հ ՊԱՐԴ . Բ . 21 :

† Հ ՊԱՐԴ . Բ . 1 :

‡ Բ ՏՄ . Բ . 3 :

նես , կամ կրես Քրիստոսի համար ,  
քանի որ Քրիստոս ուրիշ լուծ մը  
պիտի դնէ վրագ , որուն ընաւ չէիր  
ապասեր , և որնոր գուցէ աշխարհը  
ընաւ չի գիտեր՝ թէ և կրելու համար  
աւելի ջնորհքի կը կարօտիս : Բայց  
մի՛ յուսահատիր , սիրելիս , ահա՛  
քու խաչդ : “Եւ դուն քեզի մեծ  
բաննե՞ր կը փնտռես . մի՛ փնտռեր .”  
ընդունէ ան ԽԵԶԸ որ Աստուած՝  
յատուկ քեզի համար պատրաստեր  
է . թէ որ չես տանիր՝ Անորը չես :  
Մի նետեր քու վրայէդ՝ ծանր ըլլա-  
լուն համար . մի՛ ջանար պղտիկ-  
ցնել . քու խաչէդ մի՛ ամչնար : մի  
աշխատիր ծածկելու . ուրիշներուն  
քու ծանր խաչդ ցուցունելով՝ մի՛  
պարծենար , ասանկ ընելով՝ քու  
անձիդ կը ծառայես : Փառաւորէ  
Աստուած , քու խաչդ խոնարհու-  
թեամբ և համբերութեամբ կրելով :

Պատրաստ եղիր՝ տուն՝ բարեկամներ՝  
հայրենիք ձգելու Արքահամին պէս ,  
երբոր Աստուած քեզ կանչէ : Յօ-  
ժար եղիր բնակելու օտարներու մէջ ,  
ամենէն աղքատ՝ խեղճ՝ անմաքուր՝  
կոպիտ՝ և զղուելի մարդոց մէջ : Ա-  
մէն տեսակ նեղութիւններու համ-  
բերէ , և հետերնին սիրով վարուե-  
քրոջ պէս՝ և ոչ թէ ինքզինքդ ա-  
նոնց վրայ բարձրացնելով , որպէս-  
զի անոնց հոգիները շահիս : Մի՛  
զանգատիր . մի՛ մըումըռար . Քրիս-  
տոսի օրինակը աչքիդ առջեւը բռնէ :  
Մարդս ընականապէս անձնասէր  
է , և նեղութիւնը միջոց մըն է առ  
ախտը բժշկելու : Աստուած կ'ուզէ  
սրբել՝ և յարմարցնել իր աշակերտ-  
ները , չէ թէ միայն աս աշխարհիս  
մէջ իրեն ծառայելու՝ այլ երկնի՛ց  
մէջ ալ : Հատ միջոցներ ու կերպեր  
ունի՝ իր ժողովուրդը գործածելու :

Յիրաւի մեծ զիջում է մեզ իր այս գիին մէջ գործելը . բայց իր Սուրբ Դորքէն կը սորվինք՝ թէ կը բարեհածի իր ամէնատկար և նուաստ զաւակէն փառաւորուելու :

“Մա՛րիամ”, ըստ մէկը, աղքատ քրիստոնեայ կնկան մը՝ որ իր անկողինին վրայ հիւանդ պառկած էր, “ի՞նչպէս կրնաս ուրախ ըլլալ՝ քանի որ այսչափ ցաւ կը քաշես:” “Քեզի ըսեմ,” ըստ հիւանդը, “Երբոր ես առողջ էի՝ Տէրը ինծի կ'ըսէր, ‘Մա՛րիամ, հոն զնա ինծի համար աշխատէ. հոս եկուր ինծի համար գործէ.’ և ես ուրախութեամբ կը հնազանդէի. բայց հիմա ինծի կ'ըսէ, ‘անկողինիդ մէջ պառկած հազար’, և նոյն ուրախութեամբ կը հնազանդիմ, ինչու որ իր սուրբ կամքն է:” Ասկէց կը տեսնեա թէ, ճշմարիտ քրիստոնեայ մը՝

մինչև անգամ հիւանդ՝ ու պառկած՝ կրնայ բան սորվեցնել ուրիշներուն, և անանկով փառաւորել իր հայրը: Գուցէ կը նեղուիս, որովհետեւ քիչ բան գիտես՝ և տկար ես, կը կարծես թէ քու աշխատանքդ՝ որ ուրիշներուն բան սորվեցնես՝ շատ օգուտ չունի: Բայց ես կը յորդորեմ քեզ քու կրցածիդ չափ ընելու. մինչեւ անգամ թէ որ միայն գիտես այը, բէն, գիմ, սորվեցնել՝ այդչափ ըսէ Քրիստոսի սիրոյն համար: Յիշէ տաղանդներուն առակը. թէ որ միայն մէկ տաղանդ մը տրուեր է քեզի՝ զգոյշ եղեր որ վերջը քեզի համար չըսուի, “Կտ անպիտան ծառան դուրսի խաւարը հանեցէք:”\* Ուստի ամօթը արհամարհէ, և քաջալերուէ, փանզի Աստուած քու ունեցածիդ չափովը կ'ընդունի՝ և ո՛չ


թէ չունեցածիդ : Երբոր ուրիշ բան  
չի գար ձեռքէդ՝ զոնէ աղօթք կրնաս  
ընել : Ա երջապէս Պօղոս առաքեա-  
լին ըսածը քուկդ ըսէ , “ Ուստի ա-  
մէն բանի կը համբերեմ ընտրեալինե-  
րուն համար , որ անոնք ալ հասնին  
ան փրկութեանը , որ Քրիստոս  
Յիսուսով է յափառենական փառ-  
քով : ” \*

“ Դամբա գուն Տէր ընտրէ , թող խճ խաւար ըաց .  
Ձեռքովդ առաջնորդէ , ընորէ խճի համբայ .  
Ես չեմ համարձակիր բնաւ վիճակս ընտրել .  
Գուն կառավարս եղբ , ուղեւը ժառակ քամլ :

“ Խնդրած աքայութիւնս է քուկդ , ոլ Տէր իմ .  
Քուկդ ալ ըլլաց շաւիլս , այլաստ կը մոլորիմ :  
Գուն որոշէ վիճակս անհուն խնասութեամբ .  
Եռ և լցուր բաժակա՞ վիշող կամ վայելմամբ :

“ Ծնորէ բարեկամներս , ախտերս՝ պրոշութիւնս .  
Գործանքս ու հոգերս , և կամ հազարութիւնս :  
Խնձի խոստմանք տուիր , որ աղասես չարէն .  
Տէր , առաջնորդս եղբ , խնասութիւնս , ամք : ”

\* Է Տէմ + Է + 10 :



## Պ. Լ. Ժ

ՎՐԻՍՏՈՍԻ ԳԱՐՈՒ ԵԿՇ ԱԲ ՊԵՀԵՆՔՆԵՐ

Սրդ՝ նայինք թէ աս գործը ի՞նչ  
կը պահանջէ քեզմէ : Ամէն անհատ  
քրիստոնեայ , երիկ մարդ՝ կրնիկ  
մարդ՝ և տղայ՝ պարտաւոր է Քրիս-  
տոսի գործին մէջ աշխատիլ , իր  
կարողութեանը և պատեհութեանը  
չափ : Քրիստոսի վերջին պատուե-  
րը՝ թէ “ Գացէք բոլոր աշխարհ ,  
ու աւետարանը քարովեցէք բոլոր  
ստեղծուածներուն , ” \* ամէն հաւա-  
տացեալիներուն համար է բոլոր աղ-  
քերէն , թէ հարուստ՝ թէ աղքատ ,

\* Ամբէ : Ժ. Ա. 15 :

ծեր՝ երիտասարդ՝ իմաստուն և տը-  
գէտ : Խոստմունքը հաւասարապէս  
ամէն հնազանդողներուն համար է  
թէ “Եհա ամէն օր ես ձեզի հետ  
եմ մինչեւ աշխարհիս վերջը :” \* Ով  
որ փորձեր է գիտէ , թէ առանց ա-  
նոր բան մը չի կրնար ընել : Ուստի  
երբոր գործ մը կ'ընեն՝ կը խոստո-  
վանին թէ իրմէ է զօրութիւնը և  
իմաստութիւնը . “Եմէն բանի կա-  
րող եմանով՝ որ զիս զօրացուց :” †

Յայտնի է թէ գործը նախ և ա-  
ռաջ կը պահանջէ որ քու կամքդ-  
ձգես , և ամէն բանի մէջ միայն  
Սատուծոյ կամքը փնտուես , որ դիւ-  
րին բան մը չէ : Մարդս ընականա-  
պէս բուն իր կամքովը լեցուած ըլ-  
լալով՝ միայն անոնք կրնան աս բանը  
ընել որոնք ճշմարտապէս զարձի  
եկած են : Ուրեմն քու միտքդ ա-

\* Պատր. Էլ. 20 :

† Փէւ. Դ. 13 :

սանկ ըլլալու է . այսինքն՝ չէ թէ ե՛ս  
ինչ կ'ուզեմ՝ այլ Սատուած ինչ կ'ու-  
զէ : Եւ ամէն բանի մէջ Սատուծոյ  
հաճոյ եղածը փնտուէ : “Քննեցէք  
ինչ է Տէրոջը հաճելին :” \*

Սատուած իր տանը մէջ շատ ա-  
մաններ ունի , ոմանք մեծ՝ ոմանք  
պզտիկ . “Սակայն մէկ մեծ տան մը  
մէջ չէ թէ միայն ոսկիէ ու արծաթէ  
ամաններ կան , հապա փայտէ ու  
հողէ ամաններ ալ կան . և ոմանք  
պատուոյ համար են , ու ոմանք ա-  
նարգանաց համար :” † Յօժարէ  
փայտէ կամ հողէ աման մը ըլլալու՝  
թէ որ Սատուած սնանկ սահմաններ  
է , բայց նայէ որ իրաւ գործէ համար  
ըլլաս , և չէ թէ միայն զարդարան-  
քի կամ կործանման : Յիրաւի փա-  
փաքելու ես որ ընտիր աման մը ըլ-

‡ Եֆէ. Է. 10 :

† Ք ՏՒ. Ք. 20 :

լաս՝ Աստուծոյ Հնորհքովը և ողորմութեամբը լեցուած . չէ թէ քու պատիւիդ՝ Համար՝ այլ Աստուծոյ փառքին Համար : Սակայն ատանկ մէկը ըլլալու Համար անձնականսըր, բութեան անդադար աշխատանկը կը պահանջուի քեզմէ . “Պանդուխտներու ու օտարականներու պէս մէկ դի կեցէք մարմնաւոր ցանկութիւններէն , որ հոգիի դէմ կը պատերազմին :” \* Այսպէս մաքրուելով պիտի պատրաստուիս Տէրոջը ձեռքին մէջը երևելի գործիք մը ըլլալու : Ինչ որ Աստուած ընտրէ քեզի Համար, որչափ սուղ ալ որնստիքու վրադ՝ անանկ ըլլալու պատրաստ եղիր : “Ինչպէս կը կրես քու մեծ փորձութիւններդ ,” բաւ մէկը աղքատ կնկան մը , որուն էրիկը անգութեարքուող ըլլալով՝ հինգ զաւակնե-

\* ապէտ . է . 11 :

րուն հրգը բոլորովին իր վրայ ձգած էր , թէե ինքն ալ շատ անձնական տկարութիւններ ունէր . “Բոլորը Զիսուսի վրայ կը ձգեմ ,” բաւ խոնարհութեամբ . “և այնչափ ստէպ կուգան՝ որ ստիպուած եմ միշտ իրեն երթալ , և ամէն անգամ որ կ'երթամ՝ աւելի աղէկ կը ճանչնամ սիրելի Տէրս , անանկ որ՝ Հիմա գրեթէ կ'ուրախանամ երբոր նոր փորձութիւն մը կուգայ ինծի , քանզի մեզ խիստ մօտ կը բերէ իրարու , “Քրիստոսի սիրոյն քաղցր ճաշակը առնել կուտայ ինծի :” “Ատ գրեթէ կը փափաքեցնէ զիս՝ որ ես ալ փորձութիւններ ունենամ ,” բաւ բարեկամը : “Դուն փորձութիւն չունի՞ս ,” հարցուց կնիկը զարմանքով մը : “Ունիմ , պղտիկ փորձութիւններ , բայց ոչ անանկներ՝ որ զիս յետին աստիճանի յուսահա-

տութեան մէջ ձգելով՝ Յիսուսի  
քաշեն: ” “ Բայց անշուշտ պիտի  
ունենաս մի՛ կասկածիր, կը հաւա-  
տամ թէ դուն իր ընտրեալներէն  
մէկն ես, և քիչ մը ետքը քեզ մաք-  
րելու համար իր հնոցին մէջը պիտի  
դնէ, գուցէ արդէն կրակը կը վառէ  
քեզի համար: ”

Դուն ալ, սիրելիս, ինքղինքդ բո-  
լորովին Աստուծոյ ձեռքը յանձնէ,  
որ իր ուղածին պէս քեզ ձեակերպէ՝  
ինչպէս որ բրուտը կաւէ ամաններ  
կը շնէ: ” “ Բայց դուն ո՞վ ես մարդ՝  
որ Աստուծոյ պատասխան կուտաս.  
Միթէ ստեղծուածը իր Ստեղծողին  
կրնայ ըսել, թէ Օխս ինչո՞ւ ատանկ  
շնեցիր: ” Բրուտը իշխանութիւն  
չունի՝ կաւին վրայ՝ նոյն շազուած-  
քէն աման շնելու, մէկը պատուոյ,  
և միւսը անարգանաց համար: ” \*

Ինչպէս որ առաջըսի, պատրաստ  
եղիր բուն քու տեղդ լեցնել Տէրոջը  
տանը մէջ, ուր որ ըլլայ. ” Միթէ  
ամէնը առաքեալնե՞ր են. միթէ ա-  
մէնը մարդարէնե՞ր են. միթէ ա-  
մէնը վարդապետնե՞ր են. միթէ ա-  
մէնը հրաշքնե՞ր կը գործեն: ” \* Քե-  
զի սահմանուած տեղը գործէ, և բո-  
լոր ուժովդ աշխատէ, որպէս թէ  
Տէրոջը ու չէ թէ մարդոց, չէ թէ  
վարձքի համար՝ այլ Կրիստոսի սի-  
րովս ստիպուած: Թող քու լոյսդ  
փայլի “ քու փոքր անկիւնիդ մէջ. ”  
Թէե քու անկիւնդ այնչափ պա-  
հուած ըլլայ որ քիչերը տեսնան քու  
լոյսդ, և աշխարհը բնաւ չը ճանչնայ,  
տակաւին աշխատէ գիտնալով որ  
Տէրոջը աչքը քու վրադէ, և բնաւ  
սիրոյ գործերդ պիտի չմոռնայ, որ-  
չափ ալ փոքր ըլլան, եթէ անկեղ-

ծութեամբ իր անուանը համար ընես : “ Քանզի Աստուած անիրաւ չէ որ ձեր գործը մոռնայ , ու ան սէրը՝ որ իր անուանը համար ցուցուցիք : ” \* Քրիստոս մեզի սորվեցուց՝ թէ ո՞վ որ երենալու համար բան մը կ'ընէ՝ “ անիկայ իր վարձքը արդէն առած կ'ըլլայ : ” Բայց դուն գիտցիր որ “ ժառանգութեան հատուցումը Տէրոջմէ պիտի առնես . ինչու որ Տէր Քրիստոսին կը ծառայես : ” †

Ծածներէս յայտնի է որ՝ Տէրոջը գործը քեզմէ անձնուրացութիւն կը պահանջէ . անձնուրացութիւնը ուրիշ բան չէ եթէ ոչ քու անձնական հանգիստը՝ հաճոյքներդ՝ ցանկութիւններդ ոչինչ սեպել Աստուծոյ փառքին և անմահ հոգիներու փըթկութեանը հետ բաղդատելով : Դուն

\* Եքէ . Է . 10 :

† Առա . Գ . 24 :

քուկդ չես , ոչ ալ քեզի համար ապրելու ես . քու ժամանակդ՝ զօրութիւնդ՝ տաղանդներդ և քու ամէն բաներդ ինքը տուաւ քեզի , և իրեն համար գործածելու ես . ինչպէս որ զրուած է , “ Դուք ձեր անձին տէրը չէք : ” \* Ա ամնորոյ գուն պարտաւոր ես ու պատրաստ բոլորովին ձգելով միայն Քրիստոսինը փնտուել : Աս ծա՞նը վարդապետութիւն մը կ'երեւայ քեզի . դժուա՞ր է բոլոր աշխարհային զուարձութիւնները՝ հարըստութիւնը՝ համբաւը և պատիւը ձգելը : Աղէկ մը մտածէ . Աստուած Ճիշդ աս բանը ընելու կը կանչէ քեզ . երկու կողմինները կշեռքի ա՛ռ և խորհէ . կրնա՞ս մէկ կողմի զուարձութիւնները և հանգստութիւնները ձգել և միւս կողմի նեղութիւնները յանձն առնել : “ Թէ որ մէկը

\* Ա Առա . Է . 19 :

ինծի կուգայ, ու չատեր իր հայրը և  
մայրը, ու կինը և զաւակները, ու  
եղբայրները և քոյրերը, նաև իր  
կեանքն ալ, չը կրնար իմ աշակերտս  
ըլլալ։ Եւ ով որ իր խաչը չի վերցը-  
ներ՝ ու իմ ետևէս գար, չը կրնար իմ  
աշակերտս ըլլալ։”\* “Դուն քեզի հա-  
մար որոշէ՝ յաւիտենականութեանը  
վըրայ խօրհելով։ Քրիստոս կ’ըսէ,  
“Դմետևէս եկուր.” աշխարհը կ’ը-  
սէ, “Քրիստոնեայ եղի՛ր թէ որ  
կ’ուզես (անունով), բայց մի՛ ձգեր  
մարմնաւոր զուարձութիւնները և  
ուրախութիւնները, ու քանի որ  
ծերացած չես՝ կեանքդ վայելէ։”  
Քրիստոս կ’ըսէ, “Մարդ մը չի կր-  
նար երկու տէրոջ ծառայութիւնը-  
նել.” Սատանան կ’ըսէ, “Եղէկ, բայց  
ժամանակ մը կեանք վարէ, և եր-  
բոր ծերանաս՝ ինքզինքդ հոգեորի

տուր։” Քրիստոս կ’ըսէ, “Միտքդ  
ըեր Ղովտին կընիկը։” Դուն գիտես  
որ միշտ իր աշակերտներուն կը սոր-  
վեցնէ՝ որ ամէն բան ձգեն և իր ետե-  
ւեն գան ու կը յաւելու՝ թէ “Եր-  
կինքը գանձ պիտի ունենաք։” Են-  
գամ մը Պետրոս հարցուց, “Եհա  
մենք ամէն բան թողուցինք՝ և քու  
ետևէդ եկանք. ուստի մեզի ի՞նչ  
պիտի ըլլայ։” Ըսաւ անոր, “Ով որ  
թողուց տուներ, կամ եղբայրներ,  
կամ քոյրեր, կամ հայր, կամ մայր,  
կամ կին, կամ որդիներ, կամ արտեր՝  
իմ անուանս համար, հարիւրապա-  
տիկ պիտի առնէ, և յաւիտենական  
կեանք պիտի ժառանգէ։”\* Ուրեմն  
եթէ դուն ալ ճշմարիտ անձնուրա-  
ցութեամբ ամէն բան թողում՝ նոյն  
խոստմունքը քուկդ ալ է։ Իայց  
զգուշացիր որ չխաբուիս, քանզի

Վրիստոս ալ աս խոստմունքները  
իր աշակերտներուն ընելէն ետքը՝  
զգուշացուց զանոնք ըսելով, “Հատ  
առաջիններ պիտի ըլլան յետին, և  
յետիններ առաջին :”\* Խաչը տա-  
նողին՝ և յաղթութիւնը վաստկո-  
ղին միայն պիտի տրուի կենաց պսա-  
կը . ատոր համար քու մեծ ուսու-  
ցիչդ կ'ըսէ, “Մինչեւ ՚ի մահ հաւա-  
տարիմ եղեր, ու քեզի կենաց պսա-  
կը պիտի տամ : Ունեցածդ ամուր  
բռնէ, որ մէկը չառնէ քու պսակդ :”†

Ա երի ըսածներէս յայտնի է թէ  
խոնարհութիւն և գոհ սիրտ մը կը  
պահանջուի քեզմէ : Սորվէ խոնար-  
հութեամբ գոհ ըլլալ ան բաներովը՝  
որ Եստուած քեզի տուած է . քանզի  
Ճիշդ այնչափ պիտի տայ՝ որչափ որ  
քեզի պէտք է քու օգուտիդ համար:  
Քու երկնաւոր Ճայրդ կ'ուզէ որ իր

զաւակը երջանիկ և ուրախ ըլլայ .  
ուրախ սրտով և խնդում երեսով  
զինքը փառաւորէ՝ ամէն բանի մէջ  
ու ամէն ատեն : “ Խնչու որ Եստու-  
ծոյ արքայութիւնը կերակուր ու  
խմելիք չէ, հապա արդարութիւն և  
խաղաղութիւն ու խնդութիւն Ճոգ-  
ով Արքով : ”\* Վրիստոս ըսաւ որ՝  
հոգ չը տանինք մարմնաւոր բաներու  
համար : Գոհ ըլլալը՝ սրտի հանգը ս-  
տութիւն կը պատճառէ ամէն մար-  
դոց . բայց եթէ մէկը հպարտու-  
թեամբ՝ նախանձով և մարմնաւոր  
ցանկութիւններով լեցուած է՝ ի՞նչ-  
պէս կրնայ գոհ սիրտ ունենալ : Ուս-  
տի աս չար կիրքերուն դէմ դիր, և  
պատերազմէ, մինչեւ որ Եստուծոյ  
օգնութեամբը ազատիս անոնցմէ :  
Եշխարհային՝ և միայն անունով  
Քրիստոնեայ մարդոց նայէ՝ ու տես

թէ չար կիրքերուն հպատակ ըլլա-  
լուն արդինքը ինչ է : Առաքեալը  
աս բաները յիշելով կ'ըսէ , “ Հապա  
թէ որ դառն նախանձ և հակառա-  
կութիւն ունենաք սրտերնուղ մէջ,  
մի՛ պարծենաք՝ ու Ճշմարտութիւնը  
սուտ հանէք : Աս իմաստութիւնը  
վերէն իջած չէ , հապա երկրաւոր՝  
շնչաւոր և դիւական է : Քանզի ուր  
որ նախանձ ու կոփւ կայ , հոն է ան-  
կարգութիւնը՝ և ամէն չար բանե-  
րը : Հապա վերին իմաստութիւնը՝  
նախ սուրբ է , ետքը՝ խաղաղարար,  
հեղ , հլու , ողորմութիւնով ու բարի  
պտուղներով լեցուն , անկողմնասէր ,  
ու անկեղծ : ” \* Տե՛ս ո՞րչափ քաղցր  
հետևութիւն կը ցուցունեն Աստու-  
ածային իմաստութեան պտուղները  
դիւական իմաստութեան պտուղնե-  
րուն հետ բաղդատելով : Առաքեալը

աս աշխարհին իմաստութիւնը դի-  
ւական կը կոչէ , քանզի սատանա՞ն  
անհնաղանդութեան որդոց սրտին  
մէջը կը ներգործէ : Ուստի պէտք է  
քեզի խիստ արթուն ըլլալ , որ իր  
որոգայթներուն մէջը չը բռնուիս .  
Սուրբ Գիրքը կ'ըսէ , “ Ուստի հնա-  
զանդեցէք Աստուծոյ . սատանային  
հակառակ կեցէք , և անիկայ ձեզմէ  
պիտի փախչի : ” \*

Քեզի պարզ կանոն մը տամ աս  
բանիս համար . դուն քու վեճակդ  
մի՛ բաղդատեր քեզմէ բարձր եղող-  
ներուն հետ՝ այլ քեզմէ ցածերուն  
հետ , որ սորվիս գոհ ըլլալ և դէպի  
Աստուած շնորհակալ սիրտ մը ու-  
նենալ : Նայէ Պօղոս առաքեալին ,  
որն որ առաքելոց մէջ երևելի էր .  
տես ինչպէս իր ձեռքովը կ'աշխա-  
տէր իր ապրուստը ճարելու , քանի

որ Քրիստոսի գործը յառաջկը տա-  
նէր : Ինքզինքը զրկեց ընտանեկան  
ուրախութիւններէ և հանգստու-  
թիւններէ, ու թափառական կեանքը  
մը անցուց : Թէպէտե անանկ նե-  
ղութիւններու հանդիպած էր՝ որ  
քեզի պատահիլը անկարելի է, բայց  
տակաւին կ'ըսէ, “Լս սորվեցայ գոհ  
ըլլալ իմ գտնուած վիճակիս մէջ :  
Դիտեմ չքաւորութիւն քաշելը. գի-  
տեմ շատը ունենալը . ամէն բանի  
մէջ ամէն կերպով աղէկ սորվեր եմ  
թէ կշտանալը, թէ անօթենալը,  
թէ շատ ունենալը, և թէ պակու-  
թիւն քաշելը : ”\* Թէպէտե միւս  
առաքեալներէն աւելի դիտուն և  
գործունեայ էր՝ բայց ինքզինքը ո-  
չինչ սեպեց : Բնաւ չենք կարդար  
թէ Աւետարանին միւս գործաւոր-  
ները անարգեց, իրմէ քիչ բան գիտ-

\* Փէտ. 4. 11, 12 :

նալնուն և քիչ աշխատենուն հա-  
մար : Նաև չենք կարդար թէ եր-  
բէք ջանք ըրաւ որ իր գիտութիւնը  
ուրիշներուն յայտնէ, որպէս զի պա-  
տիւ ստանայ, այլ ընդհակառակն  
կ'ըսէ, “Ես տկարութիւնով ու վա-  
խով և շատ դողով ձեր քովը կե-  
ցայ : ”\* Ամէն բան զոհեց Քրիստո-  
սի գործին համար : “Ինչ որ ինծի  
շահ էր, անիկայ Քրիստոսի համար  
մաս սեպեցի : ”†

Սիրելի աշակերտու, դուն ժամա-  
նակ մը կրթուեցար, և ինքզինքդ  
ոմանց հետ բաղդատելով՝ վտանգ  
կայ որ դուն քու վրադ մեծ համա-  
րում ունենաս : Պէտք է գիտնաս  
թէ Ճշմարիտ իմաստունները ամէ-  
նէն աւելի խոնարհ են : Նեւտոն  
երևելի փիլիսոփային պէս, իրենց  
առջեր կը տեսնան գիտութեան

\* Ասո՞մ. Բ. 3 :

† Փէտ. 4. 7 :

անհուն ովկիանոս մը , որմէ միայն քանի մը կաթիլներ ճաշակեր են : Ընդհակառակն՝ ամէնէն ինքնահաւան և իրենց ունեցած գիտութեանը վրայ հպարտ և պարծող մարդիկ՝ ճշմարտապէս քիչ բան գիտեն : Թէ և կ'աշխատին ինքզինքնին շատ բան գիտցող ցուցունել՝ բայց ընդհանրապէս երեսանց է , ու թէ որ աղէկ մը քննութեան առնուի՝ պիտի տեսնուի թէ տակ չունի : Առակ մը կայ որ գրեթէ ամեն երկրի և ամէն լեզուի մէջ ընդհանուր է , “Պարապ կառքը ամէնէն շատ ձայն կը հանէ :” Գուցէ դաշտէն անցած ատենդ ցորենի հասկերը դիտած ես , պարապ հասկերը՝ շիտակ ու գոռոզութեամբ կը կայնին , գլուխնին դէպի երկինքը բարձրացուցած , բայց անոնք որ լեցուն են՝ դէպի վար կը կախուին : Թող աս քեզի դաս մը ըլւայ . խո-

նարհ եղիր : “Գիտութիւնը կը հպարտացընէ , բայց սէրը շինութիւն կ'ընէ :” Գիտութիւնը աղէկ բան է՝ երբոր Աստուծոյ ծառայելու համար մեր ձեռքը գործիք մը ընենք , բայց երբոր հպարտութեամբ մեր անձերուն կը ծառայեցնենք՝ անէծք մըն է : Ա ասն որոյ կ'զգուշացնեմքեզ որ աս որոգայթին մէջը չը բռնուիս : Առանց Աստուծոյ սիրոյն և ան խոնարհութեանը՝ որ անկէ կը բղիսի , քու ստացած գիտութիւնդ պիտի հեռացնէ քեզ ան անմահ հոգիներէն՝ որոնք կրնայիր Քրիստոսի առաջնորդել . և քու դատապարտութիւնդ ալ պիտի աւելցնէ :

Կը յորդորեմքեզ որ միշտ ինքզինքնիդ բաղդատես քու օրհնեալ Փրկչիդ հետ , ուրիշները մոռնալով : Օրինակէ անոր խոնարհութիւնը .

տես զինքը Ասմարիայի հորին քովը,  
յոզնած՝ անօթի և ծարաւ, և բո-  
լորը մոռնալով՝ խեղճ ու տգէտ պոռ-  
նիկի մը կը սորվեցնէ կենաց ջուրին  
վրայով։ “Նայէ, ի՞նչպէս մաքսա-  
ւորներուն ու մեղաւորներուն հետ  
բարեկամութիւն կ'ընէր, անոնց  
տուները կ'երթար, և անոնց հետ  
սեղան կը նատէր. մինչեւ անգամ  
փարիսեցիները որոնք իրեն թշնա-  
մի էին՝ զարմացան, և ըսին աշա-  
կերտներուն, “Ինչո՞ւ ձեր վարդա-  
պետը մաքսաւորներուն և մեղա-  
ւորներուն հետ կ'ուտէ.” բայց Յի-  
սուս ըսաւ, “Ես արդարները կան-  
չելու չեկայ՝ հապա մեղաւորները։”  
Գնա՛ դուն ալ անանկ ըրէ. մոռցիր  
ինքինքդ, քույոգնութիւնդ՝ տրտ-  
մութիւնդ՝ նեղութիւնդ՝ պատիւդ-  
ու համբաւդ զոհելով՝ որ շատ ան-  
մահ հոգիներ շահիս։ Յիսուսի պէս

զեջում ըրէ, ամէնէն ցած՝ աղտոտ՝  
պիղծ և տգէտ մարդոց տուները  
երթալու։ Համակրութիւն ցուցուր  
իրենց մարմնաւոր նեղութիւննե-  
րուն կարելի եղածին չափ, և ամէ-  
նէն աւելի իրենց հագնելը հոգալզ  
ցուցուր անոնց։ Փնտուէ զանոնք։  
Երբոր տուն մը մտնես, և ամէն բան  
անմաքուր է. Ետ մի քաշուիր, և  
տեղի մի տար որ գիտնան թէ՝ ինչ-  
եիցէ բանէ մը կը զզուիս. քանզի ա-  
տանկ ընելով՝ անոնց սրտերը քեզի  
դէմ կը զոցես։ Երա՞ւ կը զզուիս.  
քեզի զլախ ցա՞ւ կը պատճառէ, ու  
կըսե՞ս թէ սորված չեմ ատանկ բա-  
ներու։ Համբերէ. միտքդ բեր թէ  
քու Փրկիչդ ի՞նչ բանի սորված էր  
իր հայրենիքը. և ի՞նչպէս կ'երեւար  
աս աշխարհքը իր աչքին երբոր առ-  
դին՝ անդին՝ կը պարտէր, ամենա-  
վատ քաղաքներուն և գիւղերուն

մէջ իր առեալ տարածելով։ Անտարակոյս իրեն դժոխք էր աս աշխարհը, քանզի չէ թէ միայն դըրսուանց եղած աղտեղութիւնները և չարութիւնները կը տեսնէր այլ մարդոց սրտերն ալ իր առջեր բաց ու յայտնի էին։ Խորհէ՛ մէյմը. եթէ ինքը՝ որ անմեղ էր, զիջում ըրաւ ասնեղութիւնները կրելու՝ դուն քու մեղսակիցներուդ՝ մանաւանդ բուն քու սեռիդ համար չե՞ս կրնար համբերել։ Քաշէ՛ անոնց սրտերը դէպի քեզ, քու համբերութեամբդ՝ հեղութեամբդ և քաղցրութեամբդ։ ջանք ըրէ անոնց մտքերը մարմնաւոր բաներէն հոգեոր բաներու դարձնելու։ Գալու կեանքին վրայով սորվեցուր անոնց, թէ պէտք է որ սրտերնին փոխուի՝ որպէս զի երկինքը երթալու յարմարութիւն ունենան։ թէ աս փոփոխութիւնը

շուտ ըլլալու է, քանզի մահը մօտ է, ՚ինչու որ ո՛չ պոռնիկները՝ ո՛չ կոապաշտները՝ ո՛չ շնացողները՝ ո՛չ իգացեալները՝ ո՛չ արուագէտները՝ ո՛չ գողերը՝ ո՛չ ագահները՝ ո՛չ գինովները՝ ո՛չ նախատողները ու ո՛չ յափշտակութիւն ընողները Կատուծոյ թագաւորութիւնը պիտի չժառանգեն։”\*

Արկին և կրկին գնա անոնց քով։ շարունակէ աս գործը, և մի ձանձրանար. թէ որ հաւատաքիմը լլաս՝ անշուշտ Տէրը պիտի օրհնէ ջանքերդ, և գուցէ մեծ փոփոխութիւններ պիտի տեսնես, թէ մարմնաւորապէս՝ և թէ հոգեորապէս։ Ա երջը կարող պիտի ըլլաս ուրախութեամբ ըսելու, “Դուք մէկ քանինքը ատանկներ էիք. բայց լուացուեցաք, սրբուեցաք, ու արդարա-

ցաք Տէր Յիսուսի անունովը , ու  
մեր Խստուծոյն Հոգիովը :

Որպէս զի խանարհ և հեղ ըլլաս ,  
և կարողանաս աս կերպով սորվե-  
ցնել՝ բնաւ մի մոռնար թէ դուն այ  
մեղաւոր ես , թէ ամէն չարութեան  
արմատը քու սրտիդ մէջ կը գտնուի :  
“Եթէ Խստուծոյ շնորհքը չըլլար ,”  
ըստ Յովհաննէս Պընեան , Շամբոր-  
դութեան հեղինակը՝ մարդասպանի  
մը կախուելու տարուիլը տեսնալով ,  
“ահա ես անոր տեղը պիտի ըլլայի :”  
Եղէկ կ' ըլլայ որ երրեմն ինքզինքդ  
չարերուն տեղը գնելով՝ ըսես , “Թէ  
որ Խստուծոյ շնորհքը զիս պաշտ-  
պանած չըլլար՝ ես ալ անոնց պէս՝  
կամ աւելի գէշ պիտի ըլլայի :” Քու  
փորձառութեանդ վրայով խօսէ  
իբրև մեղաւոր , և պատմէ թէ ինչ-  
պէս շնորհք գտար , և Խստուծոյ  
հետ հաշտուեցար : Աս բանալի մը

պիտի ըլլայ ուրիշներուն սիրտը քե-  
զի բանալու . պիտի զգան թէ՝ դուն  
իրօք կը գթաս իրենց վրայ , քանզի  
դուն ալ տկարութիւններով պաշար-  
ուած ես . ինչպէս որ քահանաներուն  
համար գրուած է , “Կարող է կարե-  
կից ըլլալ անոնց՝ որ տղէտ ու մոլոր-  
եալ են . ինչու որ ինքն ալ տկարու-  
թիւնով պաշարուած է : ”\*

Խոնարհութեամբ յօժարէ քեզմէ  
փորձառու եղողներէն բան սորվելու ,  
մանաւանդ քու գործիդ յառաջ տա-  
րուելուն նկատմամբ : Թէ որ քու  
մեծերդ քեզյանդիմանեն անխոհե-  
մութեան կամ պակաս բանի մը հա-  
մար՝ սիրով ընդունէ , և աւելի զգոյշ  
եղիր : Ինչպէս որ Դաւիթ ըստ ,  
“Երգարը թող զիս զարնէ . ան ո-  
ղորմութիւն է . և զիս յանդիմանէ .  
ան գլխու իւղ է . իմ զլուխա չը մերժէ

զանիկայ : ”\* Միշտյիշէ և՝ ՚ի գործ  
դիր առաքեալին պատուէրը, “Նմա-  
նապէս դուք երիտասարդներ՝ հնա-  
ղանդ եղիք ծերերուն . և ամենքդ  
իրարու հնազանդ ըլլալով՝ խոնար-  
հութիւն հագէք . ինչու որ Ըստ-  
ուած ամբարտաւաններուն հակա-  
ռակ կը կենայ, բայց խոնարհներուն  
շնորհք կուտայ : ”†

Հ Ա - Հ Ա - Հ Ա - Հ Ա -

† ա պէտ . Ե . Ե .



## ԳԼ. ԺԸ

ԵՍ ՊԵՀԵՆ. ԹՈՒՆՔՆԵՐԸ Ի ԳԱՐԴ ԴԵ-  
ԼԱՒ ՄԻԶ. ԱՅՆԵՐ

Որպէսզի կարող ըլլաս վերոյիշեալ  
պահանջմունքները ՚ի գործ դնե-  
լու, և այսպէս Տէրոջը այգիին մէջ  
պտղաբեր ըլլաս, խիստ հարկաւոր  
է որ շնորհքով աճիս : “ Ըձեցէք  
մեր Տէր ու Փրկիչ Յիսուս Քրիս-  
տոսի շնորհքովը ու գիտութիւնո-  
վը : ”\* Ըս մասին քեզի օգնելու հա-  
մար քանի մը միջոցներու վրայով  
պիտի խօսիմ :

Ենշուշտ քու հոգւոյդ կերակուր  
պէտք է, քանզի ի՞նչպէս կրնաս ու

• Հ Պէտ . Գ . 18 :

բիշ հոգիները կերակրել՝ քանի որ  
քու հոգիդ անօթի մնացած է : Եւ  
ի՞նչպէս կրնաս շնորհքով աճիլ, թէ  
որ ամէն օր կենաց հացէն չես ու-  
տեր, ու կենաց ջուրէն չես խմեր :  
Ուստի քու ամենամեծ հոգդ ըլլալու  
է որ քու հոգիիդ բաժին մը հանես  
ամէն օր, և ե՛տքը կարող պիտի ըլ-  
լաս անօթիին մատակարարել, և  
Եսայիին պէս ըսել, “Տէր Եհովան  
ինծի իմաստուններու լեզու տուաւ,  
որ յողնածին խօսքով օգնել գիտ-  
նամ : ”\* Քրիստոս ինքզինքը կե-  
նաց հաց կոչեց, “Ես եմ կենդանի  
հացը՝ որ երկինքէն իջայ : Ան որ  
իմ մարմինա կ'ուտէ, և իմ արիւնս  
կը խմէ, անիկայ իմ ներսիդիս կը  
ընակի՝ ու ես անոր ներսիգին : ”†  
Ետքը իր աշակերտներուն հասկցուց  
առ խօսքերուն միտքը : “Հոգին է

\* Երայ. Ծ. 4 :

† Յուլ. Հ. 51, 57 :

կենդանի ընողը, մարմինը շահ մը  
չըներ. ան խօսքերը որ ես ձեզի խօ-  
սեցայ, հոգի ու կեանք են : ”\* Ես  
խօսքերէն կը սորվինք թէ՝ անոր  
մարմինը ուտելը, և անոր արիւնը  
խմելը ուրիշ բան չէ եթէ ոչ զայն  
ընդունիլ մեր հոգիներուն համար  
նոյն կերպով՝ ինչպէս որ հացը մեր  
մարմիններուն համար կ'ընդունինք :  
“Ես քու խօսքերդ գտածիս պէս՝  
զանոնիք կերայ . և քու խօսքդ իմ  
սրտիս ցնծութիւն և ուրախութիւն  
եղաւ : ”† Եւ Դաւիթ կ'ըսէ, “Ճան-  
կալի են անոնք ոսկիէն, ու շատ  
փորձուած ոսկիէն . մեղքէն անուշ  
են, ու խորիսիէ կաթած մեղքէն : ”‡  
“Դմսրտիս մէջը պահեցի քու խօս-  
քերդ, որ չը մեղանչեմ քեզի դէմ : ”  
Ես խօսքերը Քրիստոսի խօսքին  
մեկնութիւնն են, և կը ցուցունեն

‡ Յուլ. Հ. 64 :

† Երեմ. ԺԷ. 16 :

‡ Սուշ. ԺԹ. 10 :

թէ կենաց հացը Սուրբ Գրքին  
պատղամներն են :

Երդ, սիրելիս, թէ որ կ'ուզես  
շնորհքով աճիլ՝ պէտք է ասանկ ու-  
տես կենաց հացը, և ամէն օր ու-  
տես : Թէ որ կ'ուզես իմաստուն ըլ-  
լալ՝ ահա՛ ամենաբարձր գիտութիւն,  
որուն հետ աշխարհիս ամենամեծ  
ուսմունքները բաղդատելով՝ ոչինչ  
են : “Տէրոջը վախը՝ իմաստութեան  
սկիզբն (ու վախճանն) է :” Ազօթ-  
քով կարդա Սստուծոյ խօսքը . խըն-  
դրէ Սուրբ Հոգիէն որ քու ուսու-  
ցիչդ ըլլայ և կանոն ըթէ քեզի բնաւ  
Սուրբ Գիրքը չըբանալ՝ առանց Եթու-  
ծուծոյ օգնութիւնը խնդրելու . կա-  
մաց կարդա, շատ խորհէ, ջանք ըթէ  
որ ներքին նշանակութիւնը ըմբռ-  
նես, որ իրաւոնէ քու հոգւոյդ հաց  
ըլլայ : Ես բանին համար ժամանակ  
մի՛ խնայեր, շատերուն պէս “ժա-

մանակ չունիմ” մի՛ ըսեր . Սստուծ  
մարդոց ժամանակ կուտայք բոլոր ի-  
րենց պարտաւորութիւնները կա-  
տարելու, բոլոր ժամանակդ քու  
ձեռքդ է ուզած կերպովդ գործածե-  
լու : Բնաւ չես ըսեր թէ՝ “հաց ու-  
տելու ժամանակ չունիմ .” շատ ա-  
ւելի աղէկ է որ քու մարմինդ անօթի  
մնայ՝ քան թէ հոգիդ : Բայց եթէ  
իրօք անանկ պարագաներու տակ  
ես՝ որ միայն քանի մը ըոպէ ունիս  
Սուրբ Գիրք կարդալու՝ ինչպէս որ  
երբեմն ամէնուս կը պատահի, անա-  
տենը միայն քանի մը տուն կարդա,  
բայց միտքդ բոլորովին կարդացա-  
ծիդ տուր : Սրտիդ դուռը գոցէ, որ  
բոլոր աշխարհային խորհուրդները  
սատանային հետ դուրս մնան : Եր-  
բոր կ'զգաս թէ մէկ համարի մը  
քաղցրութիւնը և ազնուութիւնը  
սիրտդ կը գրաւէ՝ կանգ առ և վայե-

է, (կամաց մը կեր), քանզի Հոգին  
է որ ատանկ ճաշակ մը քեզի տալով՝  
կը կերակրէ քու հոգիդ. մի՛ ձեւեր  
ատ համարը՝ քանի որ կրնաս անկէ  
աս նոր քաղցրութիւնը ծծել, որ  
չըլլայ թէ նոր օրհնութիւն մը  
կորսնցունես : Ասանկ կարդալով և  
մտածելով՝ շնորհակալութեան և  
խնդրուածքի նոր նիւթեր պիտի  
ունենաս : Բոլոր օրը հետդ պիտի  
տանիս աս առաւօտեան հոգեոր  
ճաշին քաղցրութիւնը : Վանի որ  
քու ձեռքերդ ընտանեկան գործե-  
րով կ'զբաղին՝ նորէն միտքդ պիտի  
բերես ան խորհուրդները՝ որոնք  
Հոգիին օգնութեամբը ընդունե-  
ցիր : Հատ անգամ տեսեր նս որ  
ուղտերը՝ գոմէշները և կովերը՝ ի-  
րենց կերը ուտելնէն ետքը կ'որո-  
ջան : Պէտք է որ ամէն Վրիստոն-  
եայ Աստուծմէ իր առաւօտեան բա-

ժինը ստանալէն ետքը ասանկ ընէ .  
այսինքն հոգեոր խորհուրդները ո-  
րոճալով մարսէ, և մնունդ ու զօ-  
րութիւն առնէ : Ասանկ ըսէ և հա-  
ւատա՛ ինծի թէ շնորհքով պիտի  
աճիս, ու պատրաստ պիտի ըլլան  
կենաց հացը ուրիշներուն մատա-  
կարարելու, որ անոնք ալ կշտանա-  
լով ուրախանան . Վրիստոս ըսաւ,  
“Երանի անոնց՝ որ անօթի ու ծա-  
րաւ են արդարութեան, ինչու որ  
անոնք պիտի կշտանան :”\* Ո՞հ, ի՞նչ  
երջանկութեան մեծ աղբիւր մը պի-  
տի ըլլայ քեզի քու բոլոր կենացդ  
մէջ : “Վրիստոսի խօսքը ձեր մէջը  
ընակի առատապէս՝ ամէն իմաս-  
տութիւնով իրար սորվեցնելու ու  
խրատելու, սաղմոսներով, ու օրհ-  
նութիւններով, և հոգեոր երգե-  
րով, ձեր սրտերուն մէջը շնորհքով

\* Անոր, Է. 6 :

զԱստուած օրհնելու : ”\* Ե՞նտարակոյս Քրիստոսի խաղաղութիւնը քու սրտիդ մէջ պիտի թագաւորէ , ու դուն շնորհակալ պիտի ըլլաս : Թէ որ քու փորձառութիւնդ ասանկ ըլլայ՝ երանի քեզի . երկինքը՝ քու սրտիդ մէջ արդէն սկսած է , և ան յաւիտենական ուրախութիւնները՝ որ աս կեանքէն ետքը պիտի վայելես , արդէն կը ճաշակես :

Դարձեալ կարգա՛ Ըստուծոյ խօսքը խոնարհութեամբ և հեղութեամբ : Բա՛ց Սուրբ Գիրքը՝ անոր ձշմարտութիւնները սորվելու անկեղծ փափաքով , և ո՛չ թէ միայն իրենց կարծիքները հաստատելու համար վկայութիւններ փնտողներուն պէս : Հատ խօսքեր կան անոր մէջ որ խրթին ու մութ են , և հարիւ-

րաւոր իմաստուն մարդիկներ Սուրբ Գրոց մեկնութիւններ գրած են զանազան լեզուներով , բայց հազիւթէ երկու մարդ միւնոյն կերպով կը մեկնեն աս գժուարիմաց խօսքերը . անոնք միայն իրենց կարծիքները կը հրատարակեն . բայց մեծ մասը միւնոյն խորհուրդը ունին Ըստուծոյ ընդհանուր դիտաւորութեանը վրայով . որուն պատճառաւ աս խօսքերը գրել տուաւ : Ծոաքեալը կ'ըսէ , “ Բայց առաջ աս գիտնաք , որ գրոց ամէն մարդարէութիւն իր յատուկ մեկնութիւնը չունի : Ինչու որ մարդարէութիւն մը երբէք մարդոց կամքին պէս չտրուեցաւ . հապա Ըստուծոյ սուրբ մարդիկը Սուրբ Հոգիէն շարժուած՝ խօսեցան : ”\* Ուստի Սուրբ Գրքին ամէնալաւ մեկնութիւնը՝ (խօսքերը իրարու-

Հետ բաղդատելով,) բուն իր մէջն է : Եւ ամենալաւ առաջիւ Սուրբ Հոգին է . զգուշացիր որ անոր մտադրութիւն ընես՝ երբ անոր մեղմ ձայնը քու սրտիդ մէջ կը լսես , որ Սուրբ Դրոց խօսքերը յիշեցնելով կը մեկնէ : Աս Ուսուցիչը Քրիստոս իր աշակերտներուն խրկեց զանոնք ձգելէն ետքը . “ Տայց մխիթարիչը Սուրբ Հոգին՝ որ Հայրը իմ անունովս պիտի խրկէ , անիկայ ձեզի բոլորը պիտի սորվեցնէ , և ինչ որ ձեզի ըստի միտքերնիդ պիտի բերէ : ” \*

Եւ հոս քեզի պարզ կանոն մը կուտամ որ Սուրբ Գիրքը կարդացած ատենդ՝ քեզի օգնութիւն մը ըլլայ : Երբոր դժուարիմաց խօսք մը կը կարդաս՝ անոր մէջ գլխաւոր եղած բառը ա՛ռ , և ուրիշ տեղեր գտիր ուր որ նոյն բառը գործածու-

ած է . ասոնք մէկտեղ բերելով՝ իրարու հետ բաղդատէ , և ընդհանուր միտքը աւելի աղէկ պիտի հասկնաս . ինչպէս որ ես վերոյիշեալ Քրիստոսի մարմինին և արիւնին վրայ եւ զած խօսքերը մեկնեցի : “ Եսոր գարձի եկած մարդու մը վրայով պատմութիւն մը լսեր եմ , որ իր բարեկամին տրտմութեամբ ըսաւ , “ Հռովմայեցոց թուղթը բնաւ չեմ հասկընար : ” “ Կտ զարմանալի բան չէ , ” ըսաւ իր բարեկամը , “ Դուն նորածին ես և քանի որ կը կարօտիս Եւետարանին անխարդախ կաթին՝ մէկէն ’ի մէկ սկսեր ես Հռովմայեցոց տրուած գօրաւոր միսը ուտել , որն որ մարսելու կարողութիւն բնաւ չունիս . քեզի խրատ մը տամ . Մատթէոսի Գիրքը սկսելով կարգով կարդա , մինչեւ որ հասնիս Հռովմայեցոց , անատենը աւելի աղէկ պիտի

հասկնաս :” Ուրիշ մը ըստւ, “ Զուկ ուտելու պէս կը կարդամ Սուրբ Գիրքը, քանզի ոսկորները (դժուար իմաց խօսքերը) մէկդի կը գնեմ, և միսը կուտեմ մարսելու համար, որոնցմէ շատ կը գտնուի Սուրբ Գրոց մէջ : ” Այս Կտակարանը՝ Հինքն բանալին է, ուստի երկուքէն ալ մէկ մէկ մաս կարդաւ կարդա՛ ամէն օր : Հատերը յիմարութեամբ իրենց ժամանակը կը վատնեն՝ Սուրբ Գիրքը հետաքրքրութեամբ քննելով, որպէսզի փաստեր և վկայութիւններ գտնան վիճաբանութեան ատեն ուրիշներուն յաղթելու : Ասանկ բաներէ զգուշացիր . “ Բայց յիմարական ու անիմաստ վէճերէն մէկդի քաշուէ, գիտնալով որ անոնցմէ կոխւներ կը ծնանին . Ու Տէրոջը ծառային պէտք չէ կոխւ ընել . հապա հեղահոգի ըլլալ, ամէնուն

տորվեցընող, ոխ չը պահող . Կաղ-ցրութեամբ խրատել հակառակ կեցողները . որ ըլլայ թէ Կստուած ապաշխարութիւն տայ անոնց՝ Ճշմարտութիւնը ձանչնալու համար, Եւ սատանային որոգայթէն զգաստանան, որ անկէ բռնուած են՝ իր կամքին ծառայելու : ” \*

Կսանկները ընդհանրապէս հըպարտութեամբ իրենց գիտութիւնը կ'ուզեն ցուցունել, ու չէ թէ Կստուծոյ կամքը գիտնալ . ինչպէս որ Կրիստոս ըստւ, “ Են որ ինքիրմէն կը խօսի, իր անձին փառքը կը վնտուէ . բայց ան որ զինքը խրկողին փառքը կը վնտուէ, անիկայ Ճշմարիտէ, և անոր քովը անիրաւութիւն չկայ : ” † Կսանկ մարդոց հոգիները կը կորնչին կենաց հացին համար, որն որ թէպէտ ձեռքերնին ունին՝

բայց կ'անարգեն, խենդ մարդու մը  
նմանելով՝ որ հաւկիթին կեղել կ'ու-  
տէ՝ ու մէշինը կը նետէ։ Ուրիշներն  
ալ կը ջանան Սուրբ Գրոց այսինչ և  
այնինչ վարդապետութիւնները ծուռ  
ու մուռ դարձնել իրենց անիրաւու-  
թեանցը և անհաւատութեանցը  
պաշտպանութիւն և հաստատու-  
թիւն գտնալու համար։ Ասանկ ը-  
նելով՝ մահաքեր թոյնի կը դարձր-  
նեն ան դեղք՝ որ իրենց հոգիներուն  
բժկութեանը համար Աստուծմէ-  
տրուածէր։ Ինչպէս որ Պետրոս ա-  
ռաքեալ Պօղոսին զրածներուն վրա-  
յով կ'ըսէ, “Ինչպէս որ ամէն թուղ-  
թերուն մէջն ալ աս բաներուս վրա-  
յով կը խօսի։ որոնց մէջ քանի մը  
դժուարիմաց խօսքեր կը գտնուին,  
որ զանոնք տգէտները ու անհաս-  
տանները ծուռ կողմը կը դարձնեն,  
ինտոր ուրիշ գիրքերն ալ՝ իրենց ան-

ձին կորստեանը համար։”\* Ո՞րչափ  
որ ձեռքէդ կուգայ ասանկները սի-  
րով խրատէ, որ աս յիմարութիւնը  
ձգեն, և ըսէ անոնց՝ թէ պէտք է եր-  
թանք Սուրբ Գրքին իբրև շտեմա-  
րան մը, անկէ զէնքեր առնելու սա-  
տանային և մեր չար բնութեանը  
դէմ պատերազմելու համար, և ո՛չ  
թէ մեր եղբայրներուն հետ կոռւե-  
լու և անոնց հակառակելու։ Ինչպէս  
որ զրուածէ։ “Արանիդ հագէք  
Աստուծոյ սպառազինութիւնը, որ  
կարող ըլլաք սատանային հնարքնե-  
րուն դէմ դնելու։”†

Մի՛ ամչնար “չեմ գիտեր” ըսե-  
լու՝ երբոր Սուրբ Գրքէն քեզի բան  
մը կը հարցուի որուն պատասխանե-  
լու կարող չես։ աւելի ամօթ կ'ըլլայ  
թէ որ ցուցունես թէ գիտես՝ քանի  
որ բոլորովին տգէտ ես անոր վրա-  
յով։

յով. և աս՝ չէ թէ միայն Սուրբ Գրոց  
կը վերաբերի՝ հապա ամէն բանի ալ :  
Ը ատ անգամ միտքդ բեր, թէ Սուրբ  
Գիրքը ինտոր գործածելուդ և անոր  
պատուէրները ինչպէս՝ ի գործ դնե-  
լուդ համար պատասխան պիտի տաս  
Աստուծոյ: “Վաեւ քու մանկութե-  
նէդ՝ ի վեր Սուրբ Գիրքերը գիտես,  
որոնք կրնան իմաստուն ընել քեզ  
փրկուելու՝ Քրիստոս Յիսուսի վրայ  
եղած հաւատքովը:”\* Ուստի ինք-  
զինքդ բոլորովին աս բանին տուր,  
“Վտոնց վրայ խորհիւ՝ ու ատոնց մէ-  
ջը պարապէ, որ քու յառաջադի-  
մութիւնդ ամենուն յայտնի ըլլայ :  
Զգուշացիր քու անձիդ ու վարդա-  
պետութեանը՝ ու միշտ ատոնց մէջը  
կեցիր. քանզի այդպէս ընելով, քեզ  
ալ պիտի ապրեցնես, ու անոնք ալ՝  
որ քեզի մտիկ կ'նեն:”†

\* Ք ՏՒ 4. 15.

† Ա ՏՒ 4. 15, 16.

Եթէ շնորհքով աճիս՝ հարկաւ  
հոգիին պտուղները յառաջ պիտի  
բերես. առաջննը՝ այսինքն շնորհ-  
քով աճիլդ՝ ան ներքին և ծածուկ  
գործն է, որ հոգւոյդ մէջը ըլլալու-  
է. ինչպէս որ արմատները հողին  
երեսէն վար խորունկ մը տարածու-  
ելով՝ իրենց պէտք եղած մնունդը և  
զօրութիւնը անկէ կը ծծեն: Եր-  
կրորդը՝ այսինքն բարի գործերը՝  
ծաղիկներն ու պտուղներն են, որ աս  
պահուած արմատներէն կը բղխին:  
Ինչպէս որ Դաւիթ կ'ըսէ, “Ենիկայ  
ջուրի ճամբաները տնկուած ծառի  
պէս պիտի ըլլայ, որ իր ժամանա-  
կին իր պտուղը կուտայ . ու անոր  
տերեւը պիտի չթափի, և ինչ բան  
որ ընէ՝ պիտի յաջողի:”\*

Եկուր նմանութիւն մը յառաջ  
բերենք՝ աս բանը աղէկ մը պարզե-

\* Ա ՏՒ. 2. 3:

լու համար : Ը ատ անգամ տեսեր  
էք որ պարտիզպանը իր պարտէզը  
կը մաքրէ , քարերը՝ փուշերը՝ և խո-  
տերը ժողվելով ու կորսնցընելով , կը  
հերկէ ու զանազան տեսակ ծաղիկ-  
ներ ու արմտիքներ կը տնկէ . Աստ-  
ուած ալ իր արեւը և անձրեւը խրկե-  
լով կ'աճեցընէ ու պտղաբեր կ'ընէ :  
Բայց երբէք տեսա՞ծ էք որ բոլոր աս-  
բաներէն ետքը՝ դարձեալ փուշեր և  
վնասակար խոտեր չքուսնի . ո'չ եր-  
բէք . հարկ է որ պարտիզպանը ա-  
մէն օր շարունակ ատ վնասակար  
բաները քաղէ , և պարտէզը ջրէ՝ որ-  
պէսզի առատ պտուղ վայելէ : Սի-  
րելիս , քու սիրտդ ալ ճիշդ ասանկ  
պարտէզի մը կը նմանի : Թէ որ  
դուն Աստուծոյ զաւակն ես՝ այսինքն  
իր Հոգիէն ծնած՝ ըսել է թէ Մեծ  
Պարտիզպանը քու հոգւոյդ Հողը  
կակուղցուցեր ու հերկեր է , սրբու-

թեան սերմը ցաներ է : Հին հողը  
այսինքն բնութիւնդ՝ փոխուած չէ ,  
և փուշերը՝ այսինքն մեղքերդ՝ միշտ  
պիտի բուսնին , բարի սերմին հետը ,  
և անկէ ալ աւելի : Բայց քու ան-  
գաղար գործդ ըլլալու է՝ զանոնք  
կորսնցնել , որ չը խեղդեն բարի սեր-  
մը և Աստուծոյ օգնութեամբը՝ քու  
փոքրիկ պարտէզդ մաքուր պահելու  
ես : Կարդա աս նմանութեանը վրա-  
յով Քրիստոսի առակը Մատթէոսի  
մաքրորդ գլխուն մէջ : Ը ատերը կը  
կարծեն թէ վերստին ծնածը նոր  
բնութիւն մը կ'ստանայ , բայց ա-  
նանկ չէ . մարդուն կամքը միայն կը  
փոխուի , և իր բնութեանը մէջ նոր  
սկզբունք մը կ'ունենայ : Առաջ՝  
անձնասիրութիւն կը սիրէր , իսկ  
հիմա անոր տեղը Աստուծոյ Սէրը  
կը տիրէ : Դարձի գալը ուրիշ բան  
չէ՝ եթէ ոչ Աստուծոյ դառնալ , և

ամէն բանի մէջ անոր հնազանդիլ .  
Քրիստոս աս բանը պարզապէս սոր-  
վեցուց անառակ որդիին առակովը :  
Եւ Սօղոս դարձի գալուն պէս ըստ,  
“Տէր ի՞նչ կ'ուզես որ ընեմ :” Ուս-  
տի տե՛ս , քու անձիդ սրբութեանը  
և շնորհքով աճելուն համար՝ ան-  
խոնջ աշխատանք կը պահանջուի  
քեզմէ . ասոր համար առաքեալը  
կ'ըսէ , “Եհով ու գողով անձերնուղ  
փրկութիւնը գործեցէք :” Բայց  
որպէսզի չը յուսահատիս՝ կը յարէ ,  
“Եստուած է որ ձեր մէջը կը ներ-  
գործէ կամենալը ու ընելը իր հա-  
ճութեանը համար :” Յիշէ որ Ես-  
տուած միշտ կ'օգնէ անոնց՝ որ իրենք  
իրենց կ'օգնեն : Դնչպէս որ ընու-  
թեան կ'օգնէ՝ անանկ ալ շնորհաց  
կ'օգնէ . թէ որ երկրագործը ծոյլ ու  
անհոգ է՝ քիչ պտուղ պիտի ունե-  
նայ . նոյնպէս նաև պիտի ըլլայ քե-

զի : Գործէ և Եստուած քու մէջը  
պիտի ներգործէ . և շատ միջոցներ  
շնորհելով՝ քու աշխատանքդ պիտի  
օրհնէ : Ուստի թախանձանօք կը  
խնդրեմ քեզմէ որ քու հին ընու-  
թեանդ դէմ մշտնջենաւոր պատե-  
րազմ ընես , որպէսզի հին հարտը իր  
բոլոր գործքերովը քեզմէ մէկդի  
ձգես . կարդա Եփեսացոց չորրորդ  
զիսուն քսաներկուերորդ համարէն  
մինչև վերջը : Միշտյիշէ թէ “Սիր-  
տը ամէն բանէն աւելի խաքերայ ու  
խիստ չար է :”\* Ո՛չափ չարութիւն  
որ գուն կը տեսնես քու սրտիդ մէջը՝  
Եստուած բիւրաւոր անզամ աւելի  
կը տեսնէ . և սա ոանան միշտ ար-  
թուն է՝ ու կը գրգուէ քու չար կիր-  
քերդ որ քեզ մեղքի մէջ ձգէ : Ու-  
րեմն Դաւիթին պէս աղօթք ըրէ ,  
“Ո՞վ կրնայ միտք առնել իր յան-

\* ԽԵՒ . ԺԷ . 9 :

ցանքները , ծածուկ մեղքերէն զիս  
պահէ : ”\* “ Այս շատ անգամ կար-  
դա և միտք պահէ ՀԱՅԵՐՈՐԴ Աաղ-  
մոսը :

Երդ նայինք թէ ինչ է Քրիստո-  
սի վրայ սիրով արմատանալը , ու  
բարի պտուղներ յառաջ բերելը .  
Քրիստոս աս նմանութիւնը յիշե-  
լով ըստε , “ Ես որթն եմ՝ ու դուք  
ճիւղերն էք . ան որ իմ վրաս հաս-  
տատուած է՝ ու ես անոր վրայ , անի-  
կայ շատ պտուղ կը բերէ՝ ինչու որ  
առանց ինձի բան մը չէք կրնար ը-  
նել : Եմէն ճիւղ որ իմ վրաս է՝ ու  
պտուղ չբերեր՝ , կը կտրէ զանիկայ .  
և ամէնը որ պտուղ կը բերէ , կը  
մաքրէ զանիկայ , որ ա՛լ աւելի պր-  
տուղ բերէ : ”† Ուստի անոր մէջը  
կենալը՝ ինչպէս որ արդէն ըստ-

• ԱՊԼ . ԺԷ . 12 :

+ ՕԿԱ . ԺԷ . 5 , 2 :

ենք՝ իր խօսքը պահելն ու կատա-  
րելն է :

Եհա՛ աս է Քրիստոսի մեր մէջը  
բնակիլը , ինչպէս որ առաքեալը կ'ը-  
սէ , “ Որ Քրիստոս հաւատքով ձեր  
սրտերուն մէջը բնակի , և դուք սի-  
րով արմատացած ու հաստատուած  
ըլլաք : ”\* “ Ուստի ինչպէս որ ըն-  
դունեցիք Քրիստոս Յիսուս Տէրը՝  
անով քակեցէք , արմատ կապած՝ ու  
անոր վրայ շինուած՝ և հաւատքին  
մէջ հաստատուած՝ ինչպէս որ սոր-  
վեցաք , և անոր մէջը աճեցէք դո-  
հութիւնով : ”†

Թէ որ այսպէս արմատացած ըլ-  
լաս՝ տեսնանք թէ պտուղը ի՞նչ պի-  
տի ըլլայ :

Առաջինը՝ “ է , որ ամէնէն եր-  
և ելին է , և որուն մէջը կը պարու-  
նակին բոլոր միւսներն ալ : Ի՞նչպէս

+ ԵՒՒ . Ք . 17 :

† ԱՊԼ . Ք . 6 , 7 :

քաղցր ստորագրեր է ասիկայ Պօ-  
ղոս առաքեալը, “Սէրը երկայնամիտ  
է, քաղցր է . սէրը չը նախանձիր .  
սէրը չը գոռողանար, չը հպարտա-  
նար, անվայել վարմունք չունենար,  
իրենը չը փնտռեր, բարկութեան չը  
գրգռուիր, չարութիւն չխորհիր,  
անիրաւութեան վրայ չը խնդար,  
հապա ճշմարտութեան խնդակից  
կ'ըլլայ, Ամէն բանի կը զիջանի, ամէն  
բանի կը հաւատայ, ամէն բանի կը  
յուսայ. ամէն բանի կը համբերէ :  
Սէրը բնաւ չիյնար . բայց թէ որ  
մարգարէութիւններ ըլլան՝ պիտի  
խափանին, թէ որ լեզուներ՝ պիտի  
դադարին, թէ որ գիտութիւն՝ պի-  
տի խափանի :”\* Եւ ասոր համար  
կը սորվեցընէ թէ ամէն գիտու-  
թիւն՝ ամէն տաղանդ՝ ամէն բարի  
գործեր՝ թէ որ առանց աս արմա-

\* ա Կո՞մ . ԺԿ . 4-9 :

տին ըլլան՝ ոչինչ են . “Թէ որ մար-  
գոց ու հրեշտակներուն լեզուները  
խօսիմ՝ և սէր չունենամ, ես ձայն  
տուող պղինձի պէս եղայ, կամ  
հնչեցող ծնծղաներու պէս : Եւ թէ  
որ մարգարէութիւն ունենամ, ու  
հասկնամ ամէն խորհուրդները՝ ու  
ամէն գիտութիւնը, և թէ որ ու-  
նենամ ամէն հաւատքը մինչև լեռ-  
ները տեղափոխելու, ու սէր չունե-  
նամ, ոչինչ եմ : Եւ թէ որ իմ բոլոր  
ստացուածքս աղքատներուն կեր-  
ցընեմ, ու իմ մարմինս այրուելու  
տամ, և սէր չունենամ, օգուտ մը  
չեմ ունենար :”\* “Ուստի Կատու-  
ծոյ ընտրեալ սուրբերու և սիրելի-  
ներու պէս՝ վրանիդ հագէք գութը,  
ողորմութիւնը, քաղցրութիւնը,  
խոնարհութիւնը, հեզութիւնը, եր-  
կայնմտութիւնը, իրարու համբերե-

\* ա Կո՞մ . ԺԿ . 1-3 :

լով և իրարու ներելով, թէ որ մէկը  
մէկու մը դէմ տրտունջ մը ունենայ.  
ինչպէս որ Քրիստոս ձեզի ներեց,  
անանկ ալ դուք : Եւ աս ամէն բա-  
ներուն վրային սէրը հագէք, որ կա-  
տարելութեան կապն է : ”\* Եւ ինչո՞ւ  
Ճշմարիտ է աս բանը . քանզի Ես-  
տուած սէր է : Թէ որ աս սէրը չու-  
նենանք՝ յայտնի է թէ անորը չենք .  
“ Թէ որ մէկը Քրիստոսի հոգին  
չունի, անիկայ անորը չէ : ” Վասնզի  
որոնք որ Եստուծոյ Հոգիովը կ'ա-  
ռաջնորդուին , անոնք Եստուծոյ  
որդիքն են : ”† Ուստի թէ որ Հո-  
գիին առաջնորդուած չենք՝ մարմ-  
նաւոր ենք , և անկարելի է որ Ես-  
տուծոյ հաճոյ ըլլանք : Ինչպէս որ  
գրուած է “ Մարմինով եղողները ,  
չեն կրնար Եստուծոյ հաճոյ ըլլալ :  
Ինչու որ մարմնաւոր եղողները

\* Արև. է. 12-15 :

† Հայով. է. 9, 14 :

մարմնին բաները կը մտածեն , ու  
հոգեոր եղողները՝ հոգիին բանե-  
րը : ”\* Բայց մենք աղէկ գիտենք  
թէ Եստուած ինչ կ'ուզէ մեզմէ .  
քանզի կ'ըսէ , “ Ինչու որ եթէ մար-  
մնաւորապէս ապրելու ըլլաք , պիտի  
մեռնիք . բայց թէ որ Հոգիով մար-  
մինին գործքերը սպաննէք , պիտի  
ապրիք : ”†

Երդ նայինք՝ թէ ի՞նչ է Հոգիին  
առաջնորդուիլը : Կարծ խօսքով ը-  
սեմ քեզի : Երբոր շիտակ չեղած  
բան մը ընելու վրայ էիր , բնաւ քու  
ներսէդ քեզ ետ քաշող զօրութիւն  
մը չզգացի՞ր : Եւ բնաւ դէպ ՚ի ա-  
ղէկ բան մը ընելու մզող զօրութիւն  
մը զգացած չե՞ս , որպէս թէ քու  
ներսէդ մեղմ ձայն մը կ'ըսէր , Եղէ  
այսինչ բանը ըրէ՛ , և կամ՝ մի՛ ըներ ,

\* Հայով. է. 8, 5 :

† Հայով. է. 13 :

կանգ ա՛ռ . ահա աս է Հոգիին ա-  
ռաջնորդութիւնը : Ծէ որ զուն  
անոր ձայնին կը հնազանդիս՝ երա-  
նելի ես . Աստուծոյ զաւակն ես :  
Բայց թէ որ մարմինին ցանկու-  
թիւններուն ու սատանային ձայնին  
կը հնազանդիս՝ բարկութեան ժա-  
ռանգ ես , սատանայի զաւակ : Ասոր  
համար առաքեալը կ'ըսէ , “Մի՛ սի-  
րէք աշխարհս , ո՛չ ալ ինչ որ աշ-  
խարհիս մէջ է : ”\* Ուրեմն զգու-  
շացիր , “Աստուած ծաղը չըլար : ”

Դուցէ պիտի հարցնես՝ Ինտո՞ր  
պիտի գիտնանք թէ Քրիստոսի մէջ  
ընակած ենք , և ինքը մեր մէջը :  
Ինքը ըսաւ , “Երենց պտուղէն պի-  
տի ճանչնաք զանոնք : Ո՛չ թէ ա-  
մէն մէկը՝ որ ինծի Տէ՛ր Տէ՛ր կ'ըսէ ,  
պիտի մտնէ երկնից թագաւորու-  
թիւնը . հապա անիկայ որ իմ երկ-

նաւոր Հօրս կամքը կը կատարէ : ”\*  
Նաև գրուած է , “Մենք գիտենք  
որ մահէն կեանքի փոխուեցանք .  
ինչու որ եղբայրները կը սիրենք .  
ան որ եղբայրը չի սիրեր , մահուան  
մէջ կը մնայ : ”†

Ինքզինքդ բնաւ մի՛ բաղդատեր  
ուրիշ քրիստոնեաններու հետ , քան-  
զի ատանկ ընելով՝ ետ պիտի երթաւ  
և ոչ թէ յառաջ : Ինչպէս որ առաջ  
ըսի՝ ինքզինքդ միշտ Քրիստոսի  
հետ բաղդատէ : Եյգեպանները կը  
վկայեն թէ՝ ան Ճիւղերը որ ուրիշ  
Ճիւղերու վրայ հաստատուած են՝  
պտուղ չեն տար , բայց անոնք որ  
արմատին վրայ հաստատուած են՝  
խիստ պտղաբեր կ'ըլլան : Ճիշդ  
նոյնպէս ալ թէ որ քրիստոնեանները  
մէկզմէկու նային՝ պտղաբեր պիտի

չըլւան , քանզի պէտք է որ մեր  
կեանքը Քրիստոսէն ծծենք :

Ըրդ , սիրելիս , Դուն աս Քրիս-  
տոսի մէջը պահուած կեանքը ու-  
նիս , և անով կ'ածի՞ս ամէն օր :  
Քեզի համար կրնայ ըսուիլ , թէ  
”Դուք մեռաք , ու ձեր կեանքը պա-  
հուած է Եստուծոյ քովը Քրիստոսի  
հետ : Երբոր Քրիստոս՝ մեր կեանքը  
յայտնուի , ան ատենք դուք ալ անոր  
հետ փառքով պիտի յայտնուիք : ”\*  
Ար խորհիս թէ աս ծանր վարդա-  
պետութիւն մըն է , այնչափ նեղ  
ճամբայ մը՝ որ մէկը չի կրնար անոր  
մէջը քալել : Յիշէ որ ասոնք իմ  
պահանջմունքներս չեն՝ այլ Քրիս-  
տոսինն են : Իսքն էր որ ըստ ,  
”Նեղ դոնէն ներս մտէք .” և յայտ-  
նապէս սորվեցուց իր աշակերտնե-  
րուն թէ պէտք է որ աս պահանջ-

մունքները կատարեն՝ որպէսզի իր  
աշակերտները ըլլան :

Դուն քեզի համար ուոշելու ես ,  
կամ ընդունիլ՝ և կամ ձգել . կամ  
Եստուած ընտրելու ես , և կամ սա-  
տանան : Կ'աղաշեմ որ ինքզինքդ  
բոլորովին աս գործին տաս , և ան  
ալ՝ անմիջապէս , քանզի վաղը քուկդ  
չէ : Մի՛ ջանար կէս կէս քրիստո-  
նեայ ըլլալու . քեզ կը վստահացնեմ  
թէ բնաւ Ճշմարիտ խաղաղութիւն՝  
հանգստութիւն և ուրախութիւն  
պիտի չը տեսնաս , թէ որ ուզես մէկ  
ձեռքովդ երկինքը բռնել՝ և միւս  
ձեռքովդ աշխարհքը : Ամէն բան  
ձգէ , կորսնցուր քու կեանքդ որ  
նորէն գտնաս : Յեսուին պէս ըսէ ,  
”Բայց ես՝ ու իմ տունս Եհովան  
պիտի պաշտենք : ” Ու եթէ աս ըն-  
տրութիւնը ընես՝ վերջին օրը դուն  
քեզի դէմ վկայ պիտի ըլլաս , թէ

որ ետ քաշուիս : Քրիստոս կ'ըսէ ,  
“Ո՛չ մէկը՝ որ ձեռքը մաճին վրայ  
կը դնէ ու ետին կը նայի , Աստուծոյ  
թագաւորութեանը յարմար է : ”\*

Երդ՝ կը խնդրեմ որ Աստուծոյ  
բոլոր հրամանները աղօթքով կար-  
դաս , և բոլոր սրտով ջանք ընես ՚ի  
գործ դնելու՝ որ քեզի աղէկ ըլլայ ,  
թէ աս կենացս մէջ՝ և թէ յաւի-  
տենականութեան մէջ : “Աս օրի-  
նաց գիրքը քու բերնէդ չը զատուի ,  
հապա գիշեր ցորեկ անոր վրայ մը-  
տածես , ու բոլոր անոր մէջի գրու-  
ածները պահես ու կատարես . քան-  
դի ան ատենը քու գործքերդ առաջ  
կը տանիս , և ան ատենը յաջողու-  
թիւն կը գտնես : ”† Մի՛ յուսա-  
հատիր մեղքի դէմ ունեցած պա-  
տերազմիդ մէջը , ինքը քեզի պիտի  
օգնէ , քու զօրապետդ ան է , և եր-

\* Դ. 1. թ . 62 \*

† Յիսուս ։ ա . 8 :

բոր յաղթես՝ բոլոր փառքը անոր  
տուր : “Են որ կը պարծենայ՝ Տէ-  
րոջմով թո՛ղ պարծենայ : ”†

Աս՝ Քրիստոսով պահուած կեան-  
քը պաշտպանելու և զօրացընելու  
համար՝ խիստ հարկաւոր է քեզի  
ամէն ատեն աղօթք ընել . ուրեմն՝  
“Ենդադար աղօթք ըրէ : ” Քանզի  
առանց Աստուծոյ հետ մշտնջենաւոր  
հազորդակցութեան (որուն միջոցո-  
վը կրնաս հոգեւոր օրհնութիւններ  
ընդունիլ) աս կեանքը պիտի տկա-  
րանայ և մարի : Խնչպէս որ Աստ-  
ուած իր անձրեւ կը խրկէ և արեւ  
կը ծագեցնէ՝ որ երկիրը պտղաբեր  
ընէ , անանկ ալքու հոգւոյդ համար  
պէտք է արդարութեան արեւ՝ և  
Աստուծոյ օրհնութեան անձրեւ :

"Տէր, այժմ լութեամբ երկիրը .  
Ըստ կընս խիստ պաղաքեր .  
Հիմա օրնութեանդ անձրեւ  
մոռշ կաթի իմ վրաս ալ Տէր .  
Վրաս ալ Տէր,  
Վրաս ալ Տէր,  
Թաղ կաթի իմ վրաս ալ, Տէր :  
  
Մի անցնիր ինձմէ, Փրկիչս,  
Քեզ սրբմ, քեզի յարիմ .  
Քաղցր ձայնդ լսէ ականջա,  
Օքս կանչէ, քեզ հետեիր .  
Օքս ալ Տէր,  
Օքս ալ Տէր,  
Օքս կանչէ, քեզ հետեիր :  
  
Ուէւ քեզ շատ հեղ մոռցած եմ,  
Սուրբ Հոգի, Մանցնիր ինձմէ .  
Քեզ մեղքովս վշտացուցած եմ .  
Ո՞չ, սերէ և զիս փրկէ .  
Օքս ալ Տէր,  
Օքս ալ Տէր,  
Ո՞չ, սերէ և զիս փրկէ :"

Ամէն ատեն Հոգիին օգնութիւնը  
փնտուէ . բնաւ մեր շատ խօսելուն  
Համար չենք լսուիր, այլ Կստուած  
սրտին անկեղծ փափաքներուն կը  
նայի : "Կստուած, ողորմէ ինձի

մեղաւորիս" լման աղօթք մըն էր .  
Նաև "Տէր օգնէ ինձի" լման է, թէ  
որ բոլոր սրտով ըլլայ :

Եթէ դուն Կստուծոյ զաւակն ես՝  
պիտի ուզես ամէն ատեն անոր վա-  
զել, ուրախութեան ատեն, տրտմու-  
թեան ատեն, հանգստութեան ա-  
տեն, նեղութեան ատեն, Ճիշդ ինչ-  
պէս որ զաւակ մը ամէն բան իր  
մօրը կը պատմէ, և օգնութեան  
համար անոր կը դիմէ : Օաւակի  
մը պէս պարզամտութեամբ խօսէ  
Կստուծոյ . և Ճիշդ եղած բանը  
պատմէ իրեն . թէ որ յանցանք մը  
ըրած ես՝ Ճիշդ եղած բանը պատ-  
մելով (ինչպէս որ բարեկամի մը  
կընես) ներում խնդրէ : Շատերը  
աս բանին մէջ սխալ կարծիք ունին,  
կը կարծեն թէ աղօթքը յատուկ  
ոճեր և խօսքեր ունենալու է . և  
կարդալ չը գիտցողները կ'ըսեն,

“մենք չենք գիտեր աղօթք ընել :”  
Բայց բնաւ անանկ չէ . Աստուած  
Ճարտասանական խօսքերու և բար-  
ձր ոճերու չի նայիր , այլ կը զգուի  
անոնցմէ թէ որ կոտրած սրտէ յա-  
ռաջ չի գան : Իր ուզած զոհը՝  
կոտրած հոգին է , ուստի Դաւիթին  
աղօթքը քուկդ ըրէ , և օրը հարիւ-  
րաւոր անգամ քու սրտէդ թող ել-  
լեն . “Ով Աստուած՝ իմ մէջս մա-  
քուր սիրտ ստեղծէ , և իմ ներսի-  
դիս ուղեղ հոգի նորոգէ :”

Հաւատքով խնդրէ , և օրհնու-  
թիւն ակնկալէ , ու սպասէ մինչեւ  
որ ձեռք ձգես . թէ որ Ճիշդ քու  
խնդրուածքդ չառնես՝ Աստուած  
քեզի աւելի աղէկը պիտի տայ :  
Վանդի գիտենք որ “Ամէն բաները  
բարիի գործակից կ'ըլլան անոնց՝ որ  
Աստուած կը սիրեն :”\* Միշտ շոր-


հակալութեամբ աղօթէ՛ , քանզի աս  
է Տէրոջը հաճելին : Երբոր մեղք  
գործած ես՝ գնա՞ անմիջապէս անոր  
հետ հաշտուէ . և թէ որ Ճշմարիտ  
ապաշխարութեամբ ներում խնդ-  
րես՝ առնելուդ վրայ մի՛ տարակու-  
սիր :

Ուրախ եղիր որ “Իր որդիին ա-  
րիւնը մեղ ամէն մեղքէ կը սրբէ ,”  
և աւելի արթուն կեցիր որ չը տրտ-  
մցընես զինքը՝ մեղք գործելով :

Ասանկ շարունակ աղօթելով՝ սի-  
րելիս , երկինքին և քու մէջտեղդ ,  
օրհնեալ առնչութիւն մը պիտի  
հաստատես Յակոբին Սանդուխին  
նման , որուն վրայէն հրեշտակները  
կ'ելլէին և կ'իջնէին :

Աս կերպ աղօթքը քեզ սիրոյ կա-  
պերով Աստուծոյ հետ պիտի միացը-  
նէ , և իր ամենակարող բազուկը  
պիտի շարժէ քեզի օգնելու . և պիտի

գորացընէ քեզ անմահ հոգիներու  
համար աշխատելու : Հատ անգամ  
քու դէմքդ պիտի փայլի անոր փառ-  
քովը , ինչպէս որ Մովսէսինը կը  
փայլէր երբոր լեռնէն իջաւ , և ինքը  
չէր պիտեր : Ու քու չողիդ պիտի  
կերակրուի երկնից հացովը :



## ԳԼ. ԺԲ

ԶԵՐ ԳՈՐԾՈՒՆ ԿԵՐԴԵԴՐՈՒԹՅՈՒՆ

Արպէս զի յաջողութիւն գտնաս  
Քրիստոսի գործին մէջ՝ աղէկ կը  
սեպեմ որ քեզի համար ընդհանուր  
կարգադրութիւն մը ընեմ : Դիցուք  
թէ նոր մտեր ևս քու աշխատու-  
թեանդ գաշտը , թէ երեցի մը և  
թէ քարողիչի մը ընտանիքը ըլլաս՝  
և թէ լոկ քրիստոնեայ կնիկ մը , որ  
կը փափաքիս քու կրցածիդ չափ  
գործել՝ քու բոլորտիքդ գտնուող-  
ներուն համար . քու առաջին գործդ  
պիտի ըլլայ՝ գտնուած տեղիդ կնիկ-  
ներուն հետ ծանօթանալ , ու զա-

նոնք քեզի քաշել քու բարերարութեամբդ և քաղցրութեամբդ : Ենոնց հետ ընտանանալէդ և իրենց հոգեոր ու մարմնաւոր վիճակին տեղեկանալէդ ետքը՝ շուտ մը պիտի հասկնաս՝ թէ ինչ կերպով կրնաս օգտակար ըլլալ անոնց : Եստուծոյ առաջնորդութեանը համար շատ աղօթք ընելով՝ պէտք է սկսիս անոնց հոգիներուն համար աշխատելու : Ես կրնաս ընել՝ թէ՛ ուղղակի և թէ անուղղակի, ուր որ հանդիպիս անոնց : Եյցելութեան գնա անոնց տուները և զանոնք քու տունդ հրաւիրէ . կարդա անոնց Առւրբ Գիրքէն՝ և համոզէ զանոնք կարդալ սորվելու . յանձն ա՛ռ նաև սորվեցնելու՝ և սորվիլ ուղղողներուն ալ վարժապետներ գտիր : Ճամանակէ մը ետե կարող կ'ըլլաս շաբաթական ժողովք ընելու :

Ի՞նչու՞ս ընելու ևս ըստնկ մը ուզա՞ք ՄՅ.

Թէ որ քրիստոնեայ քոյրեր չկան ան տեղը՝ դուն ստիպուած ես աս ժողովքին մինակ նայելու : Կը խրատեմ քեզ որ աս ժողովքներուն համար շատ զգուշութեամբ պատրաստուիս : Քանի որ քոյրեր չկան որ աղօթք ընեն՝ աղօթքի ժողովք չի կրնար ըսուիլ . ուստի քու նպատակդ պիտի ըլլայ Առւրբ Գիրքը կարդալ, և անոր Ճշմարտութիւններուն վրայով խօսիլ ու խրատել զանոնք :

Ես բանին համար Առւրբ Հոգիին առաջնորդութիւնը իննդրէ՝ երբոր աս ժողովքին համար կը պատրաստուիս, որ յարմար մաս մը ընտրես : Շատ անգամ աւելի օգտակար է միայն քանի մը համար կարդալ քան թէ ամբողջ գլուխ մը : Ընտա-

Ներար և աղատօրէն խօսէ կնիկներուն քու կարդացածիդ վրայով։ Անոնց հարցումներ ըսէ, որ տեսնես թէ կը հասկնան քու խօսածներդ, որ աւելի մտաղրութիւն ընեն։ Խօսածներդ աւելի պարզէ՝ իրենց գիտցած բաներէն օրինակներ բերելով։ Թռող իրենք ալ բան հարցնեն թէ որ կ'ուզեն։ Հատ մի՛ քաշուիր, երբոր կը խօսիս. ունկնդիրներուդ երեսը նայէ՛. համեստ եղիր, բայց գիտցիր քու անձդ կառավարել աս բանին մէջ։ Համառօտ ըսէ, և իրենց ձանձրանալէն առաջ վերջացուր։

Երբոր աղօթք կ'ընես, անանկ խօսէ քու Աստուծոյդ, որ անոնք գիտնան թէ զուն իր ներկայութիւնը կը զգաս, և անոր հետ հաղորդակցութիւն ունիս։ Խնդրուածքներդ շատ պարզ թռող ըլլան՝ ինչպէս որ զաւակ մը իր հօրմէն բան ինչպէս որ զաւակ մը իր հօրմէն բան

կը խնդրէ. շատ երկայն թռող չըլլայ որ աղօթել չը սորվողները չը յոգնին։ Միշտ զգոյշ եղիր որ բերանդ չգոցես, հապա՝ բաւական ձայնով խօսիս և աղօթեմ որ ամէնն ալ լսեն և հասկնան։

Թէ որ զուն քարոզեչի կամ հովիսի ամուսին ես, և աղօթքի ժողովք կ'ընես, ուր որ քրիստոնեայ քոյրեր ալ կան, շատ ժամանակ մի վատներ խօսելով (ինչպէս որ ոմանք քարոզել կը կոչեն.) հապա՝ միայն տաճնուհինդ կամ քսան րոպէ տուր կարդացածներուդ վրայ խօսելու և խրատելու, և ետքը՝ քոյրերուն ըսէ որ իրենք խօսին ու աղօթեն առանց իրարու սպասելու։ Երբեմն անունով հրաւիրէ, բայց աւելի ստէպ առանց անուն տալու հրաւիրէ։ Պատուիրէ որ կարճ ընեն, որպէս զեչորս կամ հինգ աղօթքներ ըլլան իւ-

բարու ետեկ. աս աւելի դիւրին կ'ըլ-  
լայ թէ որ ազօթքի յատուկ նիւթ  
մը առաջարկովի իրենց . օրինակի  
համար՝ անգամ մը թող ազօթեն  
դարձի չեկած բարեկամներուն հա-  
մար , ուրիշ ատեն մը՝ իրենց ընկեր-  
ներուն համար , և ուրիշ ատենմալ  
Աւետարանին տարածմանը համար  
ևայլն : Բաէ՛ անոնց թէ հարկ չէ ա-  
մէն ազօթքի մէջ բոլոր աշխարհք  
շրջել , ամէն մեղք խոստովանիլ , ու  
ամէն խնդրուածք ընել . այլ շատ  
անգամ ուղղապէս երթալու է Աս-  
տուծոյ յատուկ խնդրուածքով մը ,  
իր շնորհաց խոստմունքներուն վրայ  
փաստաբանելով : Տէրն մեր ըստ,  
“Երբոր ազօթք կ'ընէք , հեթանոս-  
ներուն պէս շատախօս մի՛ ըլլաք .  
վասն զի կը կարծեն թէ իրենց շատ  
խօսելուն համար պիտի լսուին : Ու-  
րեմն անոնց չնմանիք . ինչու որ ձեր

Հայրը ձեզի պէտք եղածը դիտէ՝  
գեռ դուք իրմէ չը խնդրած : ”\*

Աս ժողովքներուն մէջ խօսիլը  
քոյրերուն դիւրացուր՝ քու ընտանե-  
քար անոնց հետ խօսելովդ . յորդորէ  
զանոնք որ իրենց փորձառութիւն-  
ները պատմեն , և քոյրերէն ազօթք  
խնդրեն : Աս ազատութիւնը մեծա-  
պէս պիտի աւելցընէ ժողովքներուն  
ազդեցութիւնը , և քոյրերուն սըր-  
տերը իրարու պիտի կապէ քրիս-  
տոնէական կարեկցութեամբ և սի-  
րով : “Աս ատենը Տէրոջմէ վախ-  
ցողները իրարու հետ խօսեցան . և  
Տէրը մտիկ ըրաւ , ու լսեց . և իր առ-  
ջևը յիշատակի գիրք գրուեցաւ Տէ-  
րոջմէ վախցողներուն համար , ու  
անոր անունը մտածողներուն հա-  
մար : Աւ անոնք իմս պիտի ըլլան ,  
կ'ըսէ զօրաց Տէրը , ան օրը՝ որ իմ

սեփէական գանձս ժողվեմ. ու ա-  
նոնց պիտի խնայեմ, ինչպէս որ  
մարդ մը կը խնայէ իր որդւոյն՝ որ  
իրեն ծառայութիւն կ'ընէ : " \* Կա-  
զաչեմ որ աս բաներուն մէջ պակաս  
չը գտնուիս, թէ որ առաջին ան-  
դամ շաջողիս՝ շարունակէ ջանքերգ  
մինչև որ յաջողիս : Աղէկ կ'ըլլայ  
նաև՝ երբեմնակի՝ քոյրերէն մէկը քու-  
տեղդ ժողովքը կառավարէ . մինչև  
անգամ տկարներէն մէկը թող ըլ-  
լայ . անոնց շնորհքով աճերուն և  
յառաջանալուն օգնութիւն պիտի  
ըլլայ : Բայց միշտ ներկայ գտնուէ,  
և օգնէ անոնց քու աղօթքներովդ  
և կարեկցութեամբդ : Թէ որ դուն  
պիտի ընես ժողովքը՝ անպատճառ  
ժամանակին ներկայ գտնուէ . բայց  
թէ որ արգելք մը պատահի՝ մէկէն  
ուրիշի մը յանձնէ՝ ժողովքէն բա-

ւական ժամանակ առաջ, որ պատ-  
րաստուելու պատեհութիւն ունե-  
նայ : Աս խիստ հարկաւոր է, քանզի  
երբեմն քոյրերը Լուսաւորչական-  
ներէն ումանք ժողովքի կը հրաւի-  
րեն, և թէ որ ժողովքը կառավարու-  
զը ուշ կը մնայ ու չի գար՝ անոնք կը  
ստիպուին շատ մը սպասելէն ետե-  
իր ետեւէն խրկել, և օտարաց առջե-  
ամօթով կը մնան : Աղեցութիւնը  
խիստ գէշ է, ամէն մարդ գիտէ թէ՝  
աս ընթացքով՝ աղօթքի ժողովքը  
կը մարի :

Թէ որ իրարմէ հեռու երկու թա-  
գերու մէջ քոյրեր կը գտնուին՝ շատ  
օգտակար կ'ըլլայ որ երկու թաղե-  
րուն մէջ ալ ժողովքներ ըլլան : Ինծի  
կ'երեւայ թէ ժողովքները կարգաւ-  
տունէ տուն ըլլալը աւելի օգտակար-  
է : Վանզի շատերը որ ժողովարան  
գալու չի պիտի համարձակին՝ տու-

ները դիւրութեամբ պիտի գան : Հոգ տար որ դուրսէն եղողները ամէնը բարեես , և հետերնին քաղցրութեամբ խօսիս , անոնց մասնաւոր պատիւ ըթէ՛ , մինչև անգամ ամենէն խեղճերուն . որպէս զի զանոնք շահիս , ու շատ անգամ գան՝ ճշմարտութիւնը լաելու : Սորվեցուր քրիստոնեայ քոյրերուն որ աս բանին մէջ աչառութիւն չընեն : Ըռաքեալը կ'ըսէ , “ Քանզի թէ որ ձեր ժողովքին մէջ մէկ մարդ մը մտնելու ըլլայ՝ որ ունենայ ոսկի մատանի , և փառաւոր հանդերձներ , հոն մէկ աղքատ մըն ալ մտնելու ըլլայ աղտոտ հանդերձներով , և նայիք անոր վթայ որ փառաւոր հանդերձներ ունի , ու ըսէք թէ՛ Դուն հոս նստէ պատուով , և ան աղքատին ըսէք թէ՛ Դուն հոտոտքի վրայ կայնէ , կամ թէ Նկուր նստէ պատուանդանիս քովը , ձեր

խղճմտանքը ձեզ չը յանդիմաներ , ու չար խորհուրդներու դատաւոր չէք ըլլար :

Եղէկ կ'ըլլայ որ երկու թաղի ժողովքներուն ալ գտնուիս որչափ որ կարելի է , բայց հեռու թաղի ժողովքը յատկապէս քոյրերուն հոգողութեանը յանձնէ :

ՏՈՒԱՅ ՏՈՒՅ ԵՅՅԱԼՈՒԹԻՒՆ

Կ'առաջարկեմ որ եկեղեցւոյ անդամ քոյրերը հրաւիրես ընկերութիւն մը կազմելու յատուկ քրիստոնէական գործի համար : Եմէն անդամ իր փողոցին մէջ գտնուած ընտանիքներուն այցելութեան երթալով , և անոնց համար հոգալով , և ամէն կերպով ջանք ընէ որ անոնց հոգիներուն օգտակար ըլլայ : Թողկանոն ըլլայ անոնց որ օր մը չանցրնեն քրիստոսի և անմահ հոգինե-

բու համար գործ մը չը տեսած : Եղէկ կ'ըլլայ որ աս ընկերութեան անունը Հայեական ընկերութեան կոչէք : Երկու շաբաթը անգամ մը անդամները քու տունդ ժողվուին , և պատմեն իրարու տեսած գործերնին , իրար քաջալերեն և խրատեն ու մէկտեղ աղօթեն :

Եղէկ կ'ըլլայ որ քոյրերը երկերկու պտըտին . Ճիշդ ասանկ խրկեց Տէրը իր աշակերտները , չէ թէ միայն առաքեալները՝ այլ իր հասարակ աշակերտներն ալ : “ Ես բաներէն ետև Տէրը ուրիշ եօթանասուն ալ որոշեց . և զանոնք իր առջևէն երկու երկու խրկեց բոլոր քաջաքները ու տեղերը՝ ուր որ ինքը պիտի երթար : ”\*

Որպէս գի քեզի քաջալերութիւն ըլլայ աս գործը աւելի յառաջ տա-

նելու քեզի ըսեմ , Տաճկաստանի մէջ զանազան գիւղեր ու քաղաքներ աս գործը եղեր է : Են տեղերը քոյրեր կան՝ որ զոյգ զոյգ տուները այցելութեան կ'երթան , Սուրբ Գիրք կարդալու , խրատելու , և աղօթելու . աշակերտներ կ'ընդունին քովերնին՝ և անոնց համար հոգ կը տանին : Երբեմն երբեմն մօտի գիւղերը կ'երթան Քրիստոսի գործին համար աշխատելու : Ենոնց ուրախութիւնը խիստ շատ է Տէրոջմով :

Եմէն քրիստոնեայ քոյր իր պարտքը ճանչնալու է որ կարդալ սորվի՝ թէ որ իր աշքերը տկար չեն . թէ որ ուրիշ օգուտ մըն ալ չըլլայ՝ զոնէ ուրիշներուն օրինակ ըլլալու համար պէտք է : Իր խօսքը աւելի ազգու կ'ըլլայ երբոր ուրիշները կը համոզէ որ կարդալ սորվին : Ես երկիրները կնիկներ կան՝ որ վալթ-

սուն կամ եօթանասուն տարեկան ըլլալնէն ետքը՝ իրենք ակնոց գործածելով կարդալ սորված են։ Երբոր կը տեսնամ որ մէկը չուզեր նեղութիւն քաշել կարդալ սորվելու Աստուծոյ խօսքը կարդալու համար՝ անոր իր Փրկիչը սիրելուն շատ կասկած ունիմ. թէ որ բարձր պէտք ըլլայ աս բանին համար, կ'արծէ։ Խիստ մեծ գործ մը յանձնուած է քրիստոնեայ կնիկներուն, մանաւանդ՝ աս երկրին մէջ։ Ամէն մէկը լոյս մը ըլլալու է մուլթ տեղերու մէջ, և իր լոյսը՝ առաջ Սուրբ Գրքէն և Սուրբ Հոգիէն առնելու է։ Նորէն կը խնդրեմ թախանձանօք, որ եթէ դուն հովիւին ամուսինն ես՝ սորվեցնես եկեղեցւոյ քոյրերուն որ աս գործը քու հետդ ընեն։ Դուն կանչուած ես անոնց ուսուցիչ և առաջնորդ ըլլալու, և չէ թէ բոլոր գործը

քու վրադ առնելու. ատ անկարելի է։ Ի՞նչ պիտի խորհէիր զօրապետի մը վրայով, որ բոլոր պատերազմը ինքը կ'ընէ, և իր զինւորները ծոյլու անգործ կը թողու։ Միշտ Քրիստոսի օրինակը աչքերուդ առջերդիր աս բանին մէջը՝ ինչպէս նաև ուրիշ բաներու մէջ ալ, ու յաջողութիւնն և օրհնութիւն պիտի գրտնաս։

ՄԵՅՐԵԿԵՐ ԺՈՂՈՎՐԴԱՐՐ ԲՆՇՊԱԼՄ ՀԵՍՏԵԼՈՒ ԵՎ ԱՌԵՎԱՐԵԼՈՒ Լ

Շատ յայտնի է թէ աս երկրին մայրերը շատ կարօտ են իրենց պարտաւորութիւնները սորվելու դէպ 'ի իրենց զաւակները։ Զեզի՝ որ քիչ մը քրիստոնէական կը թութիւն առերեք՝ կը վերաբերի աս մեծ ու կարեոր գործը։ Աս նպատակաւ Մայրական բնիւրունիւններ և անոնց վերաբերեալ

Ժողովքները՝ մայրերուն մեծ օգ-  
նութիւն եղեր են ամէն երկրի մէջ։  
Ենշուշտ դուն ալ պիտի ուզես ա-  
սանկ ընկերութեանց օգուտը վա-  
յելել և ուրիշներուն ալ վայելել տալ։  
Ո՛չ մէկը անչափ իմաստուն ու յա-  
ջող է՝ որ ասանկ օգնութեանց կա-  
րօտ չըլայ։ Եւ հոս ձեզի համար  
կ'օրինակեմ խարբերդու կանանց և  
աղջկանց ձեմարանին Մայրական ըն-  
էւրոպեան կարգադրութիւնը, որ դուք  
ալ գիտնաք թէ ինչպէս սկսելու է  
գործը՝ որեմիցէ գիւղի կամ քաղաքի  
մէջ։ Մէկէնիմէկ սկսելու մի՛ վախ-  
նար։ Աս ընկերութեան անդամները  
որ ասկէ ելեր և ուրիշ տեղեր գացեր  
են՝ ու ասանկ ժողովքներ հաստա-  
տեր են՝ կ'ըսեն թէ ինաւ ուրիշ ժո-  
ղովք մը չկայ ասոր չափ յարգի և  
օգտակար սեպուած։ Դրգուէ Քրիս-  
տոսի գործին մէջ եղող քոյրերդ ա-

սանկ ընկերութիւն մը կազմելու, և  
անոնցմէ բղխած օրհնեալ պտուղ-  
ները շուտ մը պիտի տեսնաս։

ԽԵՐԵՐԴԻՌ ԵՎ ՀԱՅԵԱՅ ԵՎ ԽԵՐԵՐԵՒՆ  
ՄԵՅՐԵԿԵՆ ՀԱՎԱՐՊՈՒԹԻՒՆ ԳԵՆՈՒՆԵՐԸ

Աս ընկերութեան նպատակն է  
մայրերուն օգնել՝ որ Տէրոջը վախո-  
վը մեծցընեն իրենց զաւակները, ու  
հետեւ եալը ընկերութեան օրէնք-  
ներն են։—

1. “Աս ընկերութեան հոգաբար-  
ձուները պիտի ըլւան չորս խորհր-  
դականներ, մէկ գրագիր, և մէկ  
գանձապետ։

2. “Հոգաբարձուները տարին  
անգամ մը պիտի փոխուին . բայց  
թէ որ ընկերութեան անդամները  
ուզեն՝ արտօնութիւն կայ որ նորէն  
նոյն անձինքը ընտրեն։

3. “Ենդամները պիտի ժողովին երկու շաբաթը անդամ մը, և ամիսը անդամ մը, իրենց խելահաս զաւակները հետերնին բերելու են:

4. “Եմէն անդամ իր կարողութեանը չափ ստակ բերելու է ժողովքի օրերը, բայց թէ որ մէկը աղքատ է՝ կամ չուզեր՝ իրմէ պահանջելու չէ:

Ես ստակը յատկապէս պիտի գործածուի ընկերութեան մէջ գտնուած որբերուն և որբեարիներուն համար եթէ անոնք աղքատ ըլլան: Եւ ստակին ի՞նչ բանի տրուիլը՝ ընկերութեան անդամները պիտի տնօրինեն:

5. “Եմէն ժողովք աղօթքով պիտի սկսի, երգելով՝ Սուրբ Գրքէն կարճ մաս մը կարդարով, որպէս զի ժամանակ մնայ Սայր Որդեխնամ

ըսուած գրքէն քիչ մը կարդալու, նաև մայրերուն փորձառութիւնները լսելու՝ և անոնց խրատներ տալու: Յետոյ քանի մը կարճ աղօթքներ մատուցանելու է՝ իրենց՝ և իրենց զաւակներուն համար:

6. “Են օրերը որ զաւակներն ալ ներկայ կը գտնուին՝ ժողովքը յատկապէս անոնց համար ըլլալու է: Ենոնք Սուրբ Վրքէն և երգերէ սորվածնին թող գոց ըսեն, և ըսածներնուն վրայով հարցումներ լսելու է անոնց:

Տարին քանի մը անդամ չովիւն ալ հրաւիրուի՝ որ խրատ տայ անոնց, և աղօթէ անոնց համար:

7. “Եմէն մայր ինքզինքը պարտաւոր սեպելու է իր զաւակներուն փրկութեանը համար աղօթելու՝ թէ

առանձին և թէ անոնց հետ : Մանաւանդ Վիրակի օրերը բաւական ժամանակ տալու է անոնց հոգեսոր կրթութեանը համար . և ջանք ընելու է որ միշտ անոնց առջեր բարի օրինակ ցուցունէ ամէն բանի մէջ :

8. “Թէ որ անդամներէն մէկը որևիցէ պատճառաւ արգիլուած է դալէն՝ քոյրերը զանիկայ իրենց աղօթներուն մէջ յիշելու են :

‘Նաև ամէն անդամ ինքնինքը պարտաւոր պիտի ճանչնայ իր անդամ քոյրերուն հոգ տանիլ , և օգնել անոնց թէ տնական գործերու մէջ և թէ ուրիշ ինչեիցէ կերպով : Մէկզմէկ խրատելու՝ և հիւանդութեան ժամանակ իրարու օգնելու են :

9. “Թէ որ աս ընկերութեան անդամներէն մէկը ուրիշ տեղ ասանկ

ընկերութիւն մը հաստատելու ըլլայ՝ ան ընկերութեան հոգաբարձուները ինքզինքնին պարտաւոր սեպեն՝ տարին անգամ մը իրենց վեճակը յայտնել աս Մայր ընկերութեանը : ”

Քանի մը խրատներ ալ աւելցնեմ աս ժողովքները կատարելու կերպին վրայով : Քանի որ խորհրդական քոյրերը սորված չեն ժողովք ընել՝ աղէկ կ'ըլլայ որ երկու հատ մէկտեղ ընեն , մէկը առաջին մասը կատարելով՝ և միւսը վերջին մասը . Երկուքը քովէ քով նստելով՝ մէկզմէկու սիրտ կուտան : Ասանկները թող յիշեն թէ ամպիոնը ելած չեն քարոզելու՝ հապա՝ միայն ընտաներար և պարզօքէն պիտի խօսին իրենց պէս տկար և տգէտ կնիկներուն . Ինչպէս որ առաջ ըսի՝ ժո-

զովքը կառավարողը իր ունկնդիրներուն երեսը թող նայի խօսած ատենը որ ազդու ըլլայ, վայելուչ չէ գրքին մէջնայիլը իբրև թէ կը կարդայ:

Նայէ որ բաւական ժամանակ մնայ որ մայրերը իրենց փորձառութիւնները համառօտարար պատմեն: Թէ որ մէկը զաւակ մը ունի որ չի գիտեր ինչպէս կառավարելու է, կամ ինչևիցէ փորձութեան մը մէջ է աս բանին նկատմամբ՝ թող պատմէ քոյրերուն, և խրատ ու ազօթք ինդրէ: Ուրիշները թող պատմեն թէ ինչպէս կը կառավարեն իրենց տղաքը և խրատեն ու քաջալերեն գինքը: Ու յատուկ ազօթք մատուցուի աս մայրերուն և իրենց զաւակներուն համար:

Երբոր մայրերը իրենց զաւակները հետերնին կը բերեն՝ անշուշտ

հոգ տանելու են որ մաքուր ու վայելուչ հագուած ըլլան. և ամէն մէկը երգ մը կամ համար մը գոց ըրած ըլլայ: Ան օրը աւելի տղաքները խրատելու է քան թէ մայրերը՝ Սուրբ Գրքէն պարզ պատմութիւններ և հարցումներ ընելով. Կստուծոյ վրայով խօսելու է թէ ինչպէս կը պատուիրէ զաւակներուն որ իրենց ծնողացը հնագանդին, և իրարու հետ սիրով վարուին: Իրենց դասերը ազէկ սորվողներուն՝ “ապրի՛ս” ըսելու է որ աւելի սիրտ առնեն և յառաջերթան:

Քանի մը անուշ երգելով՝ յատուկ աղօթք մատուցանելու է անոնց համար՝ անանկ պարզ՝ որ պինտ պղտիկն ալ կարենայ հասկնալ թէ իրեն համար Կստուծոյ կը խօսին:

Կմառը շատ անուշ կ'ըլլայ որ աս ժողովքը խաղաղ պարտէզ մը ըլլայ,

և տղաքը ժողովքէն ետքը խաղան։  
Երբեմն ալ երեցը թող հրաւիրուի  
և զանոնք խրատէ, քանզի շատ աղ-  
դեցութիւն կ'ունենայ անոնց փա-  
փուկ սրտերուն վրայ։

ՏԵՍՈՅ ՔՊՐԱՎՉԱՆԵՐԸ ԵԿՇԳԵՍ ԸՆԵԼՈՒ 1:

Ամիսը անգամ մը քրիստոնեայ  
մայրերուն տղոցը հետ ժողուելէն՝ ի  
դատ՝ շաբաթական ժողովք մը ու-  
նեցիր, ամէն տղու և աղջկան հա-  
մար՝ որ զալու կը համոզուին։ Ա-  
մէնէն յարմար օրը՝ Հաբաթ օրն է  
աս ժողովքին համար։ Վանի մը  
Աւետարանական տղաք ընտրէ որ  
օդնեն քեզի՝ ժողովքի ատեն քու  
փոքր ժողովուրդդ հանդարտ և  
կարգով պահելով։ Եղէկ կըլայ որ  
անոնցմէ երկու հատը՝ մէկ շաբա-  
թը և երկուքը՝ միւս շաբաթը մէ-  
կը դռնապանութիւն ընէ, և միւսը

տղաքը նստեցնէ։ Աս գործը իրենց  
պատիւ պիտի սեպեն, և քու բարի  
գործիդ մէջ մասնակից ըլլարով՝  
մարդկութիւն պիտի ունենան։  
Առվիցուր ատոնց՝ որ միշտ ու ամէն  
տեղ բարի օրինակ ցուցունեն տղաք-  
ներուն առջեր, եթէ ոչ՝ մտիկ պի-  
տի չընեն անոնց, և ան իշխանու-  
թիւնը որ դուն անոնց տուիր՝ պա-  
րապ բան մը պիտի երևնայ անոնց  
աչքին առջեր։

Պէտք է որ աս ժողովքներուն  
կանուխ ներկայ գտնուիս, և զա-  
նոնք կառավարես քանի որ կը ժո-  
ղուին. սկսէ՝ մեծ մասին գիտցած  
երգերէն քանի մը երգեր երգելով,  
մինչև որ ուշ մնացողներն ալ գան,  
և խօսուած ժամանակ ներս գալով  
ձայն չընեն։

Մի կարծեր որ աս ժողովքներուն  
համար պատրաստութիւն պէտք չէ

քեղի՝ Ճիշտ ուրիշ ժողովքներու պէս  
ասոր ալ պէտք է, և ալ աւելի :  
Սուրբ Գրքէն յարմար պատմու-  
թիւն մը ընտրէ, և ընտանի ու  
պարզ ոճով մը պատմէ իրենց . շատ  
հարցումներ ըսէ, ան ճշմարտու-  
թիւններէն օգտակար դասեր հա-  
նելով : Ասանկով շատ բաներ կրնաս  
սորվեցնել անոնց՝ Աստուծոյ և ամէն  
տեսակ մեղքի վրայով : Ագամին և  
Եւային պատմութիւնը, պիտի սոր-  
վեցնէ անոնց՝ թէ անհնագանդու-  
թիւնը մեղք է, և թէ ինչպէս Աս-  
տուած կը պատժէ մեղաւորը : Հե-  
ղին և իր չար տղաքներուն և բարի  
Սամուելին պատմութիւնը, պիտի  
սորվեցնէ՝ թէ Աստուած ինչպէս  
վարձք կուտայ հնագանդին, և հա-  
տուցում կընէ անհնաղանդներուն  
չարութեանը : Դաւիթին և Գո-  
ղիաթին պատմութիւնը, պիտի սոր-

վեցնէ՝ թէ Աստուծոյ օգնութիւնը  
աւելի արժեքաւոր է, քանթէ աշ-  
խարհիս մէջ գտնուած բոլոր զօր-  
քերն ու հսկաները : Եղիային և իր  
ագռաւաներուն, որբեարիին և իր  
կուժին մէջ գտնուած եղին պատ-  
մութիւնը, պիտի սորվեցնէ՝ թէ  
Աստուած ինչպէս կը հոգայ իր ժո-  
ղովուրդը : Եղիսէին և զինքը ծաղ-  
րող տղաքներուն պատմութիւնը, կը  
սորվեցնէ՝ թէ ինչպէս կը պատժէ  
Աստուած զանոնք՝ որ կանարգեն իր  
ծեր ծառաները : Յովսէփին պատ-  
մութիւնը, կը սորվեցնէ՝ թէ Տէրոջը  
վախը մէղքէ ետ կը պահէ, և մեծ  
վարձք կը բերէ : Դանիէլին պատ-  
մութիւնը, կը սորվեցնէ՝ թէ աւելի  
Աստուծմէ վախնալու է՝ քան թէ  
առիւծներէ, և թէ անտարակոյս  
Աստուած պիտի օրհնէ արդարը և  
պատժէ չարը : Յիսուսի պատմու-

թիւնք, թէ ինչպէս Աստուծոյ Որդին տղայ մը եղաւ, և հնազանդեցաւ իր ծնողացը, և թէ ինչպէս չարչարուեցաւ ու մեռաւ խաչին վըրայ, պիտի սորվեցնէ անոնց սիրել զանիկայ որ զբրենք սիրեց և իր կեանքը տուաւ որպէս զի իրենք չը կորսուին : Հատ պատմութիւներ կան Հին Կտակարանին մէջ, Երրահամին՝ Խսահակին՝ Մովսէսին՝ Հռուութին՝ Եսթերին՝ Յորին վրայով, և Կոր Կտակարանին մէջ՝ Պօղոսին՝ Պետրոսին՝ Յովհաննէսին Տիմէթէոսին՝ և շատ ուրիշներու վրայով: Եղէկ կըլլայ նաև պատմել անոնց՝ քու տեսած և գիտցած տղաքներուդ վրայով . իրենց գիտցած բաներէն օրինակներ բերելով: Աս կերպով անցուր կէս ժամ կամ քիչ մըն ալ աւելի թէ որ չեն ձանձրանար: Ետքը՝ նոր երգ մը սորվեցուր՝ և կարճ

աղօթքով մը վերջացուր: Հետեւեալ ժողովքին՝ հինգ տասը րոպէ նախընթաց ժողովքին խօսքերէն հարցումներ ըրէ, որ տեսնաս թէ կը յիշե՞ն և 'ի գործ կը դնե՞ն: Յորդորէ տղաքը որ ուրիշները համոզեն աս ժողովքին գալու:

ԿՐԵԱՏՆԵՐԵՅ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՆ ՀԵՐԱԿԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՕԳՈՒՏԸ:

Հատ հարկաւոր է որ ամեն տեղ ուր որ Վրիստոսի համար աշխատող կայ՝ Կերակնօրեայ դպրոցներ հաստատուի: Ենշուշտ քարոզիչը պիտի կարգադրէ էրիկ մարդոց և պատանեաց դասերը . և քու գործդ պիտի ըլլայ կնիկներուն՝ աղջիկներուն և մանր տղայոց նայիլ: Թէ որ կարդալ գիտցող քրիստոնեայ քոյրեր կան ամէն մէկուն ութը տասը աշակերտներով դաս մը տուր: Յորդորէ զբրենք որ Մուրք Հոգին օգ-


նութիւնը խնդրեն : Աղէկէ որ դուն  
մանր տղաքը և աղջիկները զատ  
տեղ մը ժողվես, որչափ որ կրնաս,  
մինչև հարիւր հատ թող ըլլայ . ա-  
նոնց նոր բացուած փափուկ մտքե-  
րուն մէջ ճշմարտութեան սերմը  
ցանէ, պատուիրէ անոնցմէ մեծերուն  
որ քանի մը համար գոց սորվին  
Աւետարանէն՝ Սաղմոսէն կամ Առա-  
կաց զրքէն՝ ուր որ ընտրեսնէ, և ա-  
մէն սորված երգելնին ալ գոց թող  
ընեն : Ոմանք Սուրբ Գրոց խօսքերը  
գոց ընելը պարապ բան կը սեպեն,  
բայց անոնք որ պղտիկուց ասանկ  
ըրած են՝ կը խոստովանին թէ բոլոր  
իրենց կենացը մէջ օգուտը վայելած  
են :

Վիրակնօրեայ դպրոցը Տէրոջը  
պարտէզնէ, որուն մէջը ազնիւ սերմ  
ցանուածէ, և արդարութեան բոյսեր  
տնկուած ու ջրուած են, որոնցմէ

կրնայ ըլլալ որ շատ պտուղներ ժող-  
վուին ապառնի տարիներուն մէջ  
թէ որ աշխատողները հաւատարիմ  
ըլլան : “Ու անոնք իբր թէ խոտերու  
մէջ, ջուրի վտակներու քով եղող ու-  
ռիներու պէս պիտի բուժնին : ”\*

Սակ հոս Տէրոջը տունկերը կը  
պատրաստուին վերի փառաւորեալ  
պարտէզին համար : Ո՞վ չուզեր ա-  
սանկ փառաւորեալ գործի մը մէջ  
աշխատիլ . ո՞վ չի փափաքիր Տէրոջը  
պարտիզպաններէն մէկը ըլլալ : Ես  
արտօնութիւնը և պատիւր քուկդ  
է, և չէ թէ միայն քուկդ՝ այլ ամէն  
քրիստոնեայի որ կրնայ Սուրբ Գիրք  
կարդալ՝ և կը փափաքի Տէրոջը այ-  
գիին մէջը գործելու : Ի՞նչ կըսէ  
Տէրը թէ մեծերուն, թէ երիտա-  
սարդներուն, և թէ պղտիկներուն .  
“Եյօր այգիիս մէջ գործէ : ”

\* Խոյ . Բէ . 4 .



## ԳԼ. ԺԳ

ԵՍ ԳՈՐԾԻՆ ՈՒՐԵՄՈՒԹԻՒՆԵ ԵՒ  
ԱՐԴՅԱԿ

Թէ որ գուն, սիրելի աշակերտս՝  
կարող ըլւաս Պօղոս առաքեալին պէս  
ըսել, “Ինչ որ ինձի շահ էր, անիկայ  
Քրիստոսի համար վնաս սեպեցի։  
Եւ իրաւ բոլոր բաներն ալ վնաս կը  
սեպեմ իմ Տէրոջս Քրիստոս Յի-  
սուսի գերազանց գիտութեանը հա-  
մար։ որուն համար ամէն բանէն  
զբկուեցայ, և աղտեղութիւն կը սե-  
պեմ, որ Քրիստոսը շահիմ, Ու իր  
մէջը գտնուիմ։ չէ թէ իմարդարու-  
թիւնս ունենամ որ օրէնքէն է, հա-  
պա Քրիստոսի հաւատքովը եղած

արդարութիւնը՝ որ Աստուծմէ է  
հաւատքով։”\* Իրաւցնէ ուրախու-  
թիւն մը պիտի գտնաս որ օրէ օր  
պիտի աճի և առատանայ քու ան-  
ձիդ մէջ, մինչեւ որ յաւիտենական  
կենաց համար բղխող աղքիւր մը ըլ-  
լայ. ինչպէս որ գրուած է “Ե՞ն ջու-  
րը՝ որ ես անոր պիտի տամ, պիտի  
ըլւայ անոր ներսիդին ջուրի աղքիւր  
մը՝ որ յաւիտենական կենաց համար  
կը բղխէ։”† Պիտի զգաս թէ քու  
տունդ երկինքն է, ու ժառանգու-  
թիւնդ հոն պահուած է։ Պիտի  
ուրախանաս աս աշխարհիս վրայ՝  
Տէրոջդ ծառայելու պատիւր և ար-  
տօնութիւնը ունենալուդ համար։  
Պիտի ուրախանաս զիտնալով որ ա-  
մէն ատեն ինքը քու հետդ է։ Պիտի  
ուրախանաս անոր հետ ամէն օր  
քաղցր հաղորդակցութիւն ունե-

\* Փէտ. 7. 7-11.

† Յաէ. 7. 14.

նալովդ : Ենպատմելի ցնծութեամբ  
պիտի ուրախանաս ան փառաւորեալ  
յոյսովը՝ թէ օր մը զինքը պիտի  
տեսնաս դէմ առ դէմ, ու իր փառ-  
քին մասնակից պիտի ըլլաս : “Են  
որ դուք չտեսած՝ սիրեցիք, որ անի-  
կայ հիմա չէք տեսներ, բայց հաւա-  
տացիք, և ուրախ էք անպատմելի  
ու փառաւորեալ խնդութիւնով : ”\*  
Քանզի թէ որ Աստուծոյ զաւակն  
եա՝ անոր ժառանգ ես, և Քրիստո-  
սի ժառանգակից : “Թէ որ որդիք,  
ուրեմն ժառանգներ, Աստուծոյ ժա-  
ռանգներ՝ ու Քրիստոսի ժառան-  
գակիցներ . որ եթէ իր չարչարա-  
նացը կցորդ ըլլանք, իր փառացն ալ  
հաղորդ ըլլանք : ”† Որ կարող ըլլաս  
սիրելի՝ Պօղոսին պէս ըսել, “Ա ան  
զի ես այսպէս կը դատեմ՝ որ աս  
ժամանակիս չարչարանքները բան

մը չեն՝ գալու փառքին քովը, որ  
մեզի պիտի յայտնուի : ”\* Որով-  
հետև քու սէրդ վերի բաներուն վը-  
րայ հաստատուած է ու չէ թէ աս  
աշխարհիս վրայ՝ ինչեիցէ տառա-  
պանք՝ նեղութիւն՝ և փորձութիւն  
բնաւ չի պիտի կրնայ քեզ սաստիկ  
տրտմեցնել կամ բոլորովին ձգել :  
“Ուրեմն ո՞վ պիտի զատէ մեզ Քր-  
իստոսի սէրէն . տառապա՞նքը, կամ  
նեղութի՞ւնը, կամ հալածա՞նքը,  
կամ սո՞վը, կամ մերկութի՞ւնը, կամ  
վտա՞նքը, կամ սո՞ւրը, (ինչպէս որ  
գրուած է . Ամէն օր քեզի համար  
կը սպաննուինք, մորթուելու ոչխա-  
րի պէս կը սեպուինք : ) Հապա աս  
ամէն բաներուն մէջ՝ ալ աւելի յաղ-  
թող կ'ըլլանք անով՝ որ մեզ սիրեց :  
Խնչու որ ես հաստատ գիտեմ՝ թէ ո՛չ  
մահը, և ո՛չ կեանքը, ու ո՛չ հրեշ-

տակները, և ո՞չ իշխանութիւնները, ու ո՞չ ներկայ բաները, և ո՞չ գալու բաները, ու ո՞չ զօրութիւնները, և ո՞չ բարձրութիւնը, ու ո՞չ խորունկութիւնը, և ո՞չ մէկ ուրիշ արարած մը կրնայ մեզ զատել Աստուծոյ սէրէն, որ Քրիստոս Յիսուս մեր Տէրոջմով է:”\* Քու սիրտդ անսանկ կեղրոնի մը վրայ հաստատուած է որ չե կրնար շարժիլ, ուրեմն ամէն աշխարհային նեղութիւն քեզ միայն պիտի արտորցնէ քու երկնային ճամբորդութեանըդ մէջ: Միրելիներուդ կորուստը՝ ստացուածքիդ կորուստը՝ առողջութեանդ կորուստը՝ և ինչեիցէ փորձութիւն որ քու վրադ կը հասնի, քանի որ Քրիստոսի գործը յառաջ կը տանիս միայն քեզ աւելի կը մօտեցընէ քու ամենասիրելի բարեկամիդ՝ քու վրկ-

\* Հայոց բառ 35-39:

չեդ գիրկը, որ անոր մէջը հանգչիս: Աս կրթութիւնը միայն միջոց մը պիտի ըլլայ քեզ սրբելու, և անոր հետ յաւիտեանս բնակելու համար յարմարցնելու, ուր որ անմաքուր բան մը բնաւ չի մտնար: “Եւ հոն բնաւ անմաքութիւն մը պիտի չմտնէ, ո՞չ ալ պղծութիւն ու ստութիւն գործող մը:”\* Աս բանը գիտնալով՝ պիտի ուրախանաս մինչեւ անգամնեղութեան մէջ ինչպէս որ Պօղոս կ'ուրախանար. “Շատ է իմ համարձակութիւնս ձեր վրայ. շատ է իմ պարձանքս ձեզի համար. լեցուն եմ միսիթարութիւնով, աւելցած եմ ուրախութիւնով մեր ամէն նեղութիւններուն մէջ:”† “Ինչու որ մեր վայրկենական թեթև նեղութիւնը խիստ մեծ ու չափազանց փառքի յաւիտեանական առաւելութիւն կը

\* Յայոց բառ 27:

† Ք Արք Է 4:

գործէ մեզէ : Վասն զի մենք երեւցած բաներուն չենք նայիր, հապաչերեցածներուն . ինչու որ երեցած բաները ժամանակաւոր են, բայց չերեցածները՝ յաւիտենական : ”\*  
 Մեր Տէրը քու զբաղած գործիդ վրայով իր աշակերտներուն ըստ, ”Են որ կը հնձէ՝ վարձք կ'առնէ, ու յաւիտենական կենաց համար պլտուղ կը ժողվէ, որ սերմանողը ու հնձողը մէկտեղ՝ ուրախանան : ”  
 Յայտնի է թէ քու աշխատանքիդ համեմատ պիտի ըլլայ ուրախութիւնդ և վարձքդ : Ծաէ որ դուն կատարեալ քրիստոնեայ մըն ես, և ինքովինքդ բոլորովին աս գործին կը նուիրեաւ՝ անշուշտ անոր մէջը պիտի ուրախանաս . չես կրնար չուրախանալ :

Ես կենացս մէջ ալ վարձք պիտի

ընդունիս ան ուրախութեամբը՝ որ կը վայելես անմահ հոգւոց երկնից Ճամբուն մէջքու առաջնորդութեանբդ քալելը տեսնելով : Տեսնելով զանոնք որ սատանային ծառայութենէն կը դառնան Կստուծոյ ծառայութեանը, և արդարութեան պտուղներ յառաջ կը բերեն : Վմէն անգամ որ կը համոզես Կստուծոյ խօսքը կարդալու՝ և մէկուն իր չար բնութիւնը յաղթելու աշխատանքը կը տեսնես՝ քու սիրտդ անպատմելի ուրախութեամբ պիտի լեցուի . ուրախութիւնմը՝ որ բոլոր աշխարհքին վարձքերէն աւելի արժէքաւոր է : Վյապէս ուրախացաւ մեր օրհնեալ Փրկիչը երբոր եօթանասուն աշակերտները ետ դարձան իրենց աշխատանքը և յաջողութիւնը պատմելու . ”Ենորհակալ եմ քեզմէ ո՛վ չայր՝ Տէր երկնի ու երկրի, որ աս

բաները ծածուկ պահեցիր իմաստուններէն ու գիտուններէն, ու տղոց յայտնեցիր. այս՝ ո՞վ Հայր, ինչու որ քու առջիդ ասանկ հաճելի եղաւ: \* Քու ուրախութեանդ և վարձքիդ փոքր մասը չի պիտի ըլլայ Քրիստոսի առաջնորդած հոգիներէդ վայելած սէրդ: Անոնք քեզի պիտի նային իրեւ իրենց հոգեոր ծնողքը. անոնց խիստ սիրելի պիտի ըլլաս, գուցէ ամէն երկրաւոր բարեկամներէ աւելի: Քանզի Աստուծոյ ձեռքը միջոց եղար իրենց յաւիտենական մահէն փախչելու. և սորվեցուցիր անոնց թէ ինչպէս ապրելու են որ Ճշմարտապէս երջանիկ ըլլան թէ աս աշխարհիս և թէ յախտենականութեան մէջ: Առաքեալը իր Քրիստոսի առաջնորդածներուն կ'ըսէ, “ Քրիստոս Յիսուսով ես ձեզ

հնայ աւետարանովը: ”\* Եւ Թեսազոնիկեցւոց կ'ըսէ, “ Դուք էք մեր փառքը՝ և ուրախութիւնը: † Կը տեսնէք թէ ինչպէս Պօղոս յառաջ կը նայէր ան ժամանակին՝ երբ Տէրոջը առջեւը պիտի երենար իր աշխատութեան պտուղները հետը բերելով: Եւ այսպէս, սիրելիս, դուն ալ թէ որ հաւատարիմ ես քու գործիդ մէջ՝ ուրախանալու կարող պիտի ըլլաս նոյն յոյսովը, թէ որ մը Քրիստոսի ներկայութեան առջեւը պիտի երենաս ան անմահ հոգիներովը՝ որոնք դուն իրեն առաջնորդեր ես. և ուրախութեամբ պիտի ըսես “ Եհա՛ ես՝ ու ան զաւակները՝ որ Աստուծ ինձի տուաւ: ”‡

Աս ապառնի ուրախութենէն՝ իզատ՝ թէ որ միշտ փնտռես Աստուծոյ հաճոյ եղածը ու չէ թէ մար-

դոց, չնորհք պիտի գտնես անոնց առջևը՝ որոնց հետ կը բնակիս : Անոնց սրտերը պիտի շահիս քու անկեղծ սիրովդ և անոնց օգուտին համար աշխատելովդ : Անոնք փոխադարձաբար քեզ պիտի հոգան իրենցինեւ աւելի : “Դուն ալ փոխարէն պիտի յօժարիս քու ապրուստդ անոնցմէ ընդունիլ, անոնց առատութեանը և չքաւորութեանը մասնակից ըլլալով : “Սանկ ալ Տէրը հրաման տուաւ, որ աւետարանը քարոզողները աւետարանէն ապրին : ”\* “Դիտեմ չքաւորութիւն քաշելը . գիտեմ շատը ունենալը . ամէն բանի մէջ ամէն կերպով աղէկ սորվեր եմ թէ կշտանալը, թէ անօթենալը, թէ շատ ունենալը, և թէ պակսութիւն քաշելը : ”†

Բայց կը խնդրեմ որ հաւատար-

\* Ձ Ասք . թ . 14 :

† Փետ . դ . 12 :

մութեամբ կատարես քու պարտաւորութիւններդ, ամէն տեղ՝ և ամէն պարագայի տակ . և առաքեալին պէս ըսէ, “Դնչու որ մենք ընաւ շողոքորթութեան խօսքեր չը գործածեցինք, ինչպէս որ գիտէք, ո՛չ ալ ագահութեան պատճառանք . Սստուած վկայ է : Եւ մարդոցմէ փառք չը փնտուեցինք, ո՛չ ձեզմէ, ո՛չ ալ ուրիշներէն, թէև կրնայինք՝ իբրև Քրիստոսի առաքեալներ ծանրութիւն տալ . բայց մենք հեղեղանք ձեր մէջը, ինտոր որ դայեակ մը իր երախաները կը խնամէ : Նոյն պէս ալ մենք ձեր վրայ փափաք ունենալով կը յօժարէինք, ո՛չ միայն Սստուծոյ աւետարանը ձեզի տալ, հապա մեր անձերն ալ, ինչու որ դուք մեզի սիրելիներ եղաք : Քանզի կը յիշէք եղբայրներ՝ մեր աշխատութիւնը ու ջանքը, որ ձեզմէ մէ-

կու մը ծանրութիւն չտալու համար՝ զիշեր ու ցորեկ գործելով, ձեզի Աստուծոյ աւետարանը քարոզեցինք:”\*

Եւ հոս թոյլտուութիւն ըրէ որ ըսեմ-ինչ որ զանց ըսի վերոգրեալ խրատներուն մէջը: Թէ որ կ'ուզես Աստուծոյ օրհնութիւնը քու վրադիջնէ, և ամէն ճամբաներուդ մէջը յաջողութիւն գտնես, պատուէ քու Տէր Աստուածդ՝ իր քեզի տուածներէն գոնէ տասանորդը անոր ծառայութեանը նուիրելով: “Տէրոջը պատիւ ըրէ քու ստացուածքէդ, և քու բոլոր բերքերուդ երախայրիներէն. և քու շտեմարաններդ առատութեամբ պիտի լեցուին, ու հընձաններէդ նոր զինին դուրս պիտի թափի:”† Թէ որ Սուրբ Գիրքը կարդաս աս նպատակաւ՝ պիտի հա-

ա Թէ՞ . ք . 5-9 :

† Եսամք . գ . 9, 10 :

մոզուիս թէ տասանորդը հիմա ալ կը պահանջուի՝ ճիշդ ինչպէս որ հին տնտեսութեան ատենը: Վրիստոս կ'ըսէ, “Ահա՝ ասանկ ալ ձեր մէջէն ամէն մէկը՝ թէ որ իր բոլոր ստացուածքէն ետ չը կենայ, չը կրնար իմաշակերտոս ըլլալ:”\* Քու անձդ՝ քու ստացուածքդ՝ քուկդ չէ, “Քանզի գնով ծախու առնուեցաք:” Դուն միայն Աստուծոյ շնորհացը տնտեսը ըլլալու ես աս աշխարհիս մէջ: Պատանին քեզի խրատ ըլլայ, որնոր աս տնօրէնութիւնը չընդունելով՝ տրտմած գնաց: “Բայց ինչպէս որ ամէն բանով առատացած էք դուք, (հաւատքով՝ ու խօսքով՝ ու զիտութիւնով՝ և ամէն ջանքով՝ ու ձեզմէմեր վրայ եղած սիրով,) նայեցէք որ ատ շնորհքով ալ առատանաք:”† Եւ Աստուծոյ օրհնու-

\* Եսամք . գ . 33 :

† Ք Ասմ : ը . 7 :

թիւնը պիտի իջնայ ու հանգչի քու վրադ : “ Տողոր տասանորդները գանձատունը տարեք , որ իմ տանս մէջ պաշար ըլլայ . Եւ ասով զիս փորձեցէք , կ’ըսէ զօրաց Տէրը , թէ արդեօք ձեզի երկինքին պատու հանները չե՞մ բանար , ու ձեզի օրհնութիւն թափեր , այնպէս որ՝ անոր բաւական տեղ չըլլայ : ”\* Ձե՞ս կարծեր որ քու ուրախութիւնդ Տէրոջմով պիտի աւենայ , ամէն սիրոյ նշան անոր մատուցանելովզ , և ամէն որդիական հնագանդութեան գործով դէպի քու երկինաւոր ձայրդ . այո՛ , անտարակրյս պիտի աւելցնէ քու ուրախութիւնդ . և աս ուրախութիւնը պիտի ըլլայ քեզի սփոփանաց և զօրութեան աղքիւր մը , թէ քու անձիդ՝ և թէ ուրիշ շատերուն : Ալ յորդորեմ քեզ որ չէ

\* Մասութ . Է . 10 :

թէ միայն դուն ընեա աս բանը՝ այլ ուրիշներն ալ համոզես որ իրենց ստացուածքին տասանորդը տան Քրիստոսի գործին համար :

Երդ՝ սիրելիս , միայն կը մնայ ինծի քու աչքդ ուղղել ան խիստ մեծ վարձքին՝ որն որ Տէրը խոստացեր է քեզի , թէ որ մինչեւ ’ի մահ հաւատարիմ ըլլաս իր սուրբ ծառայութեանը մէջ : “ Մինչեւ ’ի մահ հաւատարիմ եղեր , ու քեզի կենաց պսակը պիտի տամ : ”\* Այսն զի Որդին մարդոյ իր ձօրը փառքովը պիտի գայ իր հրեշտակներուն հետ . և ան ատենը ամէն մէկուն իր գործքերուն համեմատ հատուցում պիտի ընէ : ”†

Մի՛ մոռնար կ’աղաչեմ , թէ Ես տուծոյ աչքը ամէն ատեն քու վրադ

\* Յայտ . Է . 10 :

\* Մասութ . Ժ . 27 :

է . ամէն անգամ որ մեղաւորի մը  
հետ կը խօսիս իր հոգիին վրայով ,  
ամէն անգամ որ մէկու մը Առւրբ  
Գիրք կը կարդաս , ամէն անգամ որ  
կը համոզես մէկը կարդալ սորվելու  
և կը սորվեցնես , ամէն անգամ որ  
իր թագաւորութեանը գալստեանը  
համար աղօթք կ'ընես՝ Խուր է բենէ ,  
Խուր է լէ : “ Դուն խորհրդով մեծ ,  
ու գործքով զօրաւոր ես , այնպէս  
որ ամէն մէկուն իր ճամբաներուն  
համեմատ հատուցում ընելու հա-  
մար՝ քու աչքերդ մարդոց որդինե-  
րուն բոլոր ճամբաներուն վրայ բաց  
է : ” \* Ամէն քու թափած արցունք-  
ներդ , ամէն անկեղծ փափաքներդ ,  
ամէն անձնուրացութիւններդ ու  
հնազանդութիւններդ՝ իր գըքին  
մէջ գրուած է , և վերջին օրը բոլորը  
պիտի յիշէ : “ Քանզի Աստուած

ամէն գործքը՝ ամէն ծածուկ բանե-  
րու հետ՝ թէ՛ թէ՛ բարին և թէ չարը՝  
դատաստանի պիտի բերէ : ” \*

Ուստի խիստ հարկաւոր է որ աս  
Ճշմարտութիւնները աչքիդ առջեր  
պահես , և ասանկ խորհրդածու-  
թիւն ընես , “ Ես օր մը իմ դատաւո-  
րիս առջեր պիտի կայնիմ , և ամէն  
խօսքիս՝ խորհուրդիս և զգացումիս ,  
անմահ հոգւոց վրայ ունեցած բոլոր  
ազգեցութեանս , բոլոր ժամանա-  
կիս՝ զօրութեանս՝ և տաղանդնե-  
րուս համար , ամէն ըրածներուս և  
զանցառութիւններուս համար , ի-  
րեն հաշիւ պիտի տամ : ”

Ես ալ Պետրոս առաքեալին պէս  
կը յորդորեմ քեզ , “ Թէ որ Հայր կը  
կոչէք անիկայ՝ որ առանց աչառու-  
թեան կը դատէ ամէն մէկուն գործ-  
քին համեմատ , ուրեմն ձեր պան-

զիստութեան ժամանակը վախով  
անցուցէք : ”\* Եւ թէ որ Ըստուծոյ  
շնորհքովը քու կարողութեանդ  
շափ կը ծառայես անոր՝ ուրախ ե-  
զի՞ր, սիրելի, ան ճոխ վարձքին յոյ-  
սովը՝ որ կ'սպասէ քեզի դալու աշ-  
խարհին մէջ, ամենևին քու արդա-  
րութեան գործքերուդ համար չի  
պիտի տրուի աս վարձքը՝ այլ բուն  
իր ձրի շնորհքովը և առատ ողոր-  
մութեամբը, իբրև սիրոյ նշան մը՝  
քու հնազանդութեանդ վթայ ունե-  
ցած իր հաճութիւնը :

Ե՞նչ ուրախութեամբ պիտի լսես  
ան սքանչելի խօսքերը, “Եկէք իմ  
չօրս օրհնածները, աշխարհի սկիզ-  
բէն ձեզի համար պատրաստուած  
թագաւորութիւնը ժառանգեցէք:”†  
Ո՞հ, իմ սիրելի աշակերտս, կ'ազա-  
չեմ որ չը զրկուիս աս վարձքէն .


\* ա Պիտ. ա. 17:

† Անոր. իշ. 34:

արթուն կեցիր, պատերազմէ, աշ-  
խատէ, ազօթէ, ամէն օր թէ՛ քու  
հոգիիդ համար՝ և թէ ուրիշներուն:  
Չես գիտեր թէ ո՛րչափ շուտ պիտի  
գայ Տէրը քեզ կանչելու: “Եհա՛ ես  
շուտով կուգամ, և իմ վարձքս իմ  
հետս է՝ ամէն մէկուն իր գործքին  
համեմատ հատուցանելու:”\* Ուս-  
տի անանկ ապրէ՝ և անանկ աշխա-  
տէ՝ որ վերջապէս ըսուի քեզի հա-  
մար, “Եպրիս՝ բարի՛ ու հաւատա-  
րիմ ծառայ, դուն որքիչ բանին մէջ  
հաւատարիմ եղար, քեզ շատ բանե-  
րու վթայ պիտի կեցընեմ. մտիր քու  
Տէրոջդ ուրախութեանը մէջ:”†

\* Յոյտ. իշ. 12:

† Անոր. իշ. 21.



## ԳԼ. ԺԴ

Ա.Ե.Ր. Տ.Ե.Բ.Ա.Ռ. Թ.Դ.Ի.Խ.

Վերջապէս, սիրելիս, բոլոր տուած խրատներուս վրայ կ'ուզեմ յորդորել քեզ որ ամեն աս բաներուն մէջ պակաս չգտնուիս, որոնք Աստուծոյ քեզմէ պահանջելը՝ Ոուրբ Գրոց շատ վկայութիւններով հաստատեր եմ: “Ի՞այց խօսքը կատարողներ եղեք, և չէ թէ միայն լսողներ՝ ինքինքնիդ խաբելով: Ինչու որ եթէ մէկը միայն լսող ըլլայ խօսքին՝ ու կատարող չըլլայ, անիկայնման է մարդու մը՝ որ հայելի մէջ

աչքերը տնկած իր բնական երեսը կը դիտէ. Ինչու որ դիտելով տեսաւ ինքինքը՝ ու անցաւ գնաց, և շուտ մը մոռցաւ թէ ինտոր մէկ մըն էր: Ի՞այց ան որ ազատութեան կատարեալ օրէնքին աչք տնկելով կը նայի, ու անոր մէջը կը կենայ, անիկայ խօսքը լսող ու մոռցող չըլլալով՝ հապա գործը կատարող, երանելի պիտի ըլլայ իր կատարելուն մէջ:”\* Ա.ախցիր, որ չըլլայ թէ քու վրադ Քրիստոսի դաւանութեան տերեները միայն գտնուի, և անէծքի տակ իյնաս թզենիին պէս, “Ու Ճամբուն վրայ թզենի մը տեսնելով՝ քովը գնաց, և անոր վրայ տերեներէն՝ ի զատ բան մը չը գտաւ. ու ըստ անոր. Ասկէ ետե քեզմէ պտուղ չըլլայ յաւիտեան. և իսկոյն թզենին չորցաւ:”†

\* Յոնք. առ. 22-25:

† Առքել. իպ. 19:

Վ'րսե՞ս, միթէ ես իմեղքօրս պահապա՞նն եմ. կը պատասխանեմ, այո, Աստուած աս գործըքեղմէ կը պահանջէ. Ետ մի՛ դառնար, մինչեւ անգամետ մի՛ նայիր : “Ոչ մէկը՝ որ ձեռքը մաճին վրայ կը դնէ ու ետին կը նայի, Աստուծոյ թագաւորութեանը յարմար է:”\* “Երդարը հաւատքէն պիտի ապրի. ու թէ որ մէկը ետ քաշուի, իմ հոգիս անոր չի հաճիր:”†

Եթէ կը խորհիս թէ՝ դուն չես կրնար աս խեղճութիւնը տանիլ, և աւելի շահաւոր՝ աշխարհային գործ մը կը փնտուես թէ քեզի և թէ քու ընկերիդ համար՝ որ աւելի հանգիստ ու պատուաւոր ըլլաք՝ նորէն կ'զգուշացնեմ քեզ, վախցի՛ր, աս սատանային թելադրութիւնն է: Դուն քու անձդ կ'ուզես ապրեցնել, սաւ-

\* Պատմ. թ. 62:

† ԽԲ. դ. 38:

կայն ասանկով՝ միայն կը կորսնցընես, մեր Տէրոջը ըսածին պէս: Դթա՛ անոնց վրայ, որոնց աշքերը ասանկ կուրցած է աս աշխարհիս իշխանին ձեռքովը: “Եղէկ էր անոնց՝ որ բնաւ արդարութեան ձամբան ձանչցած չըլլային, քան թէ ձանչնալով ետ դառնային ան սուրբ պատուիրանքէն՝ որ իրենց յանձնուեցաւ:”\* Ո՛հ, ո՛րչափ բան կը կորսնցնեն, “Ա ամն զի ինչ որ մէկ մարդ մը կը սերմանէ՝ նոյնը պիտի հնձէ:” Ի՞նչ պատասխան պիտի տան Տէրոջը վերջին օրը երբոր անոնցմէ հաշիւ ուզէ:

Միշտ յիշէ որ ագահը՝ աբծաթակը ամենավատ մարդոց կարգը դաստուած են Աստուծոյ խօսքին մէջ: Կը կարծես թէ երկինքին մէջ պիտի զղա՞ս մէկ անձնուրաց

\* Բ Պէտ. ք. 21:

գործիդ կամ փրկչիդ համար քաշած  
մէկ նեղութեանդ համար . ո՛չ, ա-  
մենեին . ուրախութեան աղբիւր մը  
պիտի ըլլայ քեզի յաւիտենական  
դարերուն մէջ :

“Ուստի ես միշտ աս բաները  
միտքերնիդ ձգելու վրայով զանցա-  
ռու պիտի չըլլամ, թէև գիտէք՝ և  
հաստատուած էք ներկայ ճշմար-  
տութեանս վրայ : Եւ իրաւունք կը  
սեպեմ, թէ քանի որ աս մարմինիս  
մէջն եմ” մտքերնիդ ձգելով ձեզ  
արթնցնեմ : ”\* “Եւ աս բանիս հա-  
մար բոլոր ջանքերնիդ դրած՝ ձեր  
հաւատքին վրայ առաքինութիւն  
աւելցուցէք, ու առաքինութեանը  
վրայ՝ գիտութիւն, և զիտութեանը  
վրայ՝ ժուժկալութիւն, և ժուժկա-  
լութեանը վրայ՝ համբերութիւն, և  
համբերութեանը վրայ՝ աստուած-

\* Բ Պէտք . ա . 5-8 , 12 , 13 .

պաշտութիւն, և աստուածպաշտու-  
թեանը վրայ՝ եղբայրսիրութիւն ,  
ու եղբայրսիրութեանը վրայ՝ սէր :  
Վ ասն զի քանի որ աս բաները ձեր  
վրայ կը գտնուին ու կ'ածին, պա-  
րապ ու անպտուղ չեն ըներ ձեզ մեր  
Տէր Յիսուս Քրիստոսը Ճանչնալուն  
մէջ : ”\* “Զգուշացէք ձեր անձերուն  
որ աշխատանքնիս չը կորսնցնենք ,  
հապա որ լման վարձք առնենք : ”†  
“Եմէն բան փորձեցէք, բարին ա-  
մուր բռնեցէք : Եմէն տեսակ գէշ  
բաներէն ետ կեցէք : Եւ ինքը խա-  
ղաղութեան Աստուածը ձեզ բոլո-  
րովինսուրբ ընէ, ու ձեր բոլոր հոգին  
և շունչը ու մարմինը անարատ պա-  
հուի մինչև մեր Տէր Յիսուս Քրիս-  
տոսի գալու ատենը : Հաւատարիմ  
է ան՝ որ ձեզ կանչեց , որ ինքը պի-  
տի կատարէ ալ : ”‡

\* Բ Պէտք . ա . 5-8 ,

† Բ Յուլ . 8 :

‡ ա Թէտք . է . 21-24 :

**Ուստի կ'աղաչեմ ձեղի ամէնուդ, սիրելիներս՝ որ աս գիրքը կը կարողաք՝**


“ Աստուծոյ ողորմութեամբը, որ ձեր մարմիները ընծայէք կենդանի զոհ մը՝ սուրբ, Աստուծոյ հաճելի, որ է ձեր բանաւոր պաշտօնը. և մի կերպարանիր աս աշխարհիս կերպարանքով, հապա ձեր մորին նորոգութեամբը նորոգուեցէք, որ քննէք թէ ինչ է Աստուծոյ կամբը, ան որ բարի ու հածելի և կատարեալ է : Քանզի ինծի տրուած Աստուծոյ նորհբոյլ աս կ'ըսեմ մեր մէջը եղողամէն մէկուն որ արժան եղածը մոածելէն աւելի բան չըտածէ, հապա զգաստ կենալ մոածէ, ինսոր որ Աստուած ամէն մէկուն բաժնեց հաւատքին չափը : Աշան զի ինչպէս որ մէկ մարմինի մէջ շատ անդամներ ունինք, ու ան ամէն անդամները մի և նոյն գործը չունին . ասանկ ալ մէնք շատուորներս մէկ մարմին մըն ենք քրիստոսով, և ամէն մէկերնիս իրարու անդամներ ենք : Աւստի մենք զանազան պարզեներ ունենալով ան շնորհքին համեմատ որ մեզի տրուած է, թէ որ մարդարեւութիւն հաւատքին չափովը գործածենք. թէ որ սպասաւորութիւն սպասաւորութեան մէջ ըլլանք . թէ ան որ կը սորվեցընէ սորվեցնելու ետևէ ըլլայ, թէ ան որ կը յորդորէ՝ յորդորեն ետեւէ, ան որ կը բաշխէ՝ պարզմութեամբ թող ընէ, ան որ վերակցու է ջանքով, ան որ կ'ողորմի յօժարութեամբ . սէրը առանց կեղծաւորութեան ըլլայ, չարէն զգուելով, բարիին յարելով . եղայրսիրութեան մէջ իրարու վրայ յօրովալից եղէք. պատուելու մէջ իրարմէ անցէք. ջանքի մէջ թուլամբոտ չըլլաք. հոգիով բորբոքեցէք. Տէրոջը ծառայեցէք. յուղով ուրախ եղէք, նեղութեան մէջ համբերեցէք. ստէպ ազթքի կեցէք, սլորբերուն պիտոյիցը հաղորդեցէք. հիւրա-


սիրութեան ետևէ եղէք. ձեզ հալածողները օրհնեցէք, օրհնեցէք ու մի անիծէք, ինդացողներուն հետ ինդացէք, և լացողներուն հետ լացէք . իրարու վրայ մի և նոյն խորհուրդը ունեցէք . ամբարտաւանութիւն մի ընէք, հապա խոնարհներուն հետ խոնարհեցէք. ինքզինիդի իմաստունի տեղ մի գնէք. չարութեան փոխարէն մէկուն չարութիւն մի հատուցանեք . ամէն մարդոց առջնը բարի բաներ ընկլու հոգ տարէք : Ուշափ որ կարելի է ձեղին ամէն մարդոց հետ խաղաղութիւն ունեցէք : Անքէլք՝ վրէժինդրութիւն մի ընէք ձեր անձերուն համար . հապա ըարկութեան տեղ տուէք . ինչու որ գրուած է . վրէժինդրութիւնը իմու է, ես պիտի հատուցանեմ” կ'ըսէ Տէրը : Աւստի թէ որ քու թշնամիդ անօթէցէք է՝ հաց տուր անոր, և թէ որ ծարաւ է՝ ջուր տուր անոր . բանզի աս ընելով՝ անոր զլսուն վրայ կրակի կայժեր պիտի դիմէս : Զարէն մի յաղթուիր, հապա ըարիով յաղթէ շարին : ”—Հասավ. մք :

“Բայց գուրք, սիրելիներ, անձերնիդ շնելով ձեր ամենասուրբ հաւատքին վրայ, և Սուրբ Հոգիով ազօթք ընելով, անձերնիդ Աստուծոյ սիրոյն մէջ պահեցէք մեր Տէր Յիսուս քրիստոսի ողորմութեանը սպասելով՝ յաւիտնական կենաց համար : Եւ խորութիւն ընելով՝ ունաց ողորմեցէք . և սմանք վախով աղատեցէք՝ կրաքին յափշտակելով զանոնք, ատելով մարմինէն աղտոտուած հանդերձն ալ : Եւ անոր՝ որ կարող է ձեզ անրիծ պահէլ, և իր փառքին առջեւ անարատ կայնեցընել յնծութիւնով, մեր Փրկչն՝ մի միայն Աստուծոյ մեր Տէր Յիսուս քրիստոսին ձեռքովը փառք ու մեծութիւն, զօրութիւն ու իշխանութիւն բոլոր դարերէն առաջ, և հիմա ու բոլոր դարերու մէջ : Ամէն Շ—Ց—Պ—20-25:

ՎԵՐ Զ







2259

83

904

Tr.



2194